




Ժ. ՏԱՐԻ

ԹԻԻ 7

ՅՈՒՆԻՍ 1973

A.R.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Կ. ՍԱՍՈՒՆԻ	Հովիգունե հորիզոն
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Օսմանեան կայսրութեան վերջին մուսնտիկիմ և ևս
Ա. ՀԱՅԿԱԶ	Որորեւն ու Թէոդորի ազանհները
Ա. ԳԱՐԱԼԷՔԵԱՆ	Մեր ծնունդը
» »	Նարնգագոյն մկրտութիւն
» »	Հաղորդութիւն առաջ
» »	Դու՛ն՝ այրութիւն կհնապայման
Բ. ԿՌԱՆԵԱՆ	Տպաւորութիւններ
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Անտառային
Ա. ՆՈՒՐԵԱՆ	Ուժի գիտակցութեան դիմաց...
Գ. ՊԸԼՏԵԱՆ	Հեռացում /մտեցում/ երկնում
Մ. ԷՍԼԻՆ	Սամուէլ Պէճէք անձին փնտռուէր (Հայացուց՝ Ք. Ճիւղաշեան)
Բ. Փ.	«Անկարելի կարելին» (Մ. Պաքանեան)
Լ. ՄԿՐՏՋԵԱՆ	Սարգիս Կիրակոսեանի թանաստեղծու- թիւնների առաջին գիրքը
✱	Ընդգծելի անդրադարձ մը
Վ. ՕՇԱԿԱՆ	Տիրական դէմք մը՝ հայ վէպին
Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	20րդ դարու հայ մեծագոյն վիպասանը
Գ. ՊԸԼՏԵԱՆ	Օշականի վէպը
✱	«Գ. Մելիտինեցի Գրական Մրցանակ»ի հրատարակած գործերը
✱	«Գ. Մելիտինեցի Գրական Մրցանակ»
✱	«Իսկ մնացեալ հինգ հարիւր տուարը»...

Բագրն

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ.Ռ. ՅԱՐԻ, ԲԻԻ 7

Յ Ո Ւ Լ Ի Ս 1 9 7 3

ՊԵՏՐՈՒՔ

4. ՍԱՍՈՒՆԻ

ՀՈՐԻԶՈՆԷ ՀՈՐԻԶՈՆ

Անսահման տարածություն: Մեկնումի վայրը՝ անյայտ. ժամանման
հանդերուհան՝ անորոշ:

Ահա ճամբաներ, որոնցմէ անցաւ 85 տարիներու ընթացքին: Եւ ստ-
կայն պահանջողները շատ են, եւ կոկորդա բռնած՝ կ'ուզեն, որ յուշերս դը-
րեմ... այսինքն՝ անցնիմ անհաշուելի հորիզոններէն: Աւելին չըսեմ, ընթեր-
ցողին կը թողում երեւակայութեան թռիչքը:

Ես արծիւ չեմ, որ սաւառնիմ թուզթի անշափելի տարածութեանց վը-
րայ: Այդ արծուային թռիչքն իսկ, տարածութիւններէն յուսահատ, ժայռի
մը վրայ պիտի հանդիսուրդ գտնէ լուսնայն:

Ես արեւի ճառագայթ չեմ: Այդ ճառագայթներն են, որ զերազոյն ու-
ժականութեամբ աշխարհի շրջանը կ'ընեն, լոյս սփռելով ամէն կողմ: Մական
չեմ կրնար չլինել, թէ խորխորատներ ու անդունդներ կան այս աշխարհին
մէջ, ուր արեւի ճառագայթն իսկ անզոր կ'ըլլայ թափանցելու:

Այս վերապահումին համար ներողութիւն կը խնդրեմ Արեւէն եւ իր
ճառագայթներէն...

160-2000

digitized by A.R.A.R. @

Այս անմեղ խոստովանութենէն ետք, երբեմն փոթորկոտ սիրտս կը խաղաղի եւ կը նմանի զէմքիս, որ միշտ խաղաղ պատկերով կը ներկայանայ չրջապահս:

Իսկ փոթորկոտ ծովը որտե՞ս տարածքին, ամէն տեսակի նայուածքնէ-րէն կը մնայ անթափանցելի: Ու այս երեւոյթը գոհունակութիւն կը պատճառէ ինծի, բայց ներքին զգոհանքը յաճախ կ'ալիւկոծէ հոգիս: Իրաւունք ունին բոլոր ծանօթներս ու անծանօթները սպասելու, որ անցած դարաւոր կեանքի մը չրջապահն ու արարքները թուղթին յանձնեմ:

Դարաւոր բառս կրնայ խնդուք պատճառել:

Ամէն չափազանցութիւն խնդուք կամ զայրոյթ կ'առաջացնէ:

Կ'ուզեմ հաղչտապ հաշտութիւն մը կնքել ընթերցողին եւ իմ միջեւ: Պարզ բացատրութիւն մը, եթէ ընթերցողը ըմբռնէ: Ի՞նչ է տարին. օր մը, թէ՛ դար մը: Այդ կախումն է կեանքի բովանդակութենէն եւ գործի տա-րածքէն: Մարդիկ անցան մեր աշխարհէն, որոնց մէկ օրը դար մը արժեց: Ու նաեւ մարդիկ եղան, որ ճիշդ դար մը ապրեցան, մէկ օրուան արժէքով: Ուրեմն խօսքը զործի մասին է:

Գործի չափ աշխատանք պատկերներ պարզող երեւոյթները քիչ են: Նոյնիսկ բնութեան այլազանութիւնը գերազանցող է մարդու գործունէնու-թեան խճողուած պատկերը:

Մարդ եւ գործ:

Շարժումն ու շնչող տիեզերք մը:

Ամէնօրեայ սովորական երեւոյթ մը:

Աչքի տեսարան:

Տեսնել ու անցնել: Եւ սակայն անհուն տիեզերք մը, երբեմն խաւար անզուղեկութեամբ, երբեմն լուսաւոր ու պայծառ՝ արեւի շողերուն նման: Ու դուն ինքզինքդ կը գտնես խաչմանու ճամբաներուն զիմաց: Քաջողական ուժի ցնցումէն ներաշխարհային ապրումներու խաւարէն եւ լոյսէն:

Հետեւ եւ բարձրաբերձ կատարէն դիտողը, հոգեկան ալիկոծ ալիքնե-րուն յանձնուած՝ մարդկային աշխարհը կը լափէ. մարդու ներքին էութեան կը թափանցէ, ու սիրտը կ'ալիւկոծի բազմազան երեւոյթներէն:

Այսօր, տարիքի այս բարձունքէն, որքան արեւի լոյսը, մարդուն լոյսը կը վայելեմ, նոյնքան խաւարը սիրտս կ'անդունդէ:

Փոթորկայոյզ այս ոգին ապրած կեանքի եւ տարիքի ծովածաւալ ապ-րումներէն կու գայ, թէ՛ ծնած օրէն կ'ալիւկոծէ: Ետ կ'երթամ շատ հին օրե-րուն: Տասնամեայ մանուկ մըն էի, երբ առաջին յաջող որսորդութիւնը ըրի, ու ինքզինքս զգացի մեծ որսորդներու շարքին:

«Որսորդը» անունով գրուածք մը ունիմ «Լեոնեւրու խորհուրդ»-ին մէջ: Հոն նկարագրած եմ մանուկի իմ փոթորկայոյզ հոգին: Ծոթանասուններեք տարի առաջ էր, երբ լեոնեւրը իմ հորիպունը կը գոցէին: Արեւելք ու արեւ-մուտք, հիւսիս ու հարաւ լեոնեւրով չրջապատուած՝ հազիւ քսան քիլոմէթր տարածութիւն միայն կը տեսնէի, ու հոգիս փոթորկած՝ կ'ալիւկոծէ թոխք առ-նել աշխարհէ աշխարհ, տիեզերքէ տիեզերք...»

Ու ի՞նչ ճակատագիր...

Սո անցայ աշխարհէ աշխարհ, անհաշիւ ու խորախորհուրդ: Շրջեցայ աշխարհէ աշխարհ, ճիշդ եօթնասուններեք տարիներ: Լեոնաբերդերէն ա-զատեցայ, ճիշդ այդ երազանքի տարին, երբ տասնամեայ որսորդն էի: Եղ-բայրներս զիս փոխադրեցին Մուշ, Մուրատ Մխիթարեան վարժարանը: Ու

այդ օրէն այսօր ճամբաներ բացուեցան իմ առջեւ, անհաշիւ ճամբաներ, երկրէ երկիր: Անհաշիւ դաշտերէ անցալ, լեռներ կտրեցի, ձորերու վրայէն ուսւառնեցալ, հաղարաւոր դիւղեր եւ հարիւրաւոր քաղաքներ մտալ ու ելալ: Ծածրայ, միշտ ճանապարհորդ, ճամբաներու, երկրորդներու, ծովերու քարտէս մը դարձնելով սիրտս ու հոգիս:

Դէ', քայլէ', կարդա', գրէ', խօսէ', գործէ' բազմաթեանց մէջ, հայ ժողովուրդի բախտին բախտակից, անոր ողորմ փոթորկած, քայլէ' անվերջ՝ տեղ հասնելու համար: Անվերջանալի ճամբաներ, երբ իմ հոգեկան աշխարհս Ծովասարէն կ'անցնէր Սիփան, անկէ Մասիս երկնակարկառ: Ու ես կը մնայի օտար ճամբաներուն վրայ մորմոքուն, բայց առլցուն ապագայի ծիածանւած հաւաքող:

— Յուշերդ գրէ'...

Թո՛ղ ընթերցողը պատասխանէ:

Ես միտն անցած ճամբաներու քարտէսը կը յանձնեմ ընթերցողին, գրողին, պատմագէտին, կուսակցական վարիչներուն:

Պատահական յուշ մը, դրուստ մը, դիտողութիւն մը, դնահատանք մը... բոլորն ալ թուղթէ արձանագրութիւն, ճիշդ դրան մը վրայ փակցուած թուղթի մը նման, ուր գրուած է.

— Տունը մարդ չկայ:

Այս արձանագրութիւնը կրնայ այցելուն յուսախար ընել: Ինչ կ'ուզէր մարդը կամ կինը տեսնել եւ օրուան մը զրոյցը ունենալ անոնց հետ: Օրը օրին կ'անցըր, որ ամէն օր մեր աչքերուն առջեւէն կը հոսի, դետերու եւ դետակներու վազքին նման, առանց որ մենք թափանցէինք անոր ներքին ալեկոծումներուն: Ու եթէ մենք փակ տան պատուհանէն ներս մտնէինք, լռութեան խորհուրդով ըմբռնէինք տան իրերու լեզուն, յաւիտենական խորհուրդով առլցուն, հոգեբանական եւ փիլիսոփայական մեծածաւալ վէպ մը պիտի պատկերանար մեր աչքերուն, յուզումը պիտի պատէր մեր հոգին, ու մենք լաւի եւ վատի իրողութիւններուն առջեւ յուզումնաւոր պիտի ըլլայինք:

Ու ես, այսօր, երբ ետ կը գտնամ ութ տասնամեակ տարիներու անցուղարձին, վէպի, բանաստեղծութեան եւ մասծումի չգրուած մեծ մատենադարան մը կը պատկերանայ աչքիս:

— Յուշերդ գրէ'...

Երանի անոնք քիչ ըլլային ու ես գրի առնէի հաճոյքով:

Գրեցի, ինչ որ անհրաժեշտ էր, ինչ որ անմիջական լուսարանութեան կը կարօտէր, վկայութիւններ տուի, սրտիս խօսող դրուագները վիպեցի եւ պատմութեան քննարկը վերածեցի: Անոնք աչքիս եւ մտքիս առջեւ գետակներ եւ աղբերակներ են: Իսկ սրտիս ալեկոծումները ովկիանոսները կը գերազանցեն:

— Յուշերդ գրէ', քեզի բան կ'ըսենք...

Այսինքն՝ ըսել կ'ուզեն, թէ ես սիրտ չունիմ, բան չեմ հասկնար, ...պարտազանց եմ:

Թո՛ղ ընթերցողը, կամ Աստուած ի՛նչ դատէ, կամ՝ աւելի շխտակը՝ Թո՛ղ Հայաստանի լեռներն ու դաշտերը, դետերն ու գետակները դատեն, ժայռէ՛րը թող դատեն զիս իրենց յաւիտենական լռութեամբ, երբ այնքան զրոյցներ ունեցած եմ անոնց հետ. երբեմն կուտամ, ու երբեմն ալ բարեկամ մացած եմ անոնց հետ, խօսած եւ պատասխաններ ստացած եմ անոնցմէ: Ո՛վ պիտի հաւատայ, որ ժայռերը, ծառերը, ջրվէժները եւ գոյնզգոյն ծաղիկները խօսած են ինծի հետ, ու ես անոնց մրմունջները հասկցած եմ...

Ո՞վ կը հաստատայ այս մենախօսութեան:

Եւ ինչո՞ւ հաւատայ, եթէ ինքն ալ հոգեկան մրրիկներ չունի, կեանքի ալեկոծ ծովերէն լող տալով չէ անցած: Եւ սակայն ամէն մէկը իր հոգեկան ճանապարհով պիտի ընթանայ. իր կեանքին եւ ապրումներուն հորիզոններէն անդին չի կրնար անցնիլ:

Այդպիսի անձեր կրնան ամփոփուիլ խօսքի կամ զրուածքի մը լայնքին... Լայնութիւնը կրնայ տարածուիլ մինչեւ իրենց հորիզոնը: Անդին անցնիլ երեւակայութեամբ՝ արժէքէ զուրկ է: Աստուծոյ հետ խօսողներ շատ եղած են: Պօսիլը կը մնայ խօսք, իսկ ապրումը կը ծնի կեանքի մակրիթացութիւն: Իմ կեանքի մակրիթացութիւնը անհաշիւ եղաւ, բարդ էլեւէջներով, տիրութեամբ ու անհաշիւ ուրախութեամբ, յաղթանակներով եւ պարտութեամբ:

Եղայ Հայ ժողովուրդին հետ անբաժան, Հայ մարդուն հետ բարեկամ, ընկեր, զեկալար, մեծ Հայրիկ ու նահապետ: Սակայն ականջս երբեմն լսեց բամբասանքներ ալ...

Առաւելութիւններն ու թերութիւնները զուգընթաց կ'ընթանան: Հորիզոնէ հորիզոն անցնողները այդ երկու դիմերն ալ կ'ունենան:

Ես անմասն եղած չեմ անոնցմէ:

Առաւելութիւնը արեւային ճառագայթում մըն է: Ամէն մարդ՝ եթէ աչք ունի՝ կը տեսնէ, եթէ հոգի ունի՝ իր ընդունած տիեզերական լոյսը տրեւի ճառագայթումը կը գերազանցէ: Գործիք մը չունինք, որպէսզի այդ ուժը փոխանցենք մարդուն: Մարդու միտքն ու հոգին իրենց մէջ կը պարունան կեն այդ գերազանց գործիքը: Այդ նուէրը մարդոցմէ մի՛ ակնկալէք, բնութեան աստուածային գանձն է, անձնական: Ամէն անհատ իր տարողութեամբ: Հանելուկին լուծումը չկայ:

Կայ անշուշտ կրթութիւնը, գիտութիւնը, ունեւորութիւնը, ֆերմ մթնոլորտը, ուր ծաղիկներ կը բուսնին: Բայց ծլարձակուած ճիւղն ու ծաղիկը ներախորհի պատկերը ունին: Մաղկաւէտ են, կամ... կունծած տերեւ մը: Դեղնած այդ տերեւը կը շորնայ եւ հող կը դառնայ: Զակատագիր...

Մտքի այս ճամբորդութիւնը վերջ չունի: Սրտի ալիքներու շառաչումները սահման չունին: Եւ ես անծայրածիր ճամբաներու այդ ալեկոծ ծովերէն անցայ, անհաշիւ ու անպարփակ:

— Յուշերդ գրէ՛:

Կարծես կոնակս կը մարակեն, սրտիս արիւնը կը քամեն, միտքս կը փոթորկեն:

Երէկն ու այսօրը գլխուս եւ սրտիս ծալքերուն մէջ առած՝ դունագեղ պատկերը կախուած է գէմս, երէկն ու այսօրը ներկայ են մէջս, ճիւղ ընդ շառութեանս հեքով: Սահման չունին:

Անսահմանը ուժաթափ կ'ընէ մարդը:

Այնքան ճամբաներ կտրող, անցնող մարդը դատապարտեցէ՛ք, որ իր յուշերը չի գրեր, երբ գործով եւ ականատեսի կուտակած իրողութիւններով հարուստ պանծարան մը ունի:

Դատապարտելէ առաջ՝ զիս լսեցէք: Հետո ճամբայ ելէք եւ գոնէ թուղթի վրայ նայիլով՝ մտքով հետս քալեցէք, ու պիտի տեսնէք, որ անզօր եմ այդքան ճամբաներ կտրելու, այդքան հատորներ գրի առնելու:

Հատորներ լոյս ընծայեցի, վկայութիւններ արձանագրեցի, մարդկային եւ ազգային բազում ապրումներ վիպեցի եւ պատմածքի վերածեցի,

բայց ատոմի հոգիիս հարկադրական պոթիկում մը հաշուեցէ՛ք, պատմութեան մէկ էջը լուսաբանող վիտյուիին մը համարեցէ՛ք: Ալեկոծ ներաշխարհը մը-նաց վաղուան...

Գործի ու կեանքի հարկադրանքով՝ միշտ շարժուն կեանքի պարտադրանքին տակ գտնուեցայ: Աշակերտական, ուսուցչական, յեղափոխական (Կոմիտէ, Կ. Կոմիտէ, Բիւրօ, գործիչ, խմբագիր) գործօն կեանքը անընդ-հատ իրարու յաջորդեցին եւ զիս նետեցին անվերջանալի ճամբաներուն վը-րայ: Ամէնօրեայ մտահոգութիւններ եւ զանոնք կատարող անընդհատ ճիգ: Ճիգ... ո՛րքան լարուած, նո՛յնքան յոգնեցուցիչ: Երբեմն արդիւնա-ւոր, երբեմն ապարդիւն: Ու ահա հոգեկան փոթորկում, ցնցող ու մաշող:

Կը մնայ երկաթիտայ կամքը այդ բոլորին տիրանալու...

Կամքը դարձնուած կեանքի ճամբաներուն վրայ:

Կայ հոգեկան փոթորկանքով երեւակայական ճամբորդութիւնը, ուր երբեմն բանաստեղծական բարձունք մը կը կառուցուի: Բայց երեւակայական ճամբորդութիւններու մեծ մասը կը կորսուի իրական կեանքի քառսին մէջ, մնալով անգոյն ու անկերպարան:

Իրական կեանքի ճամբորդութիւնն է, որ ջրվէժներու թափով կը հոսի անյայտ ուղիներով, ու կը դառնայ փոթորկալի ծով մը: Մտածո՛ղ, հիմա դժա՛ւեմ հաշուի անցուր ալիքներուն փոթորկալի շառաշները:

Հովը կ'անցնի, տերեւները վար կ'իյնան պարային երկրամենքով: Կեանքի թռչուններ հ'անցնի խնդումներով, ամէն կողմ տարածելով անորոշ ձայներ, որոնք հովերուն հետ կորուստի կ'երթան: Սակայն այս անցքի ըն-թացքին, կան ուրախութիւններ ու տառապանքներ, զեղեցիկ գործեր ու ու-ճիրներ, որոնք արձանացում շունենալով, փոշիներու եւ գերեզմաններու մէջ կը կորսուին:

Ահա՛ կեանքի ճամբաներ, երբեմն ծաղկաւէտ ու անմոռանալի, երբեմն փոշի ու տերեւաթափ, ուր խոր ապրում չունեցող բազմութիւնները հող ու խիճ են, առանց ըմբռնումի: Հողը կայ, իրենք ալ կան: Փոշին եւ հովը կ'անց-նին, իրենք ալ կ'անցնին ամէնօրեայ սովորական անցքերէն:

Սովորական եւ անսովոր կեանք...

Ամէնօրեայ երեւոյթ, տեսանելի, բայց ըստ էութեան՝ թանձր քողի տակ ծածկուած ներաշխարհ մը կայ, միշտ ալեկոծ: Ոմանց գաւաթ մը ջու-րին մէջ, ոմանց ովկիանոսի տարածութեամբ:

Ո՞վ՝ որո՞ւ հողը պիտի շալկէ:

Ամէն մէկը իր ճանապարհով, իր հոգեկան եւ մարմնական տարողու-թեամբ:

Այս մտածումներն ու մենախօսութիւնները կրնան բան մը բսել ընթեր-ցողին, որ, իր կարգին, իր հողի փոթորկումի ճամբաները պիտի անցնի, հոգեկան ապրումներով: Ու պիտի բլլան ընթերցողներ, սրտնք մէկ էջը թե-թելով՝ մէկ կողմ պիտի նետեն գրուածքը... իրրեւ զառանցանք կամ... ան-հետաքրքրական:

Զառանցողը, այժմ, Մասիսի գագաթին ծուարած է: Ութուներկնդ-ամեայ բարձունք մը:

Շատ յաճախ անցած եմ Մասիսի բարձունքներէն, ու վարէն նայած եմ գագաթին ու անցած: Կեանքի ու մահուան ապրումի բարձունքներ կային

մեր ճանապարհներուն վրայ: Ու Մասիսի գագաթը ծերունազարդ հայրերի
մը պէս վերէն կը նայէր ու կը մըմնջէր:

— Հայր կայ ու պիտի մնայ, իմ ճերմակ օրհնութիւնս ձեր վրայ...

Այդ օրերուն կեանքի փոթորկուն ճանապարհներուն վրայ էի: Վեր
նայելու ժամանակ չկար: Այժմ, տարիքիս բերումով, վերին հորիզոնին
վրայ եմ, Մասիսի գագաթին ու իմ ճերմակ մազերու ալիքներով, Մասիսի
ճերմակութեան հետ ձուլուած եմ: Ու այդ վերին հորիզոնէն կը նայիմ հայ
աշխարհին եւ ամբողջ մարդկութեան, կը տեսնեմ ամբողջ տարածքը Հայաս-
տանին, իմ անցած ճանապարհներուն: Սիրտս կ'ալիկոծի անցած օրերու ջր-
վիժումներէն, բայց միաժամ հանդարտօրէն ձիւնապատ Մասիսի գագաթէն կը
նայի աշխարհին՝ սառն, գէպի աշխարհի ամէնօրեայ անցուղարձը:

Բայց Հայաստանն ու հայ ժողովուրդը կը մնան այդ գագաթին թա-
փանցող ու տեսնուն ակնարկիս տակ... Ու այդ հոգեկան աշխարհը ներա-
խարհիս մէջ կը մնայ իր բարդ կառոյցով: Հայ ժողովուրդը կը թողանցէ
հայկացիս ճամբաներէն: Եւ ի՞նչ տողանցում, գաղթ, կոտորած, ինքնա-
պաշտպանութիւն... շարժէ՛ որքան կրնաս...

Պարսկականութեան զիսակցութիւնը արթուն կը մնայ հոգիիս ծալքե-
րուն մէջ: Ու ձիւնապատ Մասիսը, թէեւ ծերունազարդի սառն երեւոյթը ու-
նի, բայց խորունկ խորհուրդը իր բարձունքին ծիծառնուած կը մնայ:

Այդ հորիզոնական խաղաղութեան մէջ, հանդարտօրէն եւ լաւատեսու-
թեամբ կը նայիմ հայոց աշխարհին: Ու վարձանալին այն է, որ կեանքի լաւ
ու տխուր փորձանքներէն անցնելէ յետոյ երջանիկ կը զգամ ինքզինքս: Եր-
ջանիկ ա՛յ թէ անոր համար, որ այսօր դեռ կ'ապրիմ, այլ՝ երջանիկ անցեալ
երկար տարիներու սիրան ու հոգին լեցնող մարդկային եւ ազգային ուրա-
խացնող արարքներով: Արարքներ ա՛յ թէ իրենց մեծութեամբ ու փառաբա-
նութիւններով, այլ՝ իրենց խորունկ ու մարդկային խորհուրդով:

Ճամբորդի հակառակական անակնկալներով պատահեցաւ, որ դեռ
մը եղբրքին լքուած վիրաւոր որբ մը ազատեմ, որ հոգիս լեցուց երջանկու-
թեամբ, աւելի՛, քան երբ Հայաստանի խորհրդարանի անգամ կ'ընտրուէի,
կամ նահանգապետ կը նշանակուէի: Շիրակի աշխարհին: Կրնայ ընթերցողը
իմիցայ այս հաստատումիս վրայ, բայց այս որբի ազատումը հայ կեանքի
խորհուրդը ունի իր մէջ: Այս որբը իր մեծ մօր, վիրաւոր մայրիկին փակած
տղեկն էր, որ լքուած կը մնային Ալաշկերտի ճամբաներուն վրայ: Ու ես
բանակ մը կեցուցի, վիրաւոր մայրիկն ու որբը ազատելու համար: Ահա յի-
սունեւութիւն տարիներէ ետք, հոգիիս խորքին մէջ այդ ապրումը աւելի մնա-
ցած է, քան ճակատամարտէ մը յաղթական դուրս գալու հպարտանքը:

Ո՛վ կրցած է կշիռքի առնել մարդկային սիրտի ալիքները...

Ձիւնապարդ Մասիսի գագաթին, սիրտս ջերմութեամբ առլցուն, չե՛մ
զգար Մասիսի սուռնութիւնը, չե՛մ տեսներ մարդոց անտարբերութիւնները:
Վստահ եմ, որ ջերմ սիրտեր կան հայկացիս դիմաց...

Ձիւնապատ Մասիսէն վերադառնալ մեր գիւղը: Տասնամեայ որսորդն
եմ, արկածներով բեռնաւոր: Բայց այս լեռնակոյտներուն մէջ փակուած՝ հո-
րիզոնը նեղ է: Դռնփակ էութիւնս՝ փոթորկայոյց: Լեռներէն անդին տարած-
ւած աշխարհի երազանքն ունիմ: Գիւղական դպրոցէն դուրս, անհուն տխրու-

Թիւն մը զիս կ'առնէ իր ծանրութեան տակ։ Ու ես կը վառիմ անորոշ խո-
կումներով։ Մեր տնեցիները հեռուէն ու մօտէն կը հետեւին տան ծուռին,
միշտ սպասելով ծանր շարանճիութեան մը, աներեւակայելի արարքի մը։

Եւ սակայն պարապ պարտողը միշտ կը շարժի ու ոչ ոք անոր մտքի ա-
լիկոծումները կը նշմարէ։

Ու պատահեցաւ երկրաշարժ մը։

Մարդոց, կենդանիներու եւ բնութեան պատահարները շատ են, ու
յանկարծուաւ, երկրաշարժի նման։ Այդպէս ալ պատահեցաւ ինծի հետ։

...Ամառնային երեկոյ մը, մեր տան մեծն ու պոռթկը հաւաքուած են
լայն սրահին մէջ, հօրս անկողինին շուրջ։ Զարմանքով կը դիտեմ բոլորին
դէմքերը։ Տխուր են եւ դիտահալ։ Մայրս հօրս բարձին քովն է։ Արցունք կայ
աչքերուն։ Մեծ եղբայրներս՝ դիտահալ։ Հարսերը՝ ոտքի, լուռ ու ձեռքերը
գոտիններուն մէջ, արձանի պէս։ Կը մօտենամ, ասոր-անոր կը նայիմ, աչքերս
կը պլպլայն՝ բան մը հասկնալու համար։ Բայց միտն հօրս հիւանդ պառկած
ըլլալու իրողութիւնը կը տեսնեմ։ Ես տունը ոտք կը կոխէի՝ միայն քնանալու
համար։ Ու ծուռին ոչ ոք ըսած էր, թէ հայրդ հիւանդ է։

Անխաբհն ամբողջ փոխուած կ'երեւի աչքիս։ Ինքնամտածումն ու յու-
զումը կը ջլատեն հոգիս։ Ուրեմն աշխարհը կրնայ յանկարծ փոխուիլ։ Կ'եր-
թամ մօրս քովիկը, առանց ուշադրութեան առնելու շրջապատը։ Ամէն քան
հարցական է ինծի համար։

Մահական լուրթիւնը կը փոթորկէ հոգիս։ Օր մը օրանց մեր տունը
լուռ ու տխուր տեսած չէի։ Իմ փորձանքոտ արարքներն էին, որ իրարաւե-
ցում կ'առաջացնէին։ Իսկ այժմ գերեզմանային լուրթիւն մը կայ շուրջս։ Ա-
ռաստաղի ծանրութիւնը սարսուռ մը կը արածէ հոգիիս մէջ։ Կարծես հի-
ւանդ հօրս շունչին առաստաղը կը շարժի եւ փուլ պիտի գայ մեր վրայ։

Մտածումիս թելը կտրեցաւ։

Հայրս դէմքը դարձուցած է իմ կողմս, աչքերը կկոցուած։

— Անեա՛, լսէ՛ եւ ըսէ՛ տղաներու... իմ թողած հարստութեան կէսը
կարոյի բաժինն է... այս է կտակս... Թող ուսում առնէ, երկրէ երկիր եր-
թայ, ուժը շատ է այս ծուռին... Ասկէ ետք այլեւս ծուռ մի՛ ըսէք աղուս...
Աչքերը դոցեց ու հանդարտեցաւ բարձին վրայ։ Եղբայրներս ու հարս-
ները հետաքրքրութեամբ ինծի կը նայէին։ Ուրախութիւն կար անոնց հայ-
եացքին մէջ...

Մայրս գուրգուրանքով մաղբաւ կը շոյէր։ Արցունքները հեղեղած էին
անոր դէմքը։

Այդ գիշեր հայրս մեռաւ...

Մեռելին ի՞նչ է, չէի բժշկուել։ Ծամբորդութեան պէս բան մը կը թը-
ւէր։ Երբեք առիթը չէի ունեցած թաղման մը դառնելու։ Աղաւնիներն ու
ճնճղուկները կը հետապնդէի։ Արդէն կաքաւի նոր որսորդն էի։ Ծառեր եւ
պտուղներ կային շրջապատիս մէջ։ Զմեռն ու զարուհը իրարու կը յարկդէին
իրենց նորութիւններով։ Ծուռներու կոխը կար. ու հարսներու եւ աղջիկներու
անցքը կար դէպի Վերին աղբիւր։ Դարով նշան խփելու մղումը միշտ կը մնար
մէջս։ Ու շատ յաճախ քարը մարդու մը կամ կնկայ մը դուրիին կու գար։ Ընչ
մը կը լսէի. քայլերս կ'ուղղուէին դէպի ծառաստան, թաքուն մնալու հա-
մար։ Այս իրար անցած կեանքիս մէջ ինչպէ՞ս գիտնայի, թէ մահը ինչ է։ Ինչ-
պէ՞ս բժշկուելի, թէ հայրս հոգին տակ պիտի առնեն։ Այս թաղումին ներկայ
էի։ Նոր բժշկանքի մահուան գաղտնիքը։ Հոգին գաղտնիքը։

Նրկրաշարժէն աշխարհը փոխուած է աշքիս առջեւ:

Սուսն ու տխրութիւնը համակած են մեր առնն ու դիւղը: Բայց զարմանքի, ներքին ուրախութեան, հրաշքի համազօր հայեացքներ ուղղուած են ինծի: Ինչո՞ւ, շեմ դիտեր, աշքիս մէջ ալ լեռնակուտակ ծանրութիւն մը նստած էր:

Մայրս, լացին հետ խորհրդաւոր կէս ժպիտ մը դէմքին՝ միշտ մազերս կը շոյէ: Եղբայրներս ճաշի նստած պահուն զիս սեղան կը հրաւիրեն:

— Ծաշի նստէ՛ մեղի հետ, վաղը չէ միւս օր ճամբորդ ես դէպի Մուշ: Դպրոց պիտի երթաս, այդպէս կտակեց հայրիկը:

Մեծ եղբայրս է խօսողը. արդէն չորս-հինգ զաւակներու հայր:

— ...Դուն մեր հօր տեղը պիտի բռնես, մենք վստահ ենք, որ մեր հայրը չի սխալիր:

Մայրս մազերս կը շոյէ եւ լացը աչքերուն մէջ՝ կը մրմնջէ.

— Դուք բոլորդ իմ աշքիս լոյսն էք, բայց այս տղան ալլելու իր հօրը տեղն է սրտիս մէջ: Կարծես տառ պապը այդպէս ըսաւ ինծի, անձայն, ու մեռաւ:

Ես ճամբայ պիտի ելլէի երկու օրէն: Լեռներու փակած դուռները պիտի բացուէին ու ես պիտի անցնէի հորիզոնէ հորիզոն:

Կ. ՍԱՍՈՒՆԻ



Մ. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՄՈՒՆԵՏԻԿԻՆ ՀԵՏ

I

Առաւօտու՞ մարդիկ քնատ,
Երբ քաղաքի դանդաղաշարժ կռպերուն
բիծերն հատ-հատ մաքրելու
եւ լուսաջինջ փետուրներու շղարշներով կարգարելու
միօրինակ աշխատանքին համար դարձեալ արթնցան՝
Ծեր արեւուն արնոտած շրթներն ի վար ծորող ոսկի
Նարնջաքոյր եթերին ընդարձակուող պատարագը աղարտող
Քաղաքակիրթ ծովներուն, ծուռ թաղերէն այցելու խենէշ հոտին,
Օրաթերթի բաժնետոմսի, սակարանի սինականերուն վերիվայրում քմայքներուն,
Գուշակութիւն լոկ մնացող հորոսքոփի ամէնօրեայ սուտ հաշիշին հայհոյելով՝
Աշխարհ անցած էր իրար. կարծես, կարծես հրաշք մը մեծ եղած ըլլար...

Մայթին վրայ,
Սեւ ու թզուկ մունետիկ մը կը պոռպոռ անդադար.
— Բնակիչներ անդորրութեան քաղաքի,
Լաւ ունկ տուէք խօսքերուս, սուլթանը մեր արդարասէր
Երեք չքնաղ փերիներու պէտք ունի:
Առաջինը՝ կանանոցի ելեմուտքի բաժնին համար,
Երկրորդն՝ անոր գիշերային յայտագիրը պատրաստելու,
Իսկ երրորդը, օ՛, բախտաւոր այդ երրորդը,
Ժամերը փոքր՝ իր անսահման շնորհքներուն զաղտնիքներով,
Ժամերը սառն՝ իր սեռային պսպղագոյն, հուր գետերուն խոյանքներով
Արեւային պատարագի վերածելու:

— Հէ՛յ, փերիներ արեւելեան,
Ուրբաթ կէսօր, էպէնէն ետք շտապեցէք ապարանքը մեր սուլթանին
Ու պալատի մայր դարպասէն խոնարհութեամբ մտէք դուք ներս,
Հողշողագոյն սեռագրգիւ բոյրերով գէպի սուլթան կամրջելով,
Հնչեցուցէք փողերը ձեր հրաձայն ցիստերուն վարդ, կուրծքերուն բարդ:
Երգեցէք նուրբ՝

«Փառք ի բարձունս մեր արքային արեւաբառ,
 փառք ի բարձունս մեր արքային արեւափառ,
 փառք ի բարձունս մեր արքային յաւերժավառ...»
 Ներկան ծանօթ է ձեպի: Դուք՝ ապագան կը սերտէք վաղն անպայման
 Խոհանոցի, բաղնիքներու, միջանցքներու մնացորդը երբ կ'ըլլաք,
 Այս բոլորին խոնարհումէն յարախոհ...
 Դուք՝ ընտրեալ ըլլալու թեկնածուներ էք այսօր.
 Արդ, ձե՛կ տեսնեմ, թեկնածուներ բախտաւոր,
 երգեցէք բախտը անոր,
 ձեր շրթներով մեղրածոր՝
 «Փառք ի բարձունս մեր արքային արեւաբառ,
 փառք ի բարձունս մեր արքային արեւափառ,
 փառք ի բարձունս մեր արքային յաւերժավառ»:
 Միշտ անսպառ, լոյսի, յոյսի, կեանքի ամբար մեր սուլթանին,
 Փառք երկրաւոր, ո՛չ, երկնաւոր արեւապարմ, արեւաթագ մեր սուլթանին,
 Փառք ի բարձունս արեւները թաղել տուող դազադազործ,
 Բայց մաքրաւէ՛ր մեր սուլթանին...»:

II

Մաշին վրայ ո՛չ հտպիտ կար, ո՛չ մունետիկ, ոչ ալ մարդ.
 Փողոցն այս լայն առաւօտեան պայծառութեամբ պատանքուած,
 Անբնակիչ ձանձրոյթն իր տապ՝ խաւար-խաւար կը հեւար...

Ստուեր մը լոկ մարդկային իբր տեքոր այս խաղին:

Եւ մարդկային ստուերներէ խտանալով կազմուած ստուերն այս կույ
 Մաշին վրայ՝ աւարտելու սահմանուած ծխախոտի ծովսին նման,
 Ստուերը այս կեանքէն մասունք, կեանքի խաղի հին բնագրին
 Ներկայացման նորագոյն միակ, միա՛յլ հանդիսատես բացական...

Խաւարին մէջ՝

Փողոցն ամբողջ դատարկ թատրոն մը ինչպէս
 Եւ թատրոնին մէջ այս լուտ, անկրկնելի անկումներու սադրունական
 Թատերաբեմ ստուերն այս մութ կը մրմռար թափառումը պատմութեան.
 «Ես դերասանը միակ,
 ես բեմադրիչը միակ,
 ես մնացորդը վերջին,
 ես ձանձրոյթի շփացած յոյսը վերջին...»:

— Չգէ՛, ստուեր սուլթանն իր խոր
 Մրափին մէջ, իր արինէ դամբանին մէջ,
 Դիտէ՛ չորս կողմ, նոյնիսկ քարի պատանիին աչքերուն մէջ ծիածանուող,
 Աչքերուն մէջ յարածադկող հրավճիտ խոստումներու ձայներն անվերջ.
 Չհաւատաս դուն ոչ ոքի, ահաւաթիկ կեանքն իմ արժած, կեանքի արժէք՝

Անկումներով սարսափելի լույս ձեռք բերուած խրատը ես,
որմէ բացի ունիմ ոչինչ.
Ամէն մէկ անձ յովազ մըն է կեանքին նման, զաղտազողն
կամ ժպտաղէմ յովազ մըն է բազմադիմակ,
Չհաւատաս, իմ բարեկամ, մի՛ հաւատար նոյնիսկ ինծի,
Վերջին անգամ խօսքն այս ածան կ'ըսեմ քեզի,
Որովհետեւ, ինչպէ՛ս ըսեմ, որովհետեւ՝
Ամէն մէկ այդ սուլթան մըն է՝ միսին դիմաց՝
միսին համար.
Ամէն մէկ կին մատեան մըն է՝ միշտ անթափանց՝
կեանքեր ծնող կեանք անվախճան,
Որ ամէն օր հազար իմաստ ան կը հազնի,
Որ ամէն օր քերթուածի պէս կ'ըլլայ հազար տեսակ գինի
եւ շրթներուն մեր երբ հոսի՝ ամէնօրեայ գինին այդ հին...
Մեզ կը թուի, թէ անծանօթ, խորախորհուրդ մատեան է նոր.
Եւ մատեանի վերջին էջի բառէն վերջին կ'առնէ թոյլք. կը սաւառնի:
Քերթուածայքն սաւառնումով անհունին հետ կ'ընդխառնուի ու կը ծնի
ձանապարհներ երազային, նոր ու անկոխ անջրպետներ,
Մեզ կը տանի հազար զոդտրիկ հեքիաթներու, հազար անուշ զրկանքներու,
Հազար գիշեր մեր հոգիի ձորերուն ան ձայները մեր դայլայլելով կը թափաթի.
Եւ օր մը երբ կը հաստատէ մեր հոգիին զոհաբերումն ամբողջական,
Երազ թուող, բայց իրական պատկերը մեր երբ կը դառնայ ընթերնելի՝
Երազի պէս, երազահար... կը լքէ քեզ, կ'երթայ հեռու, հեռո՛ւ, հեռո՛ւ
Եւ գիշերուան վիռվներուն հետ ձեռք ձեռքի, սիրտըդ, գիտցի՛ր,
Կեանքի նման կեանքի խաչին կը յանձնէ ան...
Նոյնիսկ առանց շիթ մը լացի:

Առանց շիթ մը վարձու լացի, ամէն վաշիկեան,
Երգի, խօսքի եւ անհաշիւ ժպիտներու ասպնջական՝
Առատ սեղան սիրտը կաթիլ-կաթիլ այրող՝ ամէն վաշիկեան
Ինչպէս արփին կը չարչարուի, կ'այլանդակուի, կը խռտանգուի,
Կ'ըլլայ քերթուած բզկտուած՝ ունկնդրելով իրեն համար կեանքի իմաստ
Անգին սրտին քահքահները հաշիւոյանքի, մոռացումի:
Շող մը ժպիտ աղերսելէն... կրկին, կրկին՝ առանց շիթ մը վարձու լացի,
Լռութեան մէջ՝ աղմկահար սրտերը վառ կեանքին բացուած
Ամէն վաշիկեան — ճիշդ կեանքին պէս —
Կեանքը իրենց քաշկոտելէն, կեանքի դաժան
Անիւներուն տակ ղողափար...
Կը մահանան...

Եւ ես կու գամ մահուան ծովէն չմահացած,
Չմահացած մահէն ծնած պառկն անոր՝ կու գամ ձեզի,
Զի ես կ'ապրիմ՝ առանց փառքի եւ ես կ'այրիմ՝ առանց յանգի մահուան նման,
Որովհետեւ մահը երբոր ինձ այցելեց, իմ մարմնիս մէջ ու հոգիիս՝
Մահացումի, ոչնչացման ան արժանի գտաւ ոչինչ...:

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

ՈՐՈՐՆԵՐՆ ՈՒ ԹԷՈԴՈՐԻ ԱՂԱՒՆԻՆԵՐԸ

===== (ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ) =====



Մեր տունը երկարկանի է։ Օրուման մէկ մեծ մասը մենք կ'անցընենք վարը, առաջին յարկը, միայն բացառիկ պարագաներու մէջ, ու նաեւ գիշերները քընանալու համար է, որ կը բարձրանանք վեր՝ երկրորդ յարկը։ Երբ նստիմ հարաին նայող ցածադիր պատուհաններէն մէկուն առջեւ, ոչինչ կը փախի տեսողութեանս դաշտէն, իսկ երբ մթննայ, մեր տան լոյսերը վառենք ու մոռնանք անթափանց վարագոյրները վար քաշել, ոչինչ կ'ազատի փողոցէն անցնող հետաքրքիրներու տեսողութեան դաշտէն... Մարդիկ ինչո՞ւ այդքան հետաքրքիր են ուրիշներու տան անցուկարձերուն տեղեկանալու համար՝ չեմ գիտեր, բայց հաստատեմ ինծի, եթէ ըսեմ, թէ մարդ չ'անցնիր մեր տան մօտէն՝ առանց գլուխը դարձնելով պատուհանէն ներս նայելու։

Թէ ինչո՞ւ կը բացատրեմ բոլորովին անհարկի թուող այս պարագան, ետքը պիտի տեղեկանաք։

Մեր փողոցին կից է 150 հազ լայնութեամբ Վուտ Հէյվըն ծառուղին, որուն երկայնքին, իւրաքանչիւր 20-25 ոտքի վրայ, մշտաբար պահակներու պէս շարուած են երկար տարիներ առաջ տնկուած սքանչելի կաղնիներ։ Անոնք է, որ ծառուղին երկու մասի կը բաժնեն. բաժանմունքներէն մէկը կ'երկարի դէպի հարաւ, միւսը՝ դէպի հիւսիս։ Եթէ պատահի, որ մօլորիս, կամ գինով ըլլաս եւ անոնցմէ մէկուն վրայ սխալ ուղղութեամբ վարեա կառքդ ու բռնուիս, տուգանքը 25 տոլար է. ճի՛շդ այնքան՝ որքան աւազակ ամերիկացիներու նախահայրերը վճարեցին հնդիկներուն, լման Մենհաթան կղզիին համար։

Յս, յաճախ կը նստիմ ծառուղիին

վրայ նայող մեր պատուհաններէն մէկուն առջեւ, ու կը դիտեմ զուրոյն առջուկարծը: Միշտ ալ հաճելի բաներու չէ որ ակնանտես կ'ըլլամ. առջի օր, օրինակ, ճափոնական մանրիկ Թոյնքա ինքնաշարժ մը, մտաւ մաք քրքի մը տակ: Կարծես, թէ վարիչը շնաց հանդերձեալ աշխարհ, բայց մեծ եղաւ զարմանալով, երբ զինքը դուրս քաշեցին մտած տեղէն ու դատն, որ միայն իր ակնոցներն էին փճացած ու իր դեղին ցեղի յատուկ գոյնը՝ քիչ մը աւելի դեղնած:

Յոր բեռնադարէն վարիչն ու ինք զէմ դիմաց եկան, ամերիկացին սպառնազին նայեցաւ անոր ու ըսաւ.

— Հէյ, սքիւփիտ (ապուշ)՝ կողքի հայելիին մէջ տեսայ, որ տասը բողէ է ինծի կը հետեւէի՞. ենթադրենք, թէ կառքիս յետնամասին վրայ եղող ազդարարութիւնը չտեսար, թէեւ անկարելի է, բայց ենթադրենք, բայց կա՞նք ալ չտեսար...

Տեղս փոխեցի՝ տեսնելու համար, թէ այդ յոխորտ ամերիկացիին նշանաւոր ազդարարութիւնը ի՞նչ կ'ազդարարէ:

Բեռնատարին ետեւ խոշոր, կարմիր գրեթէ գրուած էր.

«ՆՍ ԴԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԶԵՄ ԿՈՐՍԸՆՑՈՒՅԱԾ»

Մեծ խօսքի, ըսի մտքէս ու վերադարձայ տուն:

Մառուղիին մեր տան կողմը եղած ափին վրայ միայն բնակարաններ կան: Քաղաքի յատակաչիծը կազմողները այդպէս են տնօրինած: Առեւտրական հաստատութիւններն ու նման բաներ միւս ափին վրայ են:

Նայած իրենց բովանդակութեան կամ մատուցած ծառայութեանց, բոլորն ալ կը բացուին ու կը գոցուին տարբեր ժամերու: Նպարափառաւ Ատոն ու լրագրափառաւ Լէվինը գրեթէ միաժամանակ կը բանան իրենց խանութները: Ամէնէն ու

բացուողն ու ամէնէն ուշ փակուողը Մֆ Դիկի կապելան է, ուրիշէ, մինչեւ ուշ գիշեր, կը յորդի նուազի ու երգի ձայն, ու, հինցած զարեջուրի անախորժ, քիչ մը թթուաշ բուրում: Այս վերջին բառը, բուրումը ճիշդ չէ թերեւս. որքան դեմք, վարդը, մեխակը, մանրակը սերածիդ մազերն ու նման բաներ կը բուրեն. իսկ ինչ որ կը յորդի Մֆ Դիկի կապելայէն, ո՛չ բուրում է, ոչ ալ՝ հոտ, այսինքն՝ ո՛չ հաճելի է չնչել, ոչ ալ՝ այնքան մը տհաճ է որ պժգաս: Զո՞ր հայ լեզուէն զայն նկարագրող թառ չունի կարծեմ:

Կապելան բաց է օրը 18 ժամ, եւ շաբաթը՝ 7 օր: Հրեայ Մր. Պայնաբրի դեղարանը, որ պատկից է անոր, Կիրակի օրերը կը մնայ փակ: Մենք ալ, այս պարագան նկատի ունենալով, Կիրակի օրերը հիանդ չենք ըլլար: Դեղարանին ձախ կողմը գտնուող խանութը, նացի Գերմանիայէն փոխտտական Մաքսին կը պատկանի: Զուր փորձ է զայն նկարագրելը. տեսակ մը «վիթ փաղար» է: Հոն կարելի է գտնել ծխախոտ, դլիւցալի ու հալի դեղ, փեխիսիլին, հապերու տեսակներ, շաքարեղէն, կօշիկ, քոտաք, խաղալիք, պարբերականներ ու լրագիր, գուլպայ, թաշկինակ, մեյան, մատիտ, կեղծամ, Մոնա Լիզայի ու նման աշխարհահռչակ արուեստի գործերու աժանագին վերաբրտագրութիւն, ծամոն, սուրճ, հովանոց ու անձրեւանոց ու նման բաներ: Ունի նաեւ խոհանոցի բաժին: Առտու կանուխ, գիշերային իրենց աշխատանքէն տուն դարձող մարդիկ ու արշալոյսին հետ գործի վաղել ստիպուածներ, Մաքսին կնոջ հաստ ու կարմ տիկին Րոթհի պատրաստած թէյով, սուրճով ու սանտուխով կ'ընեն իրենց նախաճաշը:

Մաքսին խանութին քով մուշտակի աշխատանոց ու փաճառատուն ունի Ժիլիփինան: Անոնէն մի' խաբուիք: Յոյն է: Ինծի ծանօթ առաջին ու միակ յոյնը, որ իր անունը առեւտրական նպատակներով փոխած է, գիշած է փոխել, թաքցրնել իր ազգութիւնը: Իր կալուածը երկ-

յարկանի է։ Տակը՝ խանութն է։ Վերնոցարկը կը բնակի իր բնականը։ Թէոսորանուն մանչ մը ու երկու շնորհալի աղջիկ ունի։ Աղջիկները արտակարգօրէն սիրուն են։ Բայց անոնց հանդիպիլ Ռիկօ Փարքի մէջ հրաշքի պէս բան մըն է։ Հետաւոր նահանգի մը մէջ համայնարան կ'երթան։ Անոնց եղբայրը, հորը վկայութեամբ, ուսման գլուխ շունի, խալիբիւի է։ Այսինքն՝ անօգտակար։ Բանի չեկող։ Աղաւթի կը պահէ։ Քաղաքին մէջ աղաւթի, հաւ ու ծման բաներ պահելը արդիւնաւոր է, բայց մեր տեղը գիւղ կը համարուի ու արդէն օրէնքները շինուած են զրգերու մէջ մնալու համար։ Ենոնց հնազանդող շատ մարդ չկայ։

Ֆիլիփինոյի դրացի՝ ու 200 ասորի առաջ գէպի Ամերիկա ճամբայ ելած իր լանտացի առաջին զաղթականներուն մէջ նախաւոր ունենալուն համար հպարտ, Օ Քանրըներուն տունը միայնակ է։ Հարթ տանիքով։ Այս հարթ տանիքը, յայնքու տան երկրորդ յարկին իրեն բազ կը ծառայէ։ Հոն է, որ խալիբիւի Թէոսոր աճէն առաւօտ կը կերակրէ իր նախնիները։ Դիմացէն կը տեսնեմ, թէ ան ինչպէս իրեն հետ դուրս բերած սողալէն ափով կ'առնէ կորեկը ու սերմնացանի մը նման կը ափով շորս կողմ։ Այդ պահուն սպասող աղաւթները կը սուրան վար ու կուտը կ'ուտեն։

Երբեմն կը նախանձիմ անոնց։ Հոյի, քամիի, անձրեւի ու թշնամիի դէմ պաշտպանուած են, ամէն առաւօտ կը կերակրուին, ու ինչ որ աւելի դրաւիչ է, օրն իրուն սիրտաւնիլէ պատ ուրիշ գրաւում չունին։ Միակ դէշ բանը, Թէոսորի անոնց ձաղերը պարտաւանջով ծախելն է։ Բորթելով ծախելը։ Այդ է եկամուտի իր միակ աղբիւրը, եթէ չհաշուենք ծօրը, ամուսինէն պաղտնի, գաւկին դըրպանը սահեցուցած տանոցներն ու քրսանոցները։

— Ի՞նչ ընեմ, մէկ հատիկս է, ես չաւամ, անոր տէր չեմ։ Դ՛ի տէր պիտի ելլէ, — ըսաւ օր մը, երբ մեր տունը, կնոջս հետ սուրճ կը խմէր։

— Ազգապնիրը — աղաւթի ձաղերը — ինչպէ՞ս կը պարտաւանջէ, — հարցուցի անոր։

— Երբ անոնց փեսայները բուսին ու ինքզինքնին կերակրել կարենալու չափ մեծնան, ազաս, Թէոսորս բոյնէն կը վերցնէ զանոնք ու, առանձնարանի մը մէջ, գիշեր-ցերեկ կը խնամէ, կը կերակրէ։ Հինգ-վեց շաբաթէն կը մեծնան ու կը գիշերան, մորթուելիք կ'ըլլան, — ըսաւ։

— Այդ հաշուով, այն երկու տուլարը, որ կու տանք անոնց համար, չա՞տ քիչ է։

— Ի՛րաւ քիչ է, բայց անգամ մը ժողովուրդը վարձուած է այդ գիշին՝ ու անոնցմէ աւելի դրամ առնելու հաւանականութիւն չկայ։

— Թող աղադ նպարտաճառներէն զա՛ս առնէ, ամէն շաբաթ, ամէն բանի գինը անոնք կը բարձրացնեն... կարագին, միսին, հացին, նո՛յնիսկ Էօճին գինը եռապատկեցին։

Ու ափսոսալով, որ իր սրտահաւորը աւելի մեծ գումար մը գանձելու հետաւորութիւն չունի իր սգաւալներուն համար, ելաւ գնաց։

— Լա՛յը պահաս էր, — ըսի կնոջս։
Չպատասխանեց։

— Եթէ կարօտ, չունեցող բնուանիք մը ըլլային, նորէն կը հասկնայի՞ր, բայց ունեւոր են, երկու կամ չորս տոյարը ի՞նչ կարեւորութիւն ունի իրենց համար...

Նորէն չպատասխանեց։

— Ես երկիր կաքաւի միս կերած եմ, սգաւալին միսը ինծի կաքաւին միսը կը յիշեցնէ, — ըսի, խօսակցութեան հունը փոխելով։

— Ե՛րբ ես կերած, հետս կարգուելէդ առա՞ջ... Որքան կը յիշեմ՝ ինծի նըման բան չես կերցուցած։ Եթէ դուն միտնակդ, ինձմէ զաղտնի կերար՝ այդ տարբեր...

— Ինչե՛ր կ'ըսես... Ինչե՛ր կ'անցընես մտքդ... Ես տանց քեզի բան կըրոնամ սուսել... հարա՛մ կ'ըլլայ... Ձե՛դ

յիշեր, քանի մը տարի առաջ, երբ հիւանդ էի, էրզրումցի Պիկ ձանը այցելութեան եկած էր ինծի. հետեւ ալ՝ երկուսգուաւ բերած, որ ուտեմ ու կաղաւրսիմ. փութը դիւր ու կերցուցի ինծի:

Այս հոգեշահ խօսակցութենէն քանի մը ամիս ետք, մեր խնամքները հեռաձայնեցին, թէ մեզի այցելութեան պիտի դան Կիրակի օր:

— Ժաշի հրամեցէք, — ըսաւ տիկինը:

Քիչ մը մազ-տուզէ ետք, համաձայնեցան:

— Ասոնց ի՞նչ պիտի կերցնենք, — հարցուց տիկինը կէս մը ինծի կէս մը ինքնիքին:

— Ժաշի խնդիրը դուն հանցիր մէջտեղ, քու գլխացաւք է, դո՛ւն մտածէ, — ըսի:

—

— Երթամ Թէոտորին Կիրակի օրը՝ լան համար քանի մը թուոն ապարեմ. թէ՛ անոնց համար բացառիկ պատիւ ըրած կ'ըլլանք, թէ՛ դուն սգուաւ կ'երած կ'ըլլաս, — րո՛ւ:

— Գէշ միտք չէ, դործաւ ալ կը դիւրանայ, փորերնին կը լեցնեմ ու կը դնեմ փութը:

— Թէոտոր, բարեկամ, Եարաթ օր ինծի վեց դիրուկ սգուաւ պիտի տաս. հիմա առ հա քսաննոցը եւ ութ տոբար ետ տուր ինծի:

— Սգուաւ ունի՞մ որ տամ, — ողբաց:

— Զուներ՝...

— Առնի՛մ, չեն աներ, ձագ չե՛ն հաներ:

— Բնա՛ւ ձագ չեն հաներ, Կոյնիսկ բարեկամ մը գոհացնելո՞ւ չափ...

— Ամիսը հազիւ մէկ-երկու հաս. դանոնք ալ հայրս կ'ուտէ:

— Էս կը կարծէի, թէ ան դէմ է աղանի պահելուդ:

— Պահելուս դէմ է, բայց ձագերն ուտելուն դէմ չէ, դիտէ բերնին համը:

Տուն դարձայ ձեռնունայն: Ընտանեկան ժողովը որոշեց հիւրերուն հուս

հրամցնել: Իրաւ ալ, երբ քանի մը օր ետք մեր հիւրերը եկան ու տիկինը փութն հանեց կարմրած, շագի ու բուրում արձակող վառեակները եւ փխաւին վերայ դրած մեծ ափսէով քերաւ սեղան, բերանս ջրոտեցաւ: Թուքս կուլ տուի եւ հիւրերուս դառնալով՝ ըսի.

— Մտադրած էինք սգուաւ կերցնել մեզի, բայց չեղաւ, չկրցանք դոնել. ճուտ պիտի ուտէք:

— Զուտն ի՞նչ է, — հարցուց մեր խնամիկն տիկինը:

— Հաւաւ ձագ:

— Է, սըվոր շտկէ շիտակ վառեակ չըսե՞ս, որ հասկնա՞նք, — կնոջ օգնութեան հասաւ ամուսինը:

— Ուէ՛լ, ճուտն ալ հայերէն է. առաւելապէս արեւելահայերը կը դործածեն այդ քաւը: Մինչեւ երկու տարի առաջ, մենք ալ, մեզի պէս, վառեակ քաւ կը դործածէինք, — ըսի ես, — բայց օր մը բարեկամներէս մէկը հեռաձայնեց, թէ Հայաստանէն քանի մը դիտնականներ, փրֆեւոյներ են եկած, ու լաւ կ'ըլլայ որ օր մը, քանի մը բարեկամներով, հաւաքոյթ մը կազմակերպենք ի պատիւ անոնց, եւ ճաշով մըն ալ պատուենք: Յետոյ, իմ հաւանութենէս ետք, պարտականութիւն տուաւ ինծի, որ երթամ հիւրանոց, տեսնեմ դանոնք, հրաւէրը տամ, ժամանակը որոշենք, ու արդիւնքը տեղեկացնեմ իրեն: Ելայ գացի ու դտայ հայաստանցիները եւ, ժամագրութիւն առնելէ ետք, հարցուցի, թէ ի՞նչ կ'ուզեն ուտել այդ երեկոյին, ռթէ՞յք, խորոյա՞ծ, ձո՞ւկ... կ'ուզեն հայկական՝ ճաշարանի մէջ ուտել, թէ ամերիկեան:

Քիչ մը շփոթած իրարու նայեցան. ինծի թուեցաւ, թէ անձայն կը խորհրդակցին: Յետոյ՝ անոնց մէջ ամէնէն տարեց թուողը ըսաւ.

— Քանի մը օրերէ ի վեր հոս ու հոն կը հրաւիրուինք ու այդ բոլորը համեմատեցինք, կարելի չէ՞ յառաջիկային հուս ունենալ:

— Ըս'աւ, ճո՛ւտ ըսիք... Անշո՛ւշտ

կարելի է . աւելի դիւրին ի՞նչ կայ որ...
Կ'ունենաք քանի՜ հաս որ ուզէք...

Յիմար չէի ըսելու իրենց, թէ մէկ
«Թէյքի» գինով կրնային երեք անգամ
ճուտ ուտել:

Այդ գիշեր, ուշ տուն, երբ տուն
դարձայ, տիկինը դալուս կը սպասէր:
Ուշադրութեամբ ու յետին մանրամաս-
նութիւններով ամէն բան պատմեցի ա-
նոր: Պատմեցի նաեւ «ճուտ»ի մասին ու
այդ վայրկեանէն սկսած՝ անիկա մտու-
մեր ընտանեկան բառարանին մէջ ու տե-
ղաւորուեցաւ:

✽

Այս բոլորը պատահեցան աշնան:
Մեր շար բախտէն, եղանակներուն ամէ-
նէն անուշը շատ կարճ տեւեց այդ տա-
րի. կրնակազօն անոր յաջորդեց ձմեռը իր
անվերջ մրրկներով ու սուռ քամիներով:
Գլխէս պաղը բնաւ պակաս չեղաւ: Այդ
առթիւ, երբ դանդաղեցայ մեր ընտանե-
կան թմբիկ տոբթ. Բապըթին, արդա-
րացաւ՝ ըսելով, թէ ինք անգոր է, չի
կրնար բնութեան օրէնքները փոխել,
պաղը պարտաւ տեղերը կը լեցուի...

Մարտի կէսերուն էր, որ արեւի ե-
րես տեսանք, եւ ի՞նչ արեւ... Եթէ ու-
շադրութեամբ մտիկ ընէիք օրուան լուռ
պահերուն, կրնայիք ծանոթութեան թուներէն
վեր խուժող աւիշին կամ մօտեցող դար-
նան ստնածայնը տեսնել:

Արդէն արեւուն մէջէն դարնան բոյր
կու դար ու ցերեկը, հալող ձիւնէն, կար-
կաչող առուներ կը կազմուէին. բայց
կէսօրը հազիւ անցած, փութերը կը լռէին
ու սառոյցը իր ձեռագործը կը հիւսէր
հոս ու հոն լնացած աղմուկներուն վը-
րայ:

Երբ թռչունները նորոգել սկսան ի-
րենց բոյները, ես, առանց բաճկոնի ու
առանց գլխարկի, նետուեցայ դուրս ու
սկսայ մեր դրան առջեւի մարդը կարգի
դնել:

Գանկիս ու կողերուս վրայ ինկող

արեւու ճառագայթը մեղրի պէս քաղցր
էր: Վերէն, շատ վերէն, մի հեծածի պէս
արշաւող սպիտակ ամպերու շուրջը կը
քալէր փողոցներէն ու տանիքներու վը-
րայէն: Զմրան ցուրտէն պաշտպանուե-
լու համար ներս առած բոլոր թաղար-
ներս հանեցի դուրս, որ բոյներն ալ ին-
ծի պէս արեւ խմեն ու խայտան: Պա-
րարտացուցիչ սրկեցի վարդենիներու
տակ:

Օր մըն ալ, առաւօտ մը ըսել կ'ու-
զեմ, երբ այս գործերով էի զբաղուած,
տեսայ, որ մեր փողոցէն, անկիւնադար-
ձէն աղջիկ մը կու գայ: Բարեձեւ էր ու
սիրուն ըլլալ կը թուէր: Ես, որ գործս
աւարտած ներս երթալու կը պատրաստ-
ւէի, անտեսցի, զբաղուած ըլլալ ձեւա-
ցուցի. սպասեցի, որ հեռուէն սիրուն
թուացող արարածը մօտենայ. մօտենայ,
որ ստուգեմ, թէ իրապէս սիրուն է թէ
ոչ...

Մօտեցաւ: Մտուցեցի: Բարակ իրան,
խաղաղ ծովի դոյն աչքերով, շաղանա-
կադոյն մազերով աղջիկ մըն էր: Բաց
օձիք ու սպիտակ մետաքսէ, ըսել կ'ու-
զեմ սպիտակ ամպէ ձեւուած պլուզին
առկէն խորհրդաւոր բաներ մը ուռիլ
սկսած էին: Անոնց տէրը հազիւ քսան
տարու կար: Դէմքին՝ Մօնա Լիզայի ժը-
պիտ: Ըսել կ'ուզեմ՝ կայ ու չկայ ժպիտ
մը: Միայն մտքէն հաճելի բաներ անցը-
նողներն են, որ կ'ունենան նման ժպիտ:
Կար ժամանակ, երբ ես ալ այդ ժպտէն
չէի զրկուած... Անգամ մը, դետնուղիին
մէջ նստած մարդ մը, որ հետո միաժա-
մանակ դուրս ելաւ, հարցուց ինծի, թէ
ներսը եղած պահուս ի՞նչ բանի մասին
կը մտածէի:

— Ինչո՞ւ կը հարցնես, — ըսի:

— Դէմքդ, ներքին լոյսով ողողուած
էր, — ըսաւ:

Զխոստովանեցայ իրեն, բայց մար-
դը իրաւունք ունէր. գիշեր մը առաջ
Դուրեանի թրջուհիին պէս աղջիկ մը
համբուրած էի ու այդ պահուն կը մտա-
ծէի անոր մասին:

Հիմա դէմքը նման լոյսով ողողուած

աղջիկ մը կ'անցնէր առջեւէս ու ես մըտալէս ըսի:

— Ահա երջանիկ արարած մը: Ի՞նչ պիտի չտայի՝ դիտեալու համար իր սըրտին դադարէր... Այսօր չէ, վաղն ալ չէ, բայց քանի մը օրէն, եթէ ան շարունակէ առաւօտները մեր դռներէն անցնիլ, կը մտերմանամ հետը՝ ու կը լուծեմ դադարէրը:

Մնաց որ, սիրուն աղջիկ մը, այդ տարիքին մէջ ի՞նչ գաղտնիք կրնայ ունենալ բացի սէրէն... Սէ՛ր... Այլ ուրիշ ի՞նչ... Վատահարար մէկը կը սիրէ ու մէկէն կը սիրուի... Նման դեղեցկութիւններ չեն կրնար երկար ժամանակ աննկատ մնալ: Իր սիրտը մէկուն տուած ըլլալն էր պատճառը, որ քովէս անցաւ ու զիս չնշմարեցիս... Կատարեալ անտարբերութեամբ անցաւ— զնաց... Կար ժամանակ, երբ բոլոր աղջիկները կը նայէին աչքերուս մէջ ու կը ժպտէին, պատրուակով մը կամ առանց պատրուակի կը նայէին աչքերուս մէջ... Ախտո՛ւս, հիմա նման բան տեղի չ'ունենար:

Քիչ մը տխրած՝ հլայ ոտքի, նայեալու համար իր ետեւէն, թէ ո՛ւր կ'երթայ:

Ախորժարներէն ծախող Ատոյին խանութը մտաւ:

Գնումներ պիտի ընէ, եղբակացուցի ու մտայ տուն նախաճաշելու:

Նայեցայ ժամացոյցին:

Ութը յիսուն րոպէ կ'անցնէր:

✱

Հիմա օրը գործս լաւ, յաջող գնաց: Ուրախ օր մը անցուցի: Քանի մը անգամ կանգ առի՝ խուզարկելու համար հոգիս, որ ճշգրէմ, թէ ի՞նչ է, ուրկէ՞ է բերկրանքիս սկը: Տարօրինակ բան... Ամէն անգամուն ալ այդ անծանօթ աղջկան պատկերը եկաւ աչքիս առջեւ: Ո՛ւր կը բնակէր, ինչո՞ւ համար այսքան տարի է չէի նշմարած իր գոյութիւնը, աչքս դոց կը քնանայի՞ր... Վերջապէս եկայ այն եղբակացութեան, որ ան բոլորովին նոր

էր մեր թաղին կամ շրջանին մէջ... Այո՛, նո՛ր է...

Նոր է որ փոխադրուած են մեր շըրջանը ու վաղը միւս օր ես կը ստուգեմ, երբ վերստին անցնի մեր դռներէն: Պատրուակով մը խօսքի կը բռնուիմ հետը ու կը հարցնեմ. կ'ըսեմ, օրիորդ, աղւոր աղջիկները բնաւ չեն վրէպիլ ուշադրութենէս, ինչպէ՞ս եղաւ որ մինչեւ հիմա քեզ չեմ տեսներ: Վստահ եմ՝ չի նեղանար: Ո՛ր կ'ընը գովքի ծարաւ չէ...

Այդ գիշեր, քնանայէ առաջ, նորէն իր մասին խորհեցայ:

Բարի բախտէս, լոյսը բացուեցաւ տաքուկ արեւով ու պայծառ երկնքով: Կտարներու վրայէն ու բարախներու կատարէն տարմահաւերը օրը կը փառաբանէին: Հովուն հետ, հետու տեղէ մը կուգար այծտերեւի բուրում՝ թէեւ այդ թուփին ծաղկելու ժամանակը չէր դեռ: Նշմարեցի, որ շապիկիս վրայ բիծեր կային: Մտայ տուն ու կարճաթեւ, մասամբուր սպիտակ շապիկ մը հագայ: Կէս ժամէն, թէեւ գործս աւարտեցի, բայց յօտոց մը ձեռքս՝ սկսայ ալ ձեռքս դառնալ ու աշխատանք կեղծել: Աչքս անկիւն նայարձին էր: Ժամացոյցին նայեցայ: Իննին քառօրդ կար: Հիմա, եթէ ճշգրտապահ է, ո՛ւր է ուր չէ գայու է, մտածեցի: Եթեմար Արամ, ժամագրութիւն ունիս, որ ճշգրտապահութիւն կ'ապահովուի իրմէ. բայց եթէ գերմանացի է, ու Ատոյին կ'աշխատի, Ատոն գերմանացի է ու ճշգրտապահութիւն կ'ապահովուի: Տեսա՞՞մ ես գերմանացի արջ մը, որ այդպէս չըրլայ... Կարծես թէ՛ եթէ հինգ-տասը րոպէ ուշ սկսիս գործի, աշխարհի կարգն ու կանոնը իրար կ'անցնին, մոլորակները դուրս կու գան իրենց կանխորոշեալ ծիրէն ու ամէն բանի հաւասարակշռութիւնը կը խախտի:

Մտածումներս հոս էին հասած, երբ տեսայ որ կու գայ: Ըսելու հարկ կ'ա՞յ, թէ ուրախացայ: Ետէս: Իր գայուն սպասողի տպաւորութիւն չձգելու համար, անտարբերութիւն ձեւացնելով, դրան առջեւի ճիւղը օտարաճատերէն միջինին

վրայ, գէժքս ճամբուն զարճուցած, նրստեցայ: Երբ ինծի հետ մէկ գծի վրայ եկաւ, չկրցայ խօսք բանալ. քաջութիւնս կորսնցուցի. բայց իր սիրուն գէժքին նայելով թեթեւ մը, կայ ու չկայ ժպտով մը ժպտեցայ: Յետոյ, իր անցնելէն ետք, օտքի ելայ՝ իր ետեւէն նայելով ստուգելու, թէ ո՞ւր կ'երթայ:

Նորէն Ատոյին խանութը մտաւ:

— Աստուած իմ, մի՞թէ հոն կ'աշխատի... Բայց ես չարաթը քանի մը անգամ Ատոյին կ'երթամ գնումներ ընելու համար ու բնաւ չեմ հանդիպած իրեն: Եթէ հանդիպած ըլլայի, մի՞թէ կը մոռնայի այդ սիրունիկը... Չրլլա՛յ, չրլլա՛յ, թէ խանութին յետամտին մէջ կամ խոհանոցը կ'աշխատի: Հոն կ'աշխատի՝ սոխ ու սխտոր մաքրելով, փաթաթէս կեղւելով...

Ջախ նման անփառունակ աշխատանքի լծելը, այո՛, լծելը, ոճի՛ր է... Մեղք չէ՞ այդ աղջկան:

Ի՞նչ ընեմ, ելլեմ Ատոյին խանութը երթամ գնում մը պատրուակելով... Հաստափոր Ատոյին հարցնե՛մ, թէ այդ բարակիւրան գեղուհին ո՞վ է, իր մօտ կ'աշխատի... Հապա՞ թէ ան հարցնէ, թէ ինչո՞ւ կը հետաքրքրուիմ, ի՞նչ կըրնամ պատասխանել:

— Ուէ՛լ, Արա՛մ, — ըսի ինքզինքիս, — ո՛չ ան կը փախի, ոչ ալ՝ զու՛ն. քանի մը օր եւս սպասէ...

Օրս հարամ եղաւ:

Գիշերը, պառկելէս ետք, երկար տան խորհեցայ իր ու ծրագրերներու մասին:

— Առաւօտուն, նորէն իրեն կը սպասեմ ու անպատճառ խօսքի կը բռնուիմ հետը, — համոզեցի ինքզինքս, ու կողքիս դառնալով, քնացայ:

Առաւօտուն, առաջին դործս, անոր հետ խօսակցութիւն սկսելու ձեռիս կերպը գտնելն ու որոշելը եղաւ: Բաղձաթիւ նախաբաններ պատրաստեցի, ու անյարմար դատելով՝ նետեցի մէկ կողմ: Զյաւնողեցայ վերջնական ընտրութիւն մը ընել:

— Տեսնենք պարագան ի՞նչ կը թելադրէ, — ըսի ինքզինքիս:

Չէի կրնար շիտակ խորհիլ, որովհետեւ մտքիս աղջեւ ան կը ներկայանար Ատոյի խանութին յետամտսին մէջ, աչքէ հետոս նստած, առջին գողնոց մը ու ձեռքին՝ դանակ, փաթաթէս կամ սոխ կեղուելով, քիթը վեր քաշելով՝ ու այսպէս վար հոսող արցունքներու ծովու մը մէջ լողալով:

Խոզի գիշեր մը անցուցի:

Առաւօտուն, երբ քովէս կ'անցնէր, բոլոր քաջութիւնս հաւաքելով՝ օտքի ելայ, ու իր անցնելիք ճամբան կէս մը խափանելով՝ ըսի.

— Մի՛րուն օրիորդ, ամէն առաւօտ, ժամը ճիշդ Գին տասր բոպէ մնացած կը հանդիպինք իրարու: չէ՞ք կարծեր, թէ լաւ կ'ըլլայ, եթէ գէթ բարի լոյս մը րսենք իրարու...

— Ըսենք, ինչո՞ւ չէ, — համաձայնեցաւ հետս:

— Ուրեմն բարի լոյս:

— Բարի լոյս պարոն:

— Բարի լոյս օրիորդ թէ տիկին:

— Ո՛ւ, առաջինը ճիշդ էր, օրիորդ:

— Աղէ՛կ, ասկէ ետք Շօրիորդ, բարի լոյս: Կ'ըսեմ: Եւ անշուշտ անուն մըն ալ ունիք:

— Հէ՛յ, ի՞նչ է աս... Հարցաքննութիւն, թէ հաւատաքննութիւն...

— Չէ՛, միայն կ'ուզեմ գիտնալ, թէ անունդ ալ անձիդ պէտ սիրո՞ւն է:

— Անունս էլիզապէթ է, — ըսաւ քաղցրօրէն ժպտելով, — բայց բոլոր ծանօթներս ինծի Լիդ կը կանչեն:

— Կ'արտօնէ՞ք, որ ես ալ ձեզի Լիդ կանչեմ:

— Կանչեցէք, չէ՞ որ արդէն ծանօթացանք:

— Իմ անունս Արամ է ու այս տունը կը բնակիմ, — ըսի մեր տունը ցոյց տալով: Իսկ դո՞ւք...

— Ես Ծիւղէթի վրայ կ'ապրիմ:

— Մեր ձախ կողմը գտնուող տան մէջ ապրող երիտասարդ կնոջ անունն ալ Էլիզապէթ է, — ըսի, — զժքախտ ա-

մուսնութիւն մը կնքեց քանի մը տարի առաջ։

— Ի՞նչ պատահեցաւ, բաժնեկցա՞ն։

— Ոչ, օրինաւորապէս. օր մը ամուսինը տունէն մեկնեցաւ ու ա՛յլ չեկաւ ետ։ Բոյսը սրտովս կը մաղթեմ, որ երբ դուն օր մը ամուսնանաս, իրապէս ու ամբողջովին երջանիկ ըլլաս։

— Օ՛, շնորհակալութիւն, շնորհակալութիւն։

— Կրնա՞մ բան մը հարցնել։

— Հարցուր, խնդրեմ։

— Ատոյին մօտ կ'աշխատիս, հոն ի՞նչ կ'ընեն։

— Ի՞նչ բանն է, որ ձեզի խորհիլ կու տայ, թէ Ատոյի մօտ կ'աշխատի։

— Ի՞նչ գիտնամ, ամէն առաւօտ առոր խանութը մտնելով կը տեսնեմ ու դուրս դալով չեմ տեսնիր։

— Ուրեմն ձեր բանը-դործը ձգած քայլերո՞ւս կը հետեւիք։

— Ձեռքի, որ կը կարծրիմ, բայց ինքզինքս չկորսնցուցի։

— Լի՛զ, դուք դեռ զիս չէք ճանչնար, — ըսի վստահ շնորհով մը, — համաշխարհային համաւի տիրացած անձ մը տեսնելու համար տասը քայլ չեմ քաշեր, բայց զեղեցկուհի մը կամ զեղեցիկ որեւէ բան տեսնելու համար տասը մղոն կը քաշեմ։ Կրցա՞յ պատասխանել ձեր հարցումին։

— Աղէկ մէջէն ելաք... Շնորհակալութիւն ձեր քովի մտնելու համար. հետաքրքրական մարդ մը ըլլալ կը թուիք եւ ուրախ եմ ձեր ծանօթանալուն համար։ Ու մնաք բարով։

— Մնաք բարով չէ, այլ՝ ցտեսութիւն։ Ու մի մոռնաք, որ շրտիք թէ Ատոյի խանութին մէջ ի՞նչ կ'ընէք։

— Ի՞նչ հետաքրքիր մարդ էք... Կիներու անո՛ւնն է ելած... Ատոն լաւ սործ ունի. նախաճաշելու կ'երթամ իր մօտ։

— Ես ալ կը կարծէի, թէ հոն կ'աշխատիք, սոխ ու փաթաթէս կը մաքրէք։

— Ըսի սրտազին ծիծաղելով։ Ու, հաւատաք կամ ոչ՝ ձեզի կը մեղքեցայի՛ր...

— Մեղքը չե՞ն աս ձեռքերուն, որ սոխ ու փաթաթէս մաքրեն, — ըսաւ ու ավերը բացած՝ ձեռքերուն երկու կողմն ալ ցոյց տուաւ։

— Իրա՛ւ զեղեցիկ են. համարելի՛ր, — ըսի ես, ու զանոնք բռնելով՝ մօտեցուցի դէմքիս. չէ՛, սոխ-սխտոր չե՞ն հոտիք, աղուոր ձեռքեր են։ Ես կը սիրեմ կնոջ ձեռքերը, երբ թարմ են, ու նաեւ՝ երբ խորշոված ու յոգնած են մայրութենէ, երբ մազադաթ ու մասունք են դարձած...

— Ըսի քեզի, թէ հետաքրքրական անձ մը ըլլալ կը թուի։

— Բայց չըսի՛ր, թէ ամէն առաւօտ ո՞ւր կ'երթաս։

— Ձրա՛ր... ուրեմն ըսեմ, Ատոյին քովի վարսալարդարին արկղակալն եմ։ Ուշացայ. մնաք բարի ու ցտեսութիւն մինչեւ վաղը։

— Ցտեսութիւն մինչեւ վաղը։

Հեռանալէն ետք բան մը մնաց քովս։ Շրջապատիս մէջ այնտեղեկի մեղմ բուրում կար, թէ՛ն զիւհէի, թէ անոր ծաղկելու ժամանակը չէր դեռ։

Այն անկէ ետք, ամէն առտու, դործս աւարտած ու սովորական տեղս նստած՝ իր դալուստին կը սպասէի։ Կ'ուզէք նախապաշարում համարեցէք, կ'ուզէք դիպուած կամ պատահմունք, զինքը տեսած ու հետը խօսած օրերս դործերս յաջող կ'ընեմ խանային ու օրս թեթեւ ու հաճելի կ'անցնէր։ Ըսի առ բաները իրեն, որ ամէն օր իրեն սպասելս արդարացնեմ, ու մտքէն գէշ բան մը չ'անցընէ...

Առտու մը, սովորականէն քիչ մը կտանուի արթնցայ ու փոխանակ անկողնիս մէջ աջ ու ձախ դառնալու, ելայ, անիլ-ւեցայ, խնամքով մաքրուեցայ ու ելայ դուրս, ուր աղուոր օրուան մը խոստում մը կար։ Մառուդին կենդանացած էր երթելեկողներով։ Անամպ երկնքին վրայ անհամար օրորներ կը սուսունէին։

— Մոյ՛բ, գիտեմ, նուազագոյնը 12

մղոն հետու է ասկէ, ասոնք հոս ի՞նչ գործ ունին... Որքան անշնորհք են ցամաքի վրայ, նոյնքան շնորհալի են, երբ թեւ են բացած սաւառնելու համար։ Բան մը ըլլալու է զանոնք հրապուրող, հոս բերող, ըսի ինքզինքիս։

Է՛, խերն եմ անիծեր, ի՞նչ կ'ըլլայ՝ թող ըլլայ, անոնց համար ալ միտք յոգնեցնելու չե՛մ, խորհելով, զանոնք մոռնալու վրայ էի, երբ ակնարկս ինկաւ Օ ֆաներներու տանիքին, ուր Թէոտորի իր ազանիւնները կը կերակրէր։ Հազիւ իր գոգնոցը պարպած ու հեռացած էր, երբ որորները, կոնչելով սուրացին վար ու տիրեցին տանիքին։ Աղաւնիները, աշաւիկ, բարձրացան վեր ու հոս ու հոն թառելով՝ ականատես եղան կողոպուտին։ Երբէ՛ն ի վեր տանիքին վրայ այդ ողորդութիւնը տեղի կ'ունենար՝ չեմ գիտեր, բայց Թէոտորի սգունալ չկարենալ հասցնելու զաղտնիքը պարզուած էր ինծի համար։ աղաւնիները անօթի՛ կը մընային... Ու անօթի հաւք հաւկիթ չ'ածեր։ Որորհեցայ, թէ երբ այդ լուրը տամ մուշտակափաճառի տղուն, ան չ'ապի ուրախանայ։ Դարմանը գիւրին է, հոն կը մնայ ու կը հսկէ՝ մինչեւ որ իր թռուչունները մաքրեն տրուած կուտը։ Ասկէ աւելի պարզ ի՞նչ կրնայ ըլլալ։

Քիչ ետք, երբ էլիզապէթ եկաւ, ուրախ, որ իր հետ խօսելու հետաքրքրական նիւթ ունիմ, բարեւելէ ետք, ամէն բան պատմեցի անոր։

— Ձեռ գիտեր, թէ որքա՛ն ուրախացայ, — ըսի, — ինձմէ աւելի ուրախացողը, գիտեմ, Թէոտորը պիտի ըլլայ... Կ'երեւակայեմ, թէ ինչպէ՛ս աչքերը պիտի բանայ եւ, հաւանաբար, յունարէն հիւթեղ հայհոյութիւն մըն ալ նետէ անոնց հասցէին։

— Յունարէն գիտե՞ս, կը հասկնա՞ս։

— Քանի մը ըսաւ. մեծամասնութիւնն է՛ հայհոյութիւն։

— Աժժժ քեզի։

— Ինչի՞նչ ամօթն է։ Դուն չե՞ս գիտեր, թէ նոր լեզու մը սորվողները նախ հայհոյութիւնները կը սորվին... Ես չե՛մ

ըսած քեզի, թէ ինծի բախտ կը բերես... Ահա բախտ բերիք նաեւ Թէոտորին։

— Ես ի՞նչ կապ ունիմ այս բոլորին հետ...։

— Եթէ ես քեզի հանդիպելու համար առաւօտները կանուխ չելլէի, այս գաղտնիքը չէր լուծուեր։

— Ես չէի գիտեր, թէ առաւօտները ինծի համար է, որ կանուխ կ'ելլես։ Ես կը կարծէի, թէ արեւուն տաքնալէն առաջ կ'ուզես պործերդ կարգի գնել, վերջացնել։ Մնաք բարով, ուշացայ, երթամ։

— Գնա՛. երթաւ բարով։ Լաւ օր մը ունեցիր։

— Շնորհակալ եմ։

Ու գնաց։

Մինչեւ Առոյի խանութէն ներս մտնելը՝ նայեցայ ետեւէն։ Քորհեցայ իր գես չեմ գիտեր, թէ առաւօտները ինծի համար կանուխ կ'ելլեալին վրայ, ու եղբակացուցի, թէ Մենդոց Գիրքը գրողները աշխարհն ու մանաւանդ կիրն չէին ճանչնար. այլապէս Եւան չէր, որ օձէն խարուիլ կու տային, այլ օձը՝ Եւայէն։

❖

Նախաճաշի սուրճին բաժակը ձեռքըս՝ ամէն բան պատմեցի կնոջս։

— Է, հիմա ի՞նչ պիտի ընես, ամէն բան պիտի ըսե՞ս Թէոտորին։

— Սուրճա լրացնեմ՝ պիտի երթամ։ Ով գիտէ ինչքա՛ն պիտի ուրախանայ եւ, մա՛նաւանդ, զարմանայ։

— Ու հայհոյէ՛։

— Այո՛. յոյները նշանաւոր հայհոյողներ են. անգամ մը հոս, Մը Դիկի կապելային մէջ մրցում մը տեղի ունեցաւ, միջադատին մրցում մը, ու դատական կազմը, յոյնը, իրրեւ ամէնէն ինքնատիպ հայհոյողը, մրցանակի արժանի համարեց։

— Դո՛ւն ինչ գործ ունէ՛իր այդտեղւանքը։

— Դրան առջեւէն կ'անցնէի, տեսայ

բազմաթիւնը ու հարցուցի, թէ ի՞նչ կ'անցնի-կը դառնայ. երբ իմացայ, թէ մըցում կայ, մտայ ներս։

— Կը տեսնեմ, որ դաստիարակուելու համար ոչ մէկ պատեհութիւն կը փախցնես։

— Այո՛, իրաւունք ունիս, ոչ մէկ պատեհութիւն կը փախցնեմ։ Թէոտորին որ երթամ, քիչ մը քան ալ հոն կը սորվիմ. մեղք, որ թուշուները յունարէն չեն հասկնար։

— Դուն կը թարգմանես...

— Քոռ յունարէնդ իմինչս լաւ է. չհասկցածս ալ գրի կ'առնեմ կը բերեմ քեզի...

— Արդեօք թուշուները, այսինքն՝ որորները ինչպէ՞ս գիտցան, թէ հոս կորեկ կը տրուի ամէն օր։

— Շատ պարզ է. օր մը, անոնցմէ մէկը տեսած՝ ու իր ազգականներուն, ընտանեկան պարագաներուն լուր է տրւած. տեսողին կինն ալ իր քարեկտմուհիին, քարեկամուհիին ալ իր բարեկամուհիին, մօրը կամ քրոջը, ու անգամ մը, որ կնոջ մը բերանը քան մը ինչայ... Մենք ալ, երբ տղանք էինք, իրարու լուր կու տայինք, թէ որո՞ւ պարտէզը ինչ կայ հասած կարմրած՝ կամ հասնելու, կարմրելու վրայ... ու հաւաքաբար դուրսէն կ'երթայինք։

— Այդ գողութեան երթալու պատմութիւնները թողնեմուք ալ պատմէ, որ քան սորվին։

— Պատմած եմ... այնպիսի հետաքրքրութեամբ ու հաճոյքով մտիկ կ'ընեն, որ կը զարմանաս։

— Իրենց հայրը գիտէ՞ այդ պարագան։

— Երբ այդ տարիքն էր, անոր ալ պատմած եմ։ Ու Աստուածդ, սիրեա վաղ անցիլ ինծի բարոյախօսութեան դաս տալէ...

Դասի թէոտորը տեսնելու։

Դուրսը ինք բացաւ։

— Բարի լոյս, Թէոտոր։

— Բարի լոյս, դրացի. եթէ եկար, որ սգուալ զնես, չունիմ։

— Այ՛, եկայ՝ յունեանալուդ պատճառ քեզի բացատրելու։

— Իրա՛ւ, — հարցուց թերահաւատութեամբ, ձայնին մէջ հեղնանք։

— Իրա՛ւ։ Զիս ներս չե՞ս հրաւիրեր։

— Եկո՛ւր, եկուր նե՛րս։

— Այ՛, միտքս փոխեցի, ներս գալու հարկ չկայ. հոս ալ կրնամ երկու բառով ըսել ըսելիքս։

Ու յետին մանրամասնութիւնով պատմեցի ամէն քան։ Արդէն շատ ալ ծաղկադարձելու հարկ չկար զինք հաճողելու համար։

— Վա՛յ շուն շանորդիներ, վա՛յ տեսառուածներ, վա՛յ... վա՛յ... վա՛յ... վա՛յ... Ուրեմն այդպէս կ'ընեն, հա՛... Ես անոնց... մարեկներկը-գերդաստանը...

Բռնեց թեւ ու տեղէն հանելու չափ ուժեղ ու երկար թօթուեց։

— Գոյնալարոս, առաջին սգուալները որ հասցնեմ, պիտի բերեմ քեզի նըւէր։

Ու պահեց իր խոստումը։

Դէպքին տեղեկանալուն յաջորդ օրը, շատ երկար եղէգնեայ գաւազանով մը մնաց տանիքին վրայ, իր սիրելի աղաւնիներուն մօտ՝ մինչեւ որ անոնք կշտացան եւ ալ ուտուելու քան չմնաց տանիքին վրայ։ Դիմացէն տեսնելով, որ գինք կը դիտեմ, աջ թեւը վերցուց՝ ու քարեւեց զիս։ Դէմքին ժպտը ազանջներուն կը հասնէր. լա՛յն...

Երբ էլիզապէթը եկաւ, մատուցա թէոտորը ցոյց տուի։

— Եթէ կ'ուզես աշխարհի ամէնէն երջանիկ ֆարդը տեսնել, դիմացի տանիքին նայէ, — ըսի։



Հիմա դերերը շրջուած են։ Աղաւնիներն են, որ կ'ուտեն Թէոտորի վերին հակողութեան տակ ու ոյրորներն են, որ կ'ունենով կը աւաւոսնին անոնց զլիւտն վերեւ։ Ես այս տեսարանը կը դիտեմ ամէն օր, մինչեւ որ Լիլը գայ, բարեւէ,

ժպտի, ջուխտ մը խօսք փոխանակէ Հետո
ու երթայ իր գործին:

— Նորէն անուշ Հոտ մըն ես քրտ-
ւեր, — ըսի որ մը, պիտի խենթացնես
զիս:

Սրտագին ծիծաղեցաւ ու իր ծիծաղը
ջուրի կարկաշտ ունէր:

— Իրա՞ւ, սիրեցի՞ր:

— Շատ սիրեցի: Այնքան շատ, որ
չեմ կրնար բսել, թէ անիկա՞ աւելի ու-
նուշ է, թէ դուն:

— Կը յուսամ, թէ Պիլին վրայ ալ
նոյն ազդեցութիւնը կ'ընէ:

— Այդ Պիլ ըսուածը ո՞վ է, — Հար-
ցուցի:

— Մէկը, որուն Հեա նշանուելու
մտադրութիւն ունիմ:

— Դո՞ւն թէ ան:

— Ես. ան դեռ բան չէ ըսած, մտա-
դրութենէս լուր չունի:

— Խեղճ Պիլ:

— Ինչո՞ւ խեղճ, — կը բողբոջէ՞մ...

— Խեղճ չէ ի՞նչ է... Թակաբոյզ ես
լարած, որ բռնես զինք: Յաջողութիւն
կը մաղթեմ. ամուր բռնէ ուսկանիդ լա-
րերը:

— Կը կարծեմ, թէ կը նախանձիս
Պիլէն:

— Ե՞ս, նախանձի՞մ... Եւ ինչո՞ւ
պիտի նախանձիմ... Դուն ինծի ի՞նչ ես
որ...

— Ուրիշ, բան մը չեմ, բայց առա-
ւօտները փոխանակ քնանալու, ինչո՞ւ
ինծի կը սպասես:

— Եւ ո՞վ ըսաւ, թէ քեզի կը սպա-
սեմ առաւօտները:

— Դուն ըսիր:

— Ես նման բան չեմ ըսած՝ ու չեմ
ալ ըսեր:

— Աղէ՛կ: Շնորհակալութիւն: Մը-
նաք բարով...

— Երթաս բարով... Ալ առաւօտնե-
րը ճամբուդ չեմ սպասեր...

Աւ գնաց: Գնաց նախաճաշելու Ա-
տոյին խանութը:

«Յուսամ սուրճ խման պահուդ կը
խեղդուիս», անցաւ մտքէս. բայց բերա-
նքս նման սեւ անէծք չարտաբերեց. ընդ-
Հակառակն...

— Շան աղջիկը շատ սիրուն է, — ը-
սի ես ինծի, — յուսամ կը բռնէ Պիլը ու
բախտաւոր կ'ըլլայ անոր Հետ: Բախտա-
ւոր կ'ըլլայ այդ շան զաւակ Պիլի Հետ...

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ



ԱԶՆԻԻ ԳԱՐԱԼԵՔԵԱՆՆ*ՄԵՐ ԾՆՈՒՆԴՐ՝*

Կը քալեմք մենք ստաբալիկ
 փաշեթաթախ եւ փշապատ ռազմներով
 ռազմերուն տակ մեր ճգմելով
 պատմութիւնը մեր դարաւոր:
 Մեր աչքերը հեռուն,
 անհորիզոն հեռուն
 քրազներու
 յայտերու
 զուգահեռ աշխարհներ որոնելով
 պայթելու չափ կ'ուռիմ,
 անկանալու չափ կը կծկուիմ,
 ու ամբողջ արեւ մը գրկելու չափ կ'աշխիմ,
 իսկ այդ հեռուն
 մեր աչքերուն անհորիզոն
 վերածնունդ ու սաղմնաւորութիւն
 հեռուն
 կար միշտ,
 կա՛յ:

Մեր ձեռքերը բարձրացուցինք
 աստղազարդ երկնակամարին՝
 բամբասող շրթները գոցելու
 եւ վայրկեանի մը համար,
 ամէն ինչ լափիկող,
 ամէն ինչ լուսաւորող
 ու միանգամայն ամէն ինչ կիզող
 արեւը մարելու,
 որպէսզի տիրէ խաւար մոռացութիւն
 եւ այդ խաւար մոռացութեան
 յանձնեմք մենք մեզ...

Լուցկիի բոցով մը մենք կըրցանք վառել
 արեւը մարած
 եւ կարծես
 ամէն ինչ նսր-նոր կազմուեցաւ...

... Մենք այն ատեն ծնանք:

ՆԱՐՆԱԳԻՑՆ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ



Ես ,
տաղնապահար փողոցներու ճուրմ ,
ծնած արեւու վերակազմութեամբ :

Քառասուն զարշառու փողոցներէ
պայթող տառապանքները ժողովի ,
կազմեցի փունջեր ,

որպէսզի
Միսսիֆ աշխարհի բարձրակամար խորանի
նիշդ կողին

միւռնն պատրաստեմ...

Կը սարսափիմ մարդացմէ .
աչքերն անոնց՝
կախուած պարտեզներու ցանկապատերէն՝
գիրար կը հալածեն
— զիս կը հարուածեն —

Օղակած օրերը ,
համբիշի պէս կը ճաշեմ ,
ու ամէն մէկ հասին հետ
մաս մը արիւնէս , միսերէս ,
մաս մը իմ լինելութենէս
կը լուծեմ միւռնի կաթաշին այդ երաշք...

Ու աչքերս սեւեռած անտրիզոն հեռուն՝
ցայգալուսին կը սպասեմ...
Մկրտելու աշխարհը նարնգառն :

ՀԱՂՈՐԻՈՒՆԵԼԷ ԱՌԱՋ



Ի՞նչ կարօտ կայ
 հոգն այս հմլադ
 արեւակէզ փերոտս մէջ
 զոյներու ի՞նչ քափանցիկութիւն
 եւ լռչսերու ի՞նչ միրաժ .
 արիւնս շատրուաններ կը ժայթքէ
 երկրագունտին հիշող պարտին,
 սւր կը փնտռեմ քեզ, իմ սէ՛ր,
 որպէսզի
 քուրմունքովդ արեւային
 իմ թռփերու չյագեցող
 ու մխացող
 սրտերը լուստ . . .

Արշալոյսս յդի է եւ քեզմով կ'աշտանայ :

Առաւօտեան մեղմօրօք մեղեդիով արեւագալի՝
 պայրապառփուն մը անծայր
 կ'աղողէ գիւս :
 Ես իմ մարմինս անբաւարար ,
 Եր իր հունէն ժայթքած է դարս ,
 իմ աչքերուս հուր ճառագայթներով բեղուն
 քու բիբերուդ
 քիտի անձրեւեմ ,
 որպէսզի ասքինք . . .

digitised by A.R.A.R.@

ԴՌՈՆ՝ ԱՅՐՈՒՐԵՆ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆ



Դուն փողոցներու եռեւեփող թնակիչ,
 եղէգներու ետեւ դրուած փարաւոնեան զամբիւղով՝
 ժամանակի յորձանուտին նետուած նաւորդ,
 Հերի՛՛ք է ալ,
 ժամը հասաւ
 մէկն երկուքէն զոհելու...

Թէնւ մամուկ,
 Այսուհանդերձ լատտեղեակ ջրվէժներու ահագնացող վտանգին,
 Կը նաւարկես յամառներու անհամար ծայրայեղութեամբդ գինով...

Տե՛ս
 Ես կը խաղամ մետրապառնոյն ու հեզաստի ջուրերուն մէջ նայիրեամ,
 Ուր դուն կ'ըլլաս բեզմնաւոր շունչ եւ աշբուքն կենսապայման:
 Բայց եւ այնպէս՝
 արիւթեամբ կարծեցեալ

Կը հասիս մերթ տափաստաններու ամուրթեան մէջ ուղիտակ
 եւ մերթ ինչպէս խեղճ մտնչուկ,
 Կը տատանուիս յորձանուտին ժամանակի...

ԱԶՆԻԻ ԳԱՐԱԼԷՔԵԱՆ



Բ. Կ Ռ Ա Ն Ե Ա Ն

Տ Պ Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ճամբայ էլած եմ ժողովուրդները դանելու։ Միշտ թանգարաններն են մեր հանգրուանները։ Հոն է ժողովուրդի մը ողին՝ խառնած, բիրենդացած, սեւեռած բոլոր ժամանակներու համար։ Բայց թանգարանները անկենդան րան մը ունին։ Դասաւորուած ու դասակարգուած, թուագրուած, պատկերուն կախուած։ Անցեալն են։ Ձեն շնչեր եւ ազրիւր, գործողութեան մէջ չեն։ Հիմա՛ն չեն, կեանքը չեն։ Ուստի՝ ժողովուրդը կը փնտռեմ։ Ան՝ որ ծնունդ տուած է Փրատոյին եւ անոր անմահ բովանդակութեան։ Կը սպասէի, որ սպանացի տարբեր ըլլար, բայց քեզի եւ ինծի նման էակ մըն է։ Միակ տարբերութիւնը լեզուն է։ Ապա կը ժտանեմ, որ տօրեայ կեանքը ամէն տեղ նոյնն է։ Ներսն է, որ կը կատարուի մարդկային կատակերգութիւնը։ Պայքարի, տառապանքի, սիրոյ ժամանակ։ Ճակատադրասպաշտ ընդհատումներու, կեանքին կառչելու, հաւատքի կամ հերոսութեան պահուն։ Բնութիւնը եւ բնազդները ընկճելու։ Կեանքի խորհուրդը վերլուծելու։ Եւ մահուան անջնակ։ Հոն է, որ տարբեր են ժողովուրդները։ Պատմութիւնը կ'արձանագրէ, արուեստը կը սեւեռէ։ Բնութիւնը կը պահէ աշխարհադրական միջավայրը։

Կը փնտռեմ հողը, երկիրը, կլիման։ Ժողովուրդը եւ իր միջավայրը անբաժանելի են։ Եղիպտացին, իտալացին կամ հայը, եթէ աշխարհադրական հիմնովին տարբեր միջավայրերու մէջ հաստատուած ըլլային, նոյնը պիտի ըլլա՞ր իրենց բովանդակ կեանքը։ Եւ էութիւնը, արուեստը։ Երեւակայեցէք «հսկայ» բուրգերը Հայաստանի լեռնաշղթաներու դանդաղածին դիմաց, կամ Հայաստանի գոգտրիկ, զտաշուածքի նման եկեղեցիները անսահման անտառայտին մէջ։

Կարճ. եւրոպական մեծ մայրաքաղաքները այլասերած, միջազգայնացած եւ իրենց հողին ծախած են։ Տեղական գոյնը, ոճը անհետանալու վրայ

են: Փողոցները կը վխտան ամէն ազգի գրասարքիկներով, մասնաւորաբար ամերիկացիին: Կը լսես բոլոր լեզուները: Տեղացին այցելուէն չեւ կրնար զանազանել:

Ուստի՝ կ'ըսեմ կնոջ, երթանք Սպանիան փնտելու: Ինչքան որ կրնանք: Յերեկը կ'այցելեմք Հին Թաղերը: Մտարիաի կեդրոնական հրապարակը — Պուերտա Տէլ Սուլ (Արեւի Դուռ), ահունը շարդարացներ անշուշտ: Կը թափառինք նեղ, արարական մոթիֆներով զարդարուած փողոցներէն, կը հասնինք Փլազա Մայոր հրապարակը: Գոց, չրջապատուած շէնքերով եւ ինք կամարակապ դուռներով: Մտարիաի Վերածնունդի օրերուն, կեանքը կ'ուար հոս: Յլամարտներ, մրցումներ, հանդիսաւոր թափօրներ եւ տողանցքներ: Աւելի ուշ, հաւատաքնութեան պատիժները կը զործադրուէին նոյն վայրին վրայ, ուր երբեմն երաժշտութիւնն ու պարը կը թրթռային: Մինչ բացօթեայ ճաշարանը նստած, կ'ըմպենք դիւին, այս գորշացած քարերը, արեւմտեան եւ արաբական ոճի նշմարները, անցեալը հարուստ, կերպով մը ողիներու եւ հին ձայներու մթնոլորտ մը կը ստեղծեն:

Տիեզերքին մէջ ոչինչ կը կորսուի:

Զայեւրը, զէմքերը, գործողութիւնները:

Պահ մը կը զգամ, որ Սպանիա եմ: Փրատոյին եւ այս հրապարակին, լուրջ գարձող մարդոց եւ միջոցին միջեւ կապ մը կը տեսնեմ: Վերաբեցը, կոյան կենդանի են, ա՛յո Սպանիան են, ա՛յո կեանքը: Խոսքով, խորհրդանշուած, զեղեցկացած:

«Չիսիտա»- Յլամենկո ճաշարան: Կը պատեմ Ջուպլին, թէ անցեալ այցելութեանս որքան տալարուած էի եւ գրած Յլամենկո արուեստի մասին:

Զեմ գիտեր, մարդ տարիներուն հետ ի՞նչ կը փոխուի, թէ աշխարհը: Մտփերը, կիթառը, արարական ոճով երգը, պարը — նոյնն են: Ոգին թռած է: Մեքենական, առեւտրականացած: Կրկնութիւնը ինքնին թշնամի է արւեստին: Առանց վերանորոգումի, վերանորոգումի մահ է: Ստեղծագործութիւնը արարութեան հիմնական սկզբունքն է: Ո՛ւր տաղանդը բացակայ է, արուեստը կ'այլաւորի:

Դժգոհ կը մեկնինք: Յաջորդ օրը կը փորձենք «Դորրէս Պարմեթա»-ը: Կ'ըսեն աւելի լուս է: Գեանայարկ սրահը կը սիրեմ: Պատերը արապիսկ յախահապակի, ձեղունը՝ նոյն ոճով: Մթնոլորտ մը կայ: Առաւել կամ նուազ, Յլամենկոյի յայտադրը նոյնն էր, ինչպէս նախորդ դիւեր: Տարիներ առաջ երբ կը գրէի, նկատած էի, որ Յլամենկոյի մէջ երաժշտութիւնը միայն մրթնոլորտ կը ստեղծէ եւ երբեմն կը մտնէ ընկերակցողի դերին մէջ: Պարողը ինք, իր ոտքերով կը ստեղծէ իր կշռոյթը: Ասոնք, այս շարուած աղջիկները, այնքան բարձր կը ծափահարեն ու կ'աղաղակեն, որ պարողի ոտքերուն շրջիջը կը խեղդուի: Դեռ աւելին. պարերու զառութիւնն իսկ խաթարուած է: Պարասլաղի աժան շարժումներ, կոնքի, սրովայնի եւ ստիքներու խայտաշուքներ: Ժաշը դէշ է, դիւին՝ աժան, պարը՝ անհրապոյր: Յանկութիւն յարուցանելու ասանակին ձեւերը անշուշտ մեր դարու մոտան են: Եարժանկարի, բեմերու եւ այլ տխրահոյակ վայրերու մէջ սեռային զրպիտ, մերկութեան եւ կիթի ցուցադրութիւն եւ դեռ շատ աւելին, — աղատօրէն կը կատարուին: Օսքար Ուայտի խօսքը. «Արուեստը կը վերջանայ հո՛ն» ուր կը ոկսի գոհակութիւնը: Ի վերջոյ, բոլորին նպատակը — հաճելի ըլլալ ամբողջին: Ամերիկացի այցելուներ կը կերակրեն Եւրոպան: Ամերիկացին խտջալ որան է. լեցուն գրպան, արուեստի զգայարանքի բացակայութիւն եւ Ամերի-

կայէ դուրս, աշխարհի մնացեալ մասին դիմաց կատարեալ տպւորութիւն։ Ինչ որ կը տեսնէ պարզապէս դժայլելի է, «այս աշխարհէ դուրս»։

Երեկոյեան միակ զուարթ նոթը այն է, որ խուժրով եկած ենք։ Աշխարհի բոլոր ծագերէն միասին հաւաքուած մարդիկ ենք։ Հիանալի է։ Երբ նախադաշարումներ գոյութիւն չունենան, պարմանալի է, թէ ինչպէս շուտով կը մտնումնան մարդկային էակներ։ Ոչինչ գիտես իրենց մասին, միայն իրենց անհատականութիւնը եւ ներկայութիւնը։ Իսկական միացեալ ազգերու կազմակերպութիւն։ Զոյգ մը Նոր Աշխարհային, Գերմանիային, Ֆրիւիֆիններէն, Ճափոնէն, Սօվիետական, եւայլն։ Ամէնէն աշխարհը՝ դերմանուհին է։ Հոկայ, խարտեալ, կարմիր երեսներով, շատախօս, հաղորդակից եւ միշտ ծրագրել բերին։ Ամուսնի՝ ամուսնի, պորը հակ մը, սակաւախօս եւ միայն ուսնելով ու խմելով զբաղած։ Նոր դիւնաւորները պատահական, բայց օգի եւ հողի մօտ ապրող մարդիկ։ Բացառիկ, ազնիւ, անարատ։ Ֆրիւիֆիններ ակնոցներու ետեւէն միայն կը դիտէ։ Երբեք չի խօսիր։ Կիրն աւելի մարդաւոն է։

Յայտարարի վերջին պարոզը, «օրուան ատուր», շնորհալի եւ խղճամիտ պարոզ մըն է, որ կը գրաւէ հանդիսականները։ Ձափազանց նիհար է եւ վիշաւորական կերպով իդրացած։ Գերմանուհին բնաւ չի դիտեր։

— Հաւաքոյն պարոզը փախցուցիք, — կ'ըսեմ։

Ուսերը կը թօթուէ. «մի՛ ճաշակիւ չէ»։

Ինչ որ կը սիրեմ սպանական պարի մէջ, առնականութիւնն է։ Յուշը միշտ ներկայ է, ինչպէս փիղը Հնդկաստանի մէջ։ Ինձի համար միշտ անհաճոյ է տեսնել այդ պարողները — անարիւն, չպարուած եւ իզական։

Ներկայացումը վերջացած է։ Կրկին յուսախար կը մեկնինք եւ կ'ուզը լինիք «Բասարոկա» գիշերային ակումբը, ուր, այս անգամ, պիտի տեսնենք սպանական ազգային պարերը, սպանական ազգային պալէի անդամներու կողմէ։ Շատ մեծ ակնկալութիւն չունիմ։

Մեզ կը բազմեցնեն սեղանի մը շուրջ եւ ռեմիթապէս կը լեցուին շամփանիայի բաժակները։ Միշտ կը նախընտրեմ գինին կամ ուիսքին։ Շամփանիան եւս կեղծ է, պղպղուն գինի է պարզապէս։ Ինչեւէ։ Մութ, օգը ծուխէն ապականած, պղինձներու մէջէն բարբարոս կանչեր եւ երգիչի մը բերնի բացուածքէն, ուր բարձրախօսը մինչեւ կոկորդը ներս մտած է, հոգիւններ դուրս կու գան։ Քանի օր է Մատրիտ ենք, տեւաբար ճաղ կը լսենք։ Հարիւր տարի առաջ բոնի Ամերիկա գաղթած փոքրիկ երեքները, այսօր իրենց եւ բաժնութիւնն ու կշռութիւնը պարտադրած են Միացեալ Նահանգներուն եւ Արեւմտեան աշխարհի։

Ճագր կը վերջանայ, իրենց մասնին սեռային մասերը շարժող զոյգերը կը նստին ու կը սկսին բուն ներկայացումը։ Նախամուտը կը նուազուի լուրջ եւ օժտուած նուագախումբի մը կողմէ։ Զուտ սպանական։ Պարը կը սկսի։ Զոյգերը զգեստաւորուած ազգային ոճով, ճաշակ, բնականութիւն եւ Ֆրիլիքական գրաւչութիւն։ Միջնորարը հիմնովին կը փոխուի, կը լրջանայ, կը լարուի։ Տափակութիւններու աչք գոցող, կապիկութիւններու խնդաղող, միջակութիւններէ յոգնած բազմութիւնը կը զգայ գեղեցկութիւնը եւ երկնաւոր է անոր առջեւ։ Սխալ է ըսել, — մարդիկ չեն հասկնար։

Երկու զոյգ բամբուկներով, լայն փոթաւոր շրջազգեստներով, մազերը ճակատէն ճեղքած, հաւաքած գլուխներու ետին բարձրագիւր սանտրերու տակ, իրենց ձեռքերով, թեւերով, մարմիններով, մանաւանդ ոտքերով, կը լեցնեն միջոցը շարժումով ու կոտորումով։ Տաք, սիգարետ, Արեւելքէն լոյ-

սեր պողցած, կշռոյթ մը, որ բամբակներէն, ոտքերէն աւելի էութիւններէն կը ցայտէ։ Ու կը պարեն, անդադար։ Եղանակներ կը փոխուին, կշռոյթն ու տարազները կը փոխուին, պարը կը շարունակուի։ Գրանատա, Վալենտինա, Միփիյա, ցլամարա, Կոյա եւ Սերփանդէս։ Սպանիա։ Ժողովուրդի մը հոգին, որ իրն է, միայն իրը, անձեռնմխելիօրէն։ Կարելի է մարմինը սպաննել, բայց ոչ հոգին։ Հոգեկան կարգը, գոթական բարբարոս թարմութիւնը, արարական հելատութիւնը, հրէական կրօնական ուղղափառութիւնը։ Այս բոլորը եւ աւելին միախառնուած սպանական հոգիին եւ անոր արտայայտութեան։

Վայելք մըն է պարը, որ կը շարունակուի, կախարհանքը կը ծաւալի։ Պարողները գինուցած են, քրտինքը կը հոսի ճակատներէն, կոտորները կը հեւան, աչքերը կը փայտաւանդեն, բայց մարմինները կը դառնան հոյովոյթին մէջ, ուր ձայներ, բամբակներ, թրթռացում եւ կեանքի տէրը, որ կրնայ վերջ շունենալ։ Կամ՝ անցաւորին յուսահատութիւնը եւ ապրելուն հաճոյքը, իրենց ընդհարումին մէջ, մոլեգին թափ մը կու տան էութիւններուն։

Խմբապարներուն կը յաջորդեն մենապարները։

Մէկը։ Երբեք պիտի չմոռնամ։ Յուան Սիւրա։ Սեւ աչքերով, գեղեցկազէմ երիտասարդ։ Անհնար է մոռնալ։ Պար մըն էր, շեմ դիտելու ոճը (յայտապիր շկար), բայց վստահ եմ մեծ մասով ինքնարուեստեղծութիւն էր, ծանօթ թեմայի վրայ։ Այստեղ պարը, հակառակը Ֆլամենկոյի, ուղղակի երաժշտութիւնն էր ըսելի։ Նախ երաժշտական յղացումը, ապա՝ պարի կառոյցն ու արտայայտութիւնը։ Երբեմն, երջանիկ պահու մը, արուեստագէտը ո՛չ միայն կը տիրապետէ իր նիւթին, անոր կարելիութիւններուն, իրեւ մարդկային էակ — որ սահմանափակ է, — այլեւ իրեւ աստուած, որուն ստեղծագործութիւնը անսահման է։

Յուան Սիւրա այդ դիւեր երկինքէն պողցած էր կրակը։ Երաժշտութիւնը, իր պարը, մարմինը, դէմքը, կշռոյթը, զղացումը, պահին հետ դիտելուն ու խոյանքը եւ, այս բոլորէն անդին, ներքին էութիւններու եւ կեանքի խորհուրդին թափանցումը — իր պարը վերածեցին նուաճումի մը, որուն կախարդանքին տակ խայտափայտ սրահը։ Հողէն կարուած, իրականութիւնէն վեր տարածութեան մը մէջ կը շարժէր։ Պահ մը, Սպանիան քողը վերցուց աւազերուն վրայէն եւ դէմ յանդիման եկանք իր թաքուն գեղեցկութեան։ Պահ մը։

Կէս դիւերը վաղուց անց էր, երբ վերադարձանք մեր պանդոկները։ Ֆիլիփինոն, որ ամբողջ գիշերը բնաւ խօսած չէր, երբ կ'իջնէր ինքնաշարժէն, բոլորին առջեւ, բարձրաձայն գոչեց։

— Good night, German:

Բոլորը ծիծաղեցան, զերմանուհին բոլորէն բարձր։

Կիրակի է։ Արդէն զնած ենք տոմսերը։ Կորրիտա։ Յլամարտի պիտի երթանք, մեր կեանքին մէջ առաջին անգամ։ Անշուշտ շարժանկարի մէջ յստահաւ տեսած ենք, բայց ասիկա բուն իրականութիւնն է։ Յլամարտ տեսնելը միշտ վարանում մը արթնացած է մէջս։ Միւս կողմէ, թատերական, առնական ու վիպային հմայք մը ունի։ Ուրիշներէն տարբեր լըլլալու եւ անգամ մը տեսած ըլլալու համար, կ'երթանք։ Փլազա տէ Թորոս։ Հսկայ բազմութիւն, մեծ թիւով դրօշաւորներ։ Ամէնէն սպաւորիչը տողանցքն է, որով կը սկսի ներկայացումը։ Միտքս կու գան Հէմլինկուէյի զբուածքները։

Տպաւորիչ է: Նուազարուժը, ցլամարտիկներն ու օգնականները իրենց չքեղ տարագներով:

Մարտը կը սկսի: Յուլը մթին դոճէն դուրս կը նետուի դէպի կրկէս, սպառնական ու ջղալին: Միրաբանութիւնները կը սկսին, ցուլը դրդուելու եւ յողնոցներու համար: Թեթեւ նիզակներ կը մտնին վզին ու մարմնին: Ապա՝ միւս վրայ կու գայ քեկկատարը, իր նիզակով: Ձիուն կողքը պաշտպանուած են միւսականերով: Բեկկատարի պարտականութիւնը ցուլը վերստին է, առանց ցուլը միւսն ժողովելու: Առաջինը կը յաջողի նիզակը խրել ցուլի քամակին եւ լաւ մը վիրաւորել կենդանին, նիզակի ծայրով յօշոտելով միւսերը: Արեւը կը մտնէ եւ անասունը ցաւին մէջ կը մոլեցնէ: Ապա՝ կու գայ մաքաւ տնայը, նախ ցուցադրելու իր արուեստը, ապա՝ սուրը խրելու ցուլի ճակտին: Ժողովուրդը խելայեղ կը ծափահարէ: Յուլը հողմմարքի դաւարումներէ ետք, կ'իյնայ անկենդան: Կու գան եւ դիակը քաշկռտելէն կը հանեն կրկէսէն դուրս:

Մարտը կը վերսկսի, աւելի հզօր ցուլի մը հետ եւ աւելի հմուտ ցլամարտիկի: Ամէնէն միրաւորականը եւ նուաստացուցիչը այն է, որ հզօր եւ հպարտ կենդանին կ'ենթարկուի ամէն տեսակի նուաստացումի, ապա՝ արեւելուայ միւսակի մէջ կ'ենթարկուի մաթատորի վերջնական հարուածին եւ եթէ հակառակ ատոր, դեռ իր ուժին մէջ կը մոլեցնէ ու կը շարունակէ ագրէլ, դինջ պարպալէս կը խողխողեն սուրերով:

Խորհանք կը զղանք եւ դուրս կ'ելլենք, առանց մնացեալին անանատես ըլլալու: Թետոյ, զարեթ է վեր կրկնուած, ճանձրոյթ մը կայ, անակնկալի եւ նորութեան կատարեալ չգոյութիւն: Առաջին ցլամարտը Ապանիոյ մէջ տեղի ունեցած է 1300ին: Անկէ ըստ դարեր առաջ, Կրեմէի մէջ գոյութիւն ունէր: Իր դեղեցկութիւնն ու հմայքը այլեւս կը մնան արուեստի գործերուն մէջ: Կոյա:

Ամէն անգամ, որ դժկամակութեամբ կ'երթաս վայր մը, գոհ կը մերսդանաս: Արքայական պալատները դիւ չեն հետաքրքրած: Եւ տարիներ առաջ, երբ Եւրոպայ էի, ո'չ Ապանիոյ, ոչ ալ Վերսայլի արքայական պալատները այցելած էի: Միայն տեսութիւնը անցած է արդէն եւ պալատները յաճախ ժողովուրդի կեդեքման եւ արեան գինը ունին իրենց վրայ:

Բայսսիօ Բէլալ տէ Մատրիտ քաղաքի կեդրոնն է: Հսկայ, տպաւորիչ: Կինն կ'ըսէ. «Երթանք տեսնենք արքայական պալատը»: Երբեմն պէտք է կնոջ խօսքը մտիկ ընել: Գոնէ տարին քանի մը անգամ: Անոնց քնազգը աւելի հզօր է եւ իմաստուն:

24 Դեկտեմբեր 1734ին, հրդեհի գոհ կ'երթայ Ալեազարը: Արքայական տոհմը Աւստրիոյ Տունէն փոխանցուած է Պուրպոն գերդաստանին: Ծիլիպ Ե. կ'որոշէ նոր պալատ մը կառուցանել, որ պիտի ըլլար ամենաչքեղը Եւրոպայի: Նոր պալատը պիտի շինուէր այրած Ալեազարի վայրին վրայ: Մօտ քսան վեց տարի տեւեց շինութիւնը: Շքեղութեան յաղթանակ մըն է: Զարդանկարչութեան, նկարչութեան, արձաններու, գորգերու, ջահերու, մետաքսի, ամրամարի եւ կարասիի: Յատկանիւներէն մէկը՝ այլադասութիւնը: Ամէն դաշիւհ, ամէն սենեակ գոյնի, ոճի ներդաշնակութեան տարրեր ու հակադիր նուաճում մըն է: Երկրորդ բարեբախտութիւնը, — նոյնպէս Վերսայլի հակառակ, — պահուած է իր ամբողջութեան եւ մանրամասնութեան մէջ, անմիջապէս կենդանի: Վերսայլի մէջ էր տիրապետէ ոճի նոյնութիւն եւ, դժբախտաբար, յեղափոխութիւնը կողոպտած է իր գանձերուն եւ չքեղութեան մեծ մասը: Թէեւ վերաւոր, բայց յաւէտ գեղեցիկ:

Պատմութիւնը երկար պրած է աշխարհի թագաւորներու մասին եւ ար-
ձանադրած անոնց յաղթանակները, պարտութիւնները, առաքելութիւններն
ու սփիւնները, բարի եւ վատ գործերը: Միապետութիւնը արդէն կ'ապրի իր
հոգեւորքը: Կարելի է սակայն յայտարարել անվարան, որ թագաւորներն ու
ազնուականները, — հակառակ իրենց բոլոր յոռի ունակութիւններուն եւ ու-
նիւններուն, — ճաշակի եւ գեղեցկութեան զպացում ունէին: Բրաւո թանգա-
րանը ամբողջովին կը պարտինք սպանական արքայական գերզատանին: Ո՛չ
միայն քաջակերպներն իրենց ազգային հանճարները, այլեւ երբ սպանական
առաջնորդ ամուլ չըջանէր անցուց, ներածեցին այլ երկիրներէ: Իտալական,
Փլուման, Հոլանտական, գերման:

Այս չքեղ պալատը եւս իրենց ժառանգութեան մասն է: Նոյնն է պա-
լատն ամէն տեղ: Աշխարհի իշխանները, քաղաքական եւ հոգեւոր, երկրա-
դուար լեցուցած են գեղեցկութեամբ: Ունիւնները, այլասերումը, աւերում-
ները անցած են, — մնացած է գեղեցկութիւնը: Փաղաքակրթութեան ծնուն-
դին եւ զարգացման մէջ մեծ դեր է խաղացած անտեսականը: Դրամադուրը
եւ արուեստը քալած են ձեռք ձեռքի: Ապսպրանք, նիւթական միջոցներու
հայթայթում եւ հանճարը կը ստեղծագործէ: Գրեթէ արուեստի բոլոր մեծ
գործերը ապսպրանքներ են: Բարեբախտաբար, աշխարհի իշխաններն ու պա-
պերը յարգած են արուեստագէտին ստեղծագործելու անձեռնմխելիութիւնը:
Իրենց օժանդակութիւնը եղած է նիւթական: Մշակոյթներու բարգաւաճումն
ու վերելքը զօւղագիպած է քաղաքական բարգաւաճ եւ Հզօր չըջաններու:
Բելիկլէս, Օղոստոս, Եկեղեցին, Վերածնունդը, Յուստինիանոս:

Մատրիտի արքայական պալատին մէջ, ի մասնաւորի կը սիրեմ Գաս-
պերինիի սրահը: Զինական մօթիֆներով նկարադարձուած սրահը, արդիա-
կանացած իր ժամանակի Բողոքո ոճաւորումով, ինքնատիպ նուաճում մըն է:
Երազային մթնոլորտ մը: Հեռաւոր կայքերու յանձններ:

Տոլեաո: Հպարտ բարձունքին: Սեպաձեւ ժայռերը կախուած Տակոս
դետի վրայ: Արձանի նման չոր, կանաչութիւնը բիծերով նկատելի: Վերը,
քաղաքին կիշխն Ալքալտը՝ իր հսկայ զանդուածով եւ Գոթական մայր ե-
կեղեցիի աշտարակը: Եւ այս նիւթեղէն եւ տեսանելի կոթողներու ետին,
էլ Կրէքոյի սպին: Տոլեաո եւ էլ Կրէքօ անբաժանելի են: Սպանիոյ երբեմնի
մայրաքաղաքին հմայքը չէ, որ կը քաշէ մեզ: Այլ ուխտի նման զպացում մը:

Մատրիտէն ճամբան հաճելի է: Կանաչ տարածութիւններ, մրգասա-
տան, կապոյտ ձիթենիներ, գիւղեր: Եւ ահա, հորիզոնը կը բարձրանայ եւ
Տոլեաոն երկնքին դիմաց: Անմիջապէս կը յիշեմ էլ Կրէքոյի քնանկարը:
1085ին, Ալֆոնս Դ. եւ իր վիպային սասպետը՝ էլ Սիւս, յաղթական մտան Տո-
լեաոյի դուռներէն ներս:

Քաղաքը ոճերու խառնուրդ մըն է: Տեղ-տեղ կը հանդիպին արաբա-
կան կառոյցներու կամ տեղական ոճով շէնքի մը վրայ, արաբական մոթիֆի
մը: Միւսէնճար ոճը զղալի է: Մինչեւ իսկ գոթական մայր եկեղեցիի վրայ,
հակառակ անոր, որ սպանացիները ուզած են զուտ քրիստոնէական ոճով կա-
ռոյց մը կանգնել: Որմնադիրներու մեծ մասը եղած են արաբներ եւ իրենց
կնիքը թողած են: Կարծես, քաղաքը հարստացած է այս այլազանութիւնէն:
Աւելի նկարչագեղ է: Եւ կոյս: Պահած է իր հին ու միջնադարեան միջնադար-
ը: Արգիլուած է Տոլեաոյի մէջ արգիական ոճով շէնք կառուցանել: Նոր
քաղաքը վարն է եւ հեռուն, դետին միւս կողմը: Տոլեաոն սակայն, հինցած

և աշխատող վիճակ չի պարզեր։ Ինչ որ պահանջ է, կը պահուի լաւ վիճակի մէջ, մաքուր, ճաշակաւոր։ Նեղ փողոցներ, ուրկէ ինքնաշարժներ չեն կրնար անցնիլ։ Պատշտամներ իրարու դէմ, արաբական ասեղնագործ փեղկեր, խորհրդաւոր ու վիպային։ Սալայատակ, ուրբուն, բարձրացող եւ իջնող փողոցներ, որոնք երբեմն սիրուն հրապարակներու վրայ կը բացուին։ Մտներ, ծաղիկ, բացօթեայ սրճարաններ։ Կարճորակ աղիւսեայ եւ կամ քարաշէն շէնքերը մերկ են դուրսէն, հին կամարակապ դուռը կը բացուի եւ ներսը՝ դմբուխ կանաչութիւն եւ գունազէղ ծաղիկներ։ Շրջապատուած կամարներով եւ սիւներով, մթին նոճիներով։ Աշխարհէն կտրուած, իսկական մենաստաններ վայելքի։ Ոչ ոք կրնայ երեւակայել, որ այդ դրեթէ անհրապոյր ճակատներու ետին այսքան հրաշք կրնայ պարփակուիլ։

Տոյետոյի փողոցներէն կը բարձրանանք եւ տարօրինակ զգացում մըն է — թէ եւ շէնքերը հին, բայց թարմութեան տպաւորութիւն մը կը զգամ։ Նախնական, մաքուր եւ անխաթար ձիւղ հակառակը մեր մեծ քաղաքներու արդիական զոյութեան։ Մթնոլորտին մէջ խորութիւն մը, կեանքի խորհուրդին աւելի մօտ եւ, ինքզինքիդ աւելի մօտ։ Կը զգաս, կը մտածես, կը հըրճուիս։ Տաղտուկներն ու ապակաշակներ հոս չեն հասնիր։

Սպանիա եւ։ Կը զգաս այդ։ Էլ Կրեթոն միշտ հետդ կը քալէ։ Պատկերներ, տեսիլներ կը յաճախեն երեւակայութիւնդ։ Մինչեւ իսկ կը լսես բամբակներու եւ կիթաւներու երգը։ Կը զգաս, որ այս փակ փեղկին ետեւէն զոյգ մը բոցավառ աշքեր քեզ կը դիտեն։ Իրարու վրայ կոթնած տուններ կը դրկեն քեզ։ Թաղար մը քերթուած է կտրծես։ Գունազէղ տարազներ, նուէրի խանութներ եւ երգչիկ հրաւերներ։ Յախճապակի, նկար, արձան, «տաճաքին» զոհարեղէն։

Կը կանգնիք մեծ «Բաթէտրայի» առջեւ։ Եկեղեցին է սիրտը Սպանիոյ։ (Եւ Իտալիոյ)։ Գոթական կառոյց։ Ինչպէս այլ տեղեր, ոճերու խառնուրդ մըն է։ Տարբեր արուեստագէտներ, տարբեր ժամանակաշրջաններու, դրած են իրենց շրջանի կամ իրենց նախապրած ոճի կնիքը։ Սպանական եկեղեցիներու թերիներէն մէկն է, կ'ըսէ մեր առաջնորդը, զպրաց դասի դիրքը, որ կը գտնուի եկեղեցիին կեդրոնը եւ կառուցը կը բաժնէ երկուքի։ Երբ ներս մտնես, շէն կրնար ընդգրկել ընդհանուր միջոցը։ Խորանն իսկ չ'երեւիր։ Տոյետոյի մայր տաճարը Եւրոպայի գոթական մեծագոյն եկեղեցիներէն մէկն է։ Ինչպէս յաճախ, մանրամասնութիւններու, զարդերու, արձանաքանդակներու առատութիւնը կը խաթարեն ամբողջին պայծառութիւնը։ Մօտէն հրաշալիքներ, ընդհանուրին մէջ՝ խճողում եւ տարտամութիւն, որուն զժրախօսողն կ'անդրադառնայ լռյալ պակասը։ Կիսամութիւն աշքերդ պիտի խարխափեն, բիւրեղ ընդլայնին, որպէսզի տեսնես գեղեցկութիւնը։ Ձգացումի, արտայայտութեան ճոխութեան, յղացումի եւ յօրինուածքի պոռթկում մըն է «Թրանսփարանդէն»։ Գալարուող սիւններ, բոցեր, ալիքներ, ծփացող ամպեր, կիսամութէն դուրս արձակուող ճառագայթներ, արձաններ, պրոնդէ քանդակներ, լռյալ՝ որ կ'իջնէ վերէն բացուածքէ մը, — խորհուրդի, զղացումի խտութեան, գիծերու եւ ձևերու յայտնութեան, հզօր ու բազաղարուածք յօրինում։ Գրեթէ ամբողջովին ճենովական գունաւոր մարմարէ։

Ահա գլխաւոր խորանը եւ ետին հսկայական «բէրէտո»։ Ոսկիի, նըրբին քանդակագործութեան, գունաւոր արձաններու դաշնաւորում մը, որ կը յանդի վերը սրակամարներու եւ երկնքին բացուած երկնքանդ պատուհաններու։ Գեղեցիկ՝ իր քառակուսի հատուածներուն, սլացիկ գծերուն, ոսկիի

մէջ պաշտպանող արձաններու կանախն եւ կարծրին, ինչպէս նաեւ ամբողջութեան մէջ, որ զմայլելի կայքերու բացուող գոռո մըն է կարծես:

Տաճարին նկարչական բաժինը առինքնող է. սպանական մեծերը, Թիցիանո, Դրիզդորէտտո, Ռաֆայէլ, Վան Տիք, Պելլիքի եւ ուրիշներ:

Անհամար եմ, կ'ուզեմ հասնիլ Ս. Թոմէ: Հոն է էլ Կրեթոյի Վոմս Օրկադի քաղաւմը, որ շատերու կողմէ կը նկատուի իր գլուխ-գործոցը: Նոստարաններ չարուած են, բոլորը պրտուած: Ի վերջոյ, կը տեղաւորուինք տեղ մը: Հին կառոյց մըն է, պատերը դորշ: Նկարը հոռ է, մեր դիմաց: Հանդիսականները յառած են անոր, կարծես թատերական ներկայացումի մը ներկայ ենք: Տարօրինակ զգացում մըն է: Հոս եմ, ոչմ դիմաց: Այնքան բաժնեմ, այնքան տեսած գունաւոր արտապայմաններ: Բոլորը ըսած են, որ գլուխ-գործոց է: Հիմա, կը մնայ այս բոլորը ընդունիլ պարզապէս, բաւ ինքզինքիդ, որ տեսար դայն, բուն գործը: Բայց այս բոլորին մէջ արուեստական, անհանգստացնող բան մը կայ: Անակնկալի, միջուկումի, որոնումի, գեղեցկութիւնը քու միջոցներով գտնելու եւ մայրելու հաճոյքն զրկուած ես: Գարծես բոլորը սպուշ աչքերով կը դիտեն պարզապէս, հաւանաբար առանց տեսնելու: Ժամանակ է պէտք եւ աստիճանական կեդրոնացում, նկարի մըթնոյտին եւ զայն ընդունելու արամագրութեան մէջ մտնելու համար: Կ'ուզէի առանձին ըլլալ: Գեղեցկութեան հեղինակութիւնն ու հաստատուած համարուելու ընդունիլը եւ զայն վերլուծելը, իր արտաքին եւ ներքին արժէքներուն թափանցելը տարբեր բաներ են: Գեղեցկութիւնը կը զգտնէ բոլորս, դժուարութիւնը կը սկսի, երբ կը ջանանք վերլուծել զայն: Ինչո՞ւ արուեստի գործ մը գեղեցիկ է: Կը կարծեմ, որ բուն գեղարուեստական մայրցիւղն ալ կը սկսի այս կէտէն: Գտնել արուեստագէտին տեսիլը, զայն արտայայտելու եղանակները, յորինուածքը, ձեւերու, գիծերու եւ գոյնի կառոյցը: Իր սեփական լեզուն: Եւ այս բոլորին ետին արտփող յաւերժական երազը: Իրը, միակը տիեզերքին մէջ, խտացնելով իր մէջ ժամանակն ու միջոցը, իր անմահ անձը: Այս երեւոյթը ահաւիտեան բարդ է:

Էլ Կրեթոյի նկարներուն մէջ մասը գորշացած է կարծես, գոյները սմոյն են եւ կը զգաս, որ անբնական բան մը կայ: Կարդացի տեղ մը, որ արուեստագէտին գործածած ջնարակը կորսնցուցած է իր թափանցկութիւնը եւ ժամանակի ընթացքին գորշանալով խաւ մը կապած նկարին վրայ: Վոմս Օրկադի քաղաւմը եւ Տոլեւոյի մէջ գտնուող միւս նկարները պահած են իրենց սկզբնական գոյներու պայծառութիւնը:

Նկարիչը մօտ քառասունըւնիք տարեկան էր, երբ աւարտեց Վոմս Օրկադի քաղաւմը: Հասած էր իր արուեստին լիութեան: Լուծած էր բոլոր խնդիրները, ձերբազատուած արտաքին ազդեցութիւններէ եւ ստեղծած իր սեփական ոճն ու զպրոցը: Նոր, եզակի: Լիովին կը տիրապետէր իր նիւթին, միջոցներուն եւ տեսիլին: Վեներական, հռոմէական ազդեցութիւնները իւրացուած էին իր հզօր անհատականութեան բովին մէջ: Նկարչական արուեստը ծնած էր նոր հանճար մը, որ յանդուպն տարածութիւններ եւ անձանոթ հորիզոններ կը բանար:

Իր յաջումն ու կառոյցները ինքնատիպ են: Նկարչական մակերեսը կը բաժնէ գոյնի, ձեւերու եւ միջամայրի գոտիներու, որոնք իրենց անկախութիւնը զոյգնելով հանդերձ, կը հաղորդուին եւ կ'ենթադրուին ընդհանուր յորինուածքին: Իր ամէն մէկ պատուար ունի իր տիրական գոյնը, որ կը տարբերէ նիւթի եւ անոր հոգեբանական մթնոլորտին հետ: Իր վրձինը

ազատ է եւ լայն մակերեսներ կ'ընդգրկէ։ Մարմիններու մէջ մարդակազմական ճշգրտութենէ աւելի ունեւորեալ արտայայտութեան կը ձգար։ Յանդուզն է ձեւակերպելու, չափազանցելու՝ իր զգացումին համաձայն։ Կերպասները եւս կը հետեւին նոյն վերաբերումին։ Իրենց ետին պատկերացումը մարմիններու կազմութիւնը եւ ձեւերը զգացնելու փոխարէն, իրենց դոյնով եւ շարժումով ընդհանուր կառոյցին կը նպաստեն։ Կը սիրէ ուղղահայեաց կառոյցը։ Գլխատեսէ հեռանկարը եւ միջոցի խորութիւնը։ Կրեւոյցի արեւոյ մէջ են բնականապէս մոզայիքներն ու իկոնները։ Իր տեսողութիւնը բնական հունէն չեղած է, դէպի Հորիզոնական միջոց տեսնելու տեղ, երկրէն կը սկսի եւ միշտ դէպի վեր կ'արձակուի։

Մայր եկեղեցիին մէջ է Վեսպոլիոն։ Դատապարտութենէն ետք, մերկացուցին զգեստները եւ վրան կարմիր քղամիդ մը նետեցին։ Էլ Կրեքօ բռնած է պահը։ Գրեւորոտ պաշարուած ամբողջէն։ Մոլեռանդ դէմքերը, օրէնքի կոյր հպասակ զինուորները, անհունօրէն խոնուած են իր շուրջ, վերը, նիզակներն ու տէգերը սպառնալիքներ բարձրացուցած, որով կը շեշտուի ուղղահայեաց կառոյցը։ Առաջամասին, մէկը կը պատրաստէ խաչը եւ կիներ տխուր կը դիտեն դինք։ Այս խճողուած, հետզհետէ սեղմուող խոփանին եւ նիզակներու տնտաւին մէջտեղ կանգնած է Յիսուս՝ ձեռքը սրտին, հայեացքը երկինք։ Յիսուսի կերպարանքը բազմաաբար տեսիլ մեծ է եւ տիրապետող։ Տիրապետող է մանուկային կարմիր քղամիդը։ Կը գրաւէ նկարին կիզրոնը եւ մոլերեւոյն մեծ մասը։ Գործուող մեծ ողբերգութեան, ոճիւրին, նահատակութեան կարմիր խորհրդանշը։ Մտաւայ միջին երանգները, ճերմակը, ժուշկոյ դեղինները աւելի ցայտուն ու լուսաւոր կը դարձնեն կարմիրը։ Կը տաւին ծալքերը ֆիզիքական թելադրանքներէ բոլորովին զերծ, զգացական եւ ունեւորեալ կ'արտայայտեն։ Յիսուս վեր է ամբողջին, կոնխազգացուած տառապանքներէն։ Զգեցած է նահատակութեան ծիրանին, արդէն տնիւթացած, կը ձգտի երկինք։ Նիզակներու ետին, միջոցին մէջ լուսաւոր հոսանքներ դէպի վեր կը հոսին։

Վոսմ Օրկազի քաղուստին հիմնական գոյները սակի դեղինն են եւ սեւը։ Ծերմակները կը շեշտեն հակադրութիւնը եւ բազկացուցիչ կիսաթոնները կը հարստացնեն երանգապնակը։ Կառոյցը ուղղահայեաց է։ Թորութիւն, անջրպետ դուրս են իր մտահոգութենէն։ Զինք հետաքրքրողը դրամն է։ Սիրւած եւ ազնիւ մարդու մը թաղումը։ Մահանացուն կը մեռնի, բայց... կոմսին մարմինը, գրտնեւոր մէջ, կ'իջեցուի զերեզման Ս. Ատեփաննոսի եւ Ս. Սոգոստիոսի թեւերուն մէջ։ Սուրբերը զգեցած են ոսկեայ նկարազարդ շուրջառներ։ Թաղմանական թափօրը հանդիսաւոր է։ Հողեւորականներ, ապրող նշանաւոր անձնաւորութիւններ, մոմեր, — պահին բովանդակ լրջութիւնն ու տխրութիւնը։ Ասիկա վարն է, երկրի վրայ։ Բաժանումը պայմանադրական է եւ միայն զիտողի մտքին մէջ։ Արուեստագէտին համար բաժանում գոյութիւն չունի, ըստ նկարչական կառոյցի եւ ըստ էութեան։ Տրամը կը շարունակուի դէպի վեր։ Վառած մոմերը ամպերուն կը դալին եւ Հրեշտակին փշրէր՝ սգաւորներու գլուխներուն։

Մինչ կոմսի մահանացու մարմինը կ'իջնէ դէպի հող, արդէն Հողին, իրեն թափանցիկ, բնականայն կերպով, Հրեշտակի ձեռքերուն մէջ կ'արտորայ երկինք, ուր Աստուածածինը, Յովհաննէս Մկրտիչ, Ս. Գևորգոս՝ դրախտի բանալիները ձեռքին, երկնային էակներու քանակը եւ ամէնէն վերը՝ Յիսուս, որ կը հովանաւորէ աստուածային հանդիսութիւնը եւ վերջին ապաւէնն է։ Տեսիլը կատարեալ է։ Այլեւս ներթեգէնը, անցաւորը աննիւթացած

է եւ ամէն ինչ ողբկանի վերածուած։ Անմահութեան դադափարը կը տիրապեմէ։

Այս հանդիսաւոր առիթով, երկնքէն իջած երկու սուրբերուն զիմանկարները, ոսկի զգեստները, իրարու հակած կոնածեւ շարժումը եւ անոր գոգին մէջ րեկած մարմինը կոմսին, նկարուած են հանճարեղ վարպետութեամբ, հզօր զգացումով եւ ներքին խորութեամբ։ Անոնց ետին շարուած անձնաւորութիւնները հոյակապ զիմանկարներ են, օժտուած իրենց սեփական նկարագիրներով եւ հոգեբանական կեանքով։ Կը հարստացնեն յօրինւածքը եւ իրենց արտայայտութիւններով կը նպաստեն ողբկան մթնոլորտին։ Անոնց մէկ մասը յառած է վարձ՝ զէպի մեկնողը, միւսը՝ վեր, զէպի երկինք, շնչալիւ կապն ու շարունակականութիւնը։ Նկարին կեդրոնը հրեշտակն է, որ բացուած թեւերով եւ զուգակրանքով, կը բարձրացնէ հանդուցեալին հոգին։ Ամպերը, որ կը տարածուին նկարին մէկ կողմէն միւսը, խաբխիւ կը ծառայեն Աստուածածնին եւ Յ. Մկրտիչին, ծփացող գոյութիւններ, որոնց բոլորումը երկրէն զէպի երկինք բարձրացող ձողականութեան կը ձգտի։ Աւաջամասը հանդիսաւոր է եւ ախոր, վերը երկնայիններու երջանիկ պատարապ մըն է, հայեացքները, մարմիններն ու բազուկները ուղղուած զէպի Փրիստոսը։ Նկարին բովանդակ մակերեսը լեցուած է խտութեան, երկրաշածութեան եւ վերացած շարժումի զգացումով մը։ Տիրապետող դեղինը, սեւը եւ ճերմակը ամէն տեղ են, կը թափանցեն ընդհանուր մակերեսին։ Դէմքերու, զգեստներու եւ ամպերու վրայ անձանօթ ակունքէ լոյսեր եւ ցոլքեր կ'իյնան, ստեղծելով դոյնի անօրինակ հարստութիւն եւ խորհուրդով պտուրուած մթնոլորտ մը։

Կրօնն, որ կեդրոնէն ալ հանդիսականներէն մէկը ինք՝ էլ Կրեթոն է։ Վարը, ալ անկիւնը՝ իր որդին Մանուէլը, մէկ ձեռքով բռնած ժողով եւ միւս ձեռքի ցուցամատը՝ ուղղած ննջեցեալին։

Ուխտադնացութիւնը կը շարունակենք։ Էլ Կրեթոյի տունը։ Անհերքելիօրէն ազգացուցուած չէ, որ մեծ նկարիչը ապրած է հոն։ Հակառակը մտածողներ կը պնդեն, որ բնաւ չէ բնակած այնտեղ։ Ամէն պարագայի, ըստ Երեւոյթին, որոշ տուեալներ կան։ Մանաւանդ՝ որ մենք կը հաւատանք կամ կ'ուզենք հաւատալ, որ արուեստագէտի տունն է այդ։ Գաղափարը այնքան մօտ է սրտին։ Տեսնել վայրը, ուր արուեստագէտը ապրած է, զգացած, նշկարած։ Իրմէ բան մը թողած, որովհետեւ պատերը, քարերը, գերաններն իսկ կը պահեն զէպիներ եւ զգացումներ ու խօսուն են։

Երկարականի շէնք մըն է։ Աղիւսէ, կղմինտրեայ երգիքով, ընդարձակ պատշգամով, որ կը կախուի հարուստ պարտէզին վրայ։ Տեղ-տեղ ճակատները ճերմակ կրաշուր։ Երբ փողոցի դուռնէն կը մտնես ու կ'անցնիս ներքին բակը, արդէն աշխարհէն կտրուած ես։ Կարծիք սալայտաւ, գունաւոր յախճապակի, քանդակուած տուններ, սիւններ, թաղարներ։ Կարասիները, սենեակներու ոճը պահուած են անխաթար։ Թանգարան մըն է։ Եռոտանիին վրայ զետեղուած է վարպետին «Ս. Պետրոսի արցունքը» հոյակապ զիմանկարը եւ այլ նկարներ իրմէ կամ յայտնի այլ վարպետներէ։

Մարդը աւելի մօտէն եւ ջերմօրէն կը զգաս։ Աւելի մարդկային կը դառնայ, էակ մը, որ առօրեայ կեանք ունի, նոյն աշխատանքները, պահանջները, թերեւս տկարութիւնները։ Սէրերը, երազները եւ յուսախաբանութիւնները։ Իր գործերուն մէջ է, որ տարբեր է, հանճար է, անմահ է։

(Շար. 2)

ԲՆԻՉԱՆԴ ԿՌԱՆԵԱՆ

Յ. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն

ԱՆՏԱՌ-ԱՅԻՆ

Գազտներգութիւն մը կը հոսի
Անտառային հովերու շուրթերէն...:

Անտառն ամբողջ՝
Վազարդեան տառերէն փոխանցուած
Ձայնական երանգներու,
 հազերու,
 հազերու
Յուշամատեն,
Ձուր կ'արտաբերեն ծղրիքներ
Ամբարշատ փոխառացութեամբ:


Հովերն իրիկուան
Կը դեզերին խորշերն անտառին -
Կը նստին հարցազրոյցի
Աննշան թուփերու,
Աննշմար թուղթերու հետ -
Կը քաղին
Փերք մը հառաչանք
Ծաղիկի մը կուրծքէն,
Համբոյր մը խոստում
Ծառի մը կոնգէն,
Կը համադրեն, կը ներդաշնակեն
Յզելով՝
Ծղրիքներու հեռագրային հաղորդումներուն...:

Հովերն իրիկուան
 Պահ մը կը հեւան
 Տալով տնկ՝
 Անտառային շահեմուտ փախստացութեան,
 Որ հունչ առ հունչ,
 Ալիք-ալիք
 Կը սուգի, կ'անհետի,
 Համատարած լռութեան ազգներուն...:
 Եւ որոնումի տենդէն բռնկած՝
 Կ'արշաւէ՛ն կրկին
 Առնելով հետադարձութիւնը յանկարծ
 Բեկոր մը հրգի,
 Փշրանք մը յուշի
 Որբացած՝
 Շունիներու խեղճ լանջերուն:
 Եւ նախադի հաւնճով տարածած՝
 Կը քեզմնաւորեն
 Արարը վերջին
 Անտառային զադտնասփիւռ լրատուութեան...:



Խորհուրդներու այս յարանում հասկաքաղիմ
 Եւ եմ միայն հանդիսանալ:
 Կը տասապիւմ
 Հովերու քափառական մտերմութենէն,
 Ոչ ներանձնութեան դիւանէն քափում՝
 Թիւով դաւադիր՝
 Գուցէ տարագրեն
 Անխուստովամ ապրումներէս
 Կակաչ մը սէր,
 Անճառագայթ բազմաճմբերէս
 Կարկաչ մը հեւք...:

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ



Ա Շ Ո Տ Ն Ո Ւ Ր Ե Ա Ն

ՈՒԺԻ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՄԱՑ...



Քննադատութեան ու ինքնաքննադատութեան հանդէպ ցոյց տրուող վերաբերմամբ միայն կրնայ ճշդել լայնախոհութեան աստիճանը: Ու անոնց համար մարդուն վերապահած յարգանքն է առաւելարար, որ կը սահմանէ հաւաքականութեան մը մտաւորական մակարդակը:

Քննադատութիւնը արդար իրաւունք նկատող ժողովուրդի տնտեսական, քաղաքական, հասարակական, մշակութային և իր համոզումները խնդրոյ առարկայ դարձնող մատնանշումները ներքին խաղաղութեամբ զիմակալելու անհրաժեշտ տարրը կը բացակայի իրմէ:

Քննադատութեան շուրջ պոյութիւն ունեցող շփոթն ու վախը՝ դաստիարակութեան կապուող երեսն է մըն է աւելի եւ կը կրէ մեղքը՝ ընկերային կեանքին կարգ մը երեսներուն վրայ տարածուած այն մոլեռանդութեան, որուն ծանօթ ենք... աւելիով, անհանդուրժողութեանց եւ զաղափարական անդիլոգութեամբ շրջանակուած իր զունաղեղ պատկերներով:

Ներկայ լուսաւոր դարուն գէժ այս հակադրութիւնը, որ ի միաս մեղի կը մնայ տակաւին, Հողէն դուրս ապրելու անպատեհութեան արդարացումը ունենալով հանդերձ՝ չի կրնար այլեւս չթմեղանքը բլլալ տարադրութեան Արտասահմանին (ԱՄՖԻԼԵՔ-ին տեղ) բերած ծանր, բայց արդէն պատմութեան անցած դժուարութիւններուն եւ դառնալ յաւիտենական ճակատագիր մը՝ ցեղային կենսունակութիւններով պրական, արուեստի ու մշակութային գործիքներ սպարաբազմող մեկ ժողովուրդին համար:

Երբ հարկ եղած էն աւելի փութկոտութիւն կը յայտնուորենք հոն, ուր կենցաղային կամ կենցաղասիրական զաղատամտութիւններ կան սորվելիք, ինչո՞ւ յետամնացութիւն՝ ուրեմն, անմիջապէս որ կարող կու գայ մտաւորական մարդուն ինքնիշխանութիւնը սեփականութեան վերածող քննադատ իրաւունքներուն: Անոնց հանդէպ այդ անտարրերութիւնը՝ ժամանակի ընթացքին, մտաւորական-գրադէտ մարդուն գոյութիւնը ապահովող ահա՝ մայ միջոց մը եղաւ, դառնալու համար ստորակայութեան մթին խորհրդուն մէջ անած թերած նկարագիրը անոր, կամ՝ ստրկամտութիւնը:

Քննադատութենէ խրաչող ներկան կու գայ անցնալէն: Ո՛չ հին, այլ մօտաւոր եւ համարեա՛ որ նի տարապրութեան ստեղծած հայ գաղութներուն տարիքը:

Անոր հեղինակը այն մարդը եղաւ, որուն... տնտեսական սլամանեքը, մտաւորական կամ գրադէտի կոչումը տեղաւորեցին նախակրթարաններու մէջ: Անգամ մը որ «վարձուեցաւ»՝ կամաց-կամաց դարձաւ իր թագական զգարմանը: Կապուած մնաց անոր, անոր ազգականին ու գրացիին: Եւ որովհետեւ ուսուցիչները՝ միաժամանակ մեր բանաստեղծներն էին ու գրադէտները՝ առաւելաբար իրենց ինկան հրապարակագրութեան ու քննադատութեան քաժինները:

Այս առիթով, կարելի չէ՞ երկաթէ բռունցքին, ու կարծիք գերանդին տախտակը ապրող հայ գրողին օրինակը տալ, շնչելի մթնոլորտներուն ինքնաշնորհադատութեան բերած ոչ իսկ ճշմարիտ նպատակն քով, անմիջապէս ներակացնելու համար, որ գրադէտին արիւթիւնը հո՛ն էր աւելի, քան՝ հո՛ս: Եթէ նոյնիսկ հայաստանցիին յանդիմութիւնը կատել ուզենք միահեծան բունկալին անփառունակ մահուան յաջորդող օրերուն՝ կեցուածքը թելադրելի է միշտ. որովհետեւ՝ հինին ահաւորութիւնը չէր կրնար այնքան մը փարատած ըլլալ, որ նմանէր մեր հոս վայելած անկեականայնիւթին յորդ ազատութեան: Այս իրողութեամբ, տեղին է կրկնել, թէ Երեւանի աստիճանով մթնոլորտ շունեցանք եւ Հայրենիքէն դուրս աղբիւրու դատապարտութեամբ հայ գրադէտը շրջաւ օգտադուրծել իր ազատ քաղաքացիութիւնը, ինչպէս նաեւ շատ մը արել իրաւունքներ ու անոնց փոխարէն, Փրփրեական գոյութիւն մը պահելու համար՝ ստրկամտութեան շրջան մը կապեց իր անունին:

Սեփական հող, սեփական լուր ու՝ սեփական պետութիւն: Զանոնք իմաստաւորող վարչաձեւերուն մտաւորական դասին համար ստեղծած տանելի կամ անտանելի պայմանները աստիճան մը կու տան կեցուածքին: Տրամաբանական գծով, առաջինը՝ տանելին, երազուած ձեւն է անշուշտ: Երկրորդը՝ անտանելին, բոլոր պարագաներուն՝ մերժելի: Որովհետեւ՝ գրողին ներքին տառապանքը ո՛չ հացի պակասն է եւ ոչ ալ՝ ջուրի: Անգալն մեկանին գործածութիւնը միայն կրնայ կշտացնել ազատութեան կարօտ իր ներաշխարհը, տոանց որուն՝ կը պարպուի, կը դառնայ հաց ու ջուր փնտռող տեւէ մարդ:

Հրաշքը, ես՛ա է որ տեղի կ'ունենայ, երբ գրադէտը չաւտելու, շխմեալու, այսիմֆն՝ մաշտաւն գնով կը բերէ իրեն այդ ազատութիւնը:

Ո՛չ այս պայմանները տիրեցին Հայաստանէն դուրս ապրող հայ գրադէտին վրայ, ոչ ալ նման կեցուածքներ արձանագրեց մօտաւոր մեր անցնալը: Ուրեմն բոլորը՝ ճակտին այս խարանդ: Մօտաւորապէս՝ այս՝ Որովհետեւ այն քիչը, մինչեւ հիմա մեր արեան մէջ եղող, մեր նկարագիրը իրեն աւելի պահող այն քիչը, որ եսին ու արժանապատուութեան փրկութեան համար զատիվներ նախընտրեց՝ կեցուածքին խորհրդանշական, կարճա-

տեւ մէկ պատկերը եղաւ, հաւանաբար զինք բաղկացնողներուն անարիտութիւնը... ողջախոհութեան կապող իմաստութեանց հետեւանքով: Իայց՝ լա՛ւ որ այդպէս եղաւ, որովհետեւ ի՛նք եւս պիտի ընէր այն, ինչ որ շուզեց տեսնել ուրիշներուն մօտ: Որովհետեւ կարեւորը, պահանջուածին արդարութիւնն է նախ եւ անոր իրականացման համար ընտրուած ճամբան. — դայն հարթելու համար՝ եթէ անհրաժեշտ են ուրացումները, հաւանական քանդումին հետեւկարը սակայն, զաղափարական պարկեշտ մարդուն մէջ ինքնազուգումին անդրադարձը կ'որթնցնէ յաճախ, հաւատարմութեան վերջին պատեհութիւն մը տալով ընդդիմադիրին: Եւ այս քննութեան մէջ՝ յաջողաւ այդ քիչը: Երանի ո՛ղջ ըլլային այդ ֆիլին նուիրեալները, տեսնելու համար իրենց մեղի հետ բլրալը ու մանաւանդ այն ազատութիւնը, որ ղլացուեցաւ իրենց: Երանի ապրէին, իրենց «մեղք»երով մեր հոգիները քաղցրացնող ու անուշ յիշատակի վերածուած այդ սիրելի՛ անունները:

Իայց այս բոլորին մէջ, ինչո՞ւ ամէնէն տարօրինակը, անարտաբանելիքը, զարմանալիօրէն յատկանշականը, դեռ ի՛նչ կ'ուզէք ըսէ՞ք՝ մե՛րը ըլլա՛ր:

Ճշմարտութիւն է, երբ Խորհրդային Հայաստան եւ Արտասահման իրականութիւնները զիրար լրացնող գործօններ կը նկատուին: Երկուքին միջեւ մղուած պայքարը, լրացուցիչ այդ աշխատանքը մասամբ կատարած է արդէն: Դուրսէն երկիր գացող քննադատութիւնները, այնտեղէն մեր հասցէին շարադրուած անպատկառութիւնները՝ ժամանակին արդարադատ եզրափակումով, երկու յստակ դիմերու դիմաց դրին հանրային կարծիքը: Մեր ըսածները ճիշդ էին եւ մենք արժեցուցինք ազգային ու քաղաքական մեր հեղատեսութիւնները: Իսկ անոնցը՝ մնաց միշտ անձնութեանց սահմաններուն վրայ, վերածուեցաւ ինքզինք վարկարեկող ներքին ախտի մը, որովհետեւ ուրիշներուն անցեալի ճախարները, որոնց... ճշդութեան վրայ հիմնուած է իրենց այսօրուան պետութիւնը՝ չկրցան զիրենք հանդարտութեան մէջ պահել: Ու, Երեւանի դէկտաբրութիւնը, աւելի քան կողմնակալ եղաւ իր քննադատութեանց մէջ, առաջին մէկ օրէն՝ ճառագայթ թաղելու անհետեւանք աշխատանքի՛ն լծուելով:

Այս պայքարով, եթէ Հայաստանի քննադատութիւնը ինքզինք կեղծած ըլլալու ապացոյցը տուաւ եւ մերը յատկանշուեցաւ իր անկեղծութեամբ՝ ինքնաքննադատութեան մէջ՝ սակայն, նոյնը չեղաւ: Ազգային-քաղաքական հեռանկարներով գործող մեր հմտութիւնը, իր ամուր պատուանդանը չունեցաւ գրական, մշակութային ու կազմակերպական գետններուն վրայ, հեղուտնայ վիճակ մը պարզելով, արդեգրուած վարդապետութեան մտքի ազատութիւնը ամէն քանի վեր դասող նկարագրին եւ մեռնալ տառ՝ ինքնաքննադատութեան միջոց:

Հայաստանի կապակցութեամբ, եթէ մեր հաստատումները — «հայրենասէր» չըլլալու գնով — վարչաձեւին ստեղծած անհնչելիութիւնը կ'ընդգծէին, գծողակ այդ պայմաններուն մէջ՝ ուրեմն, ազատ խօսքին, քննադատութեան ու ինքնաքննադատութեան համար հայ գրագէտին թափած ճիգը եւ գէշ-աղէկ ձեւք ձգած արդիւնքը՝ շատ աւելի կ'արժեն, քան այս ազատութիւնը: Որուն բացարձակութեանը մէջ՝ խեղդեցինք արդարադատութիւնը, կամուր կուրութեամբ, հացի հասարակ մտահոգութեամբ եւ մեղմէ ո՛չ այսքան պահանջուած ստրկամտութեամբ մօտենալով դրեթէ բոլոր հարցերուն:

Մեր քննադատութիւնը՝ արժանաւորութեան շուայութիւններ արձա-

նազրեց տնկատեղան: Բայց որովհետև զէմ: Հոն, ուր տնոր սլաքները կրնային զէպի մեր կողմը դառնալ, ինքնասիրութիւնը՝ անմիջապէս, խորհրդաւորութիւններ փոփոխելով՝ շորցուց կաղամարը, էջը մպնով կոխ: Ան մեր ամկարազուքիւնը, փոխանակ տկարութեան վերադրուելու՝ դարձաւ մարդուն կարգապահութիւնը, պայկեշտութիւնը, կացութեան ծանրութիւնը ըմբռնողին նաւասարակութիւնը:

Կարճ՝ ազատութիւնը եղաւ մեր անարիտութեան թափ տուող թելը: Մեղմացուցիւ պարագայ: Ձենք ընդունել: Որովհետեւ՝ չկայ:

Ստեղծագործութեան մը իրական արժէքը խորաշափելու համար՝ ստիպուած էինք ճշգրտաշուտ ներքուզարկեր ստորապրել, եթէ... մեզմէ էր անշուշտ դրողը: Այդ անցադիրներով ա՛յլ որ ներկայացաւ գրականութեան վրայ հսկող դիտողներուն՝ կրցաւ հասնիլ տաղանդին սահմանը:

Ինքնաքննադատութեան տրամադրած արժեւէժը այդ օրերուն՝ արտաքին աշխարհին մեր տարակարծիք չըլլալը նախ ցոյց տուաւ գործիք մը եղաւ: Այլապէս արդար այս մտահոգութիւնը, որ կազմակերպական էր՝ մտաւ ամէն տեղ, ներկայ եղաւ գրական ու գեղարուեստական հանդէսներու, դասախօսութիւններու, ներկայացումներու, յետոյ անցաւ խմբագրատուն եւ զատելով իրենցից, այսինքն՝ մոռնալով ինքնաքննադատութեան հասցէն՝ զրեց անոնց մասին կամ՝ լռեց (յոռեգոյն պարագային, որ առնուազն թշխմակցին արիւթիւնը կը ցուցնէ):

Միջակէն շատ վար, լատպոյն պարագային՝ միջակ մարդոց ցոյց տուած այդ տեսակ գործունէութիւնները սեփականութիւնը դարձան մեր բոլոր կազմակերպութեանց — հոգիէն ու ոգիէն առաջ՝ ենթակայի շարժելին նայող ու անոր գոյնը որոշելէ ետք անոր վիճակացոյցը պատրաստող կազմակերպութեանց:

Ասոնք բաւական չե՞ն, ամբողջացնելու համար տխուր այն պատկերը, որ ինքնաքննադատութեան քաղաքացիութեամբ յատկանշուող մեր գրականութիւնը եղաւ: (Այս պահուն, շատերու մտքին սկսած է ճամբայ ելլել անհամբերութիւն մը, յիշեցնելու անապարտելի կարգ մը անմահանուն քրեանադատներ: Գիտենք անունները եւ մեր կեանքը անցուցած ենք անոնց բարեքները թուելով: Գրական առօրեային, ազգային ու գաղափարական երբեմն բուրմբուկական ճանաչող վէճերուն ու անոնց վրայ իւր թափողներուն բաւական վերին նայեցան անոնք: Յատկապէս մէկը, այնքան մը բարձրաձայն խնայց այդ բոլորին, որ մինչեւ այսօր՝ կայ տակաւին արձագանգը):

Ներկայ խորհրդածութիւնը, անգամի մը համար միամտութիւն չծախենք եւ անկեղծ ըլլանք՝ ԿԱՐԵՆԻ ԶԷՐ ու եթէ հիմա կարելի կը համարուի՝ ո՛չ թէ անոր համար, որ կարգ մը քաղաքացիական համոզումներ իրենց բնական վախճանը ունեցան, այլ՝ որովհետեւ մեզ շրջապատող պայմաններում եւ հայ ուսումնառութեան ու լրագրակցութեան մարդկութեան յառաջընթաց արշաւին հետ քայլ պահելու անհրաժեշտութիւնը՝ կենսական ու անյետաճելի պահանջի մը վերածող մակարդակ ու տրամադրութիւն յայտնաբերուեցաւ գաղափարական կազմակերպութեան մը գեղեցիկ շրջանակներէն ներս:

Հայաստանը, մեր մտքին մէջ արթնցուց ուրիշ օրինակ մը: Պոլիս: Որ,

Արտասահմանի հայութեան ընկերային, դրական ու մշակութային գրեթէ նոյն գրաժամակութիւնը հաշուած չըլանին՝ չունենցաւ այն ազատութիւնը, որուն սահմանուած քախտաւորը եղանք, տարադրութեան անմիջապէս յաջորդող օրերէն սկսեալ: Քաղաքական կացութիւնները, տիրադատողին թուրք ըլլալը եւ անոնց նման այլ մթութիւններ՝ արդեւ մը չեղան իրեն եւ բաւականաչափ կորով ու սիրտ ձեւեր, որպէսզի սերունդ դաստիարակէ եւ արդարն ու անարդարը խնայ եւ անխնայ վերաբերումներու արժանացնէ:

Աւօրեայ ըստածր, որ անասական ոչ-նախանձելի պայմաններու եւ պայտասկան կեանքի միջեւ օրօրուող վիճակ մըն է ընդհանրապէս, իր պարագային՝ վեհութիւն մը ունէր: Դասակարգային շեշտ տարբերութիւնները, ... ունեւորի, շունեւորի խտւարամտութեամբ չէին կարգաւորուած: Զկային այնտեղ «լերջէն» իւզոտած ունեւորներ, այլ՝ ծնունդով հարուստներ, որոնք ճակատագրին բերած չքաւորութեան մէջ անպամ կը պահեն իրենց տղերակերպը եւ աղիւսականութիւնը: Կային աստեղ այն ունեւորներէն, որոնց հարստութիւնը, ամօթխածութեամբ կը մօտենար աղքատին, մա՛նաւանդ՝ երբ հանրային կարծիքը թելադրող յատկութիւն մը հաստատած ըլլար անոր մէջ:

Անորը եւ մերը՝ ըմբռնումի խնդիր է եւ գործելակերպի: Մէկ խօսքով՝ ոճի: Բացորոշ ճշմարտութիւններու համար, երբեմն կը պակսին զիրենք ճշդատութեամբ հասկնալի դարձնող օրինակները: Ոճը մարդուն ինքնութեան հաւասարցնող վճիռը անբեկանելի դարձնող ամէնէն ճիշդ օրինակներէն մէկն է Պոլիսը, ուր հայ հաւաքականութեան հետ կապուած բոլոր մարդերուն ընդդէմի միակ առաւելութիւնը՝ անոր ընկերային, գրական ու մշակութային կեանքին ներս տիրող Ազնուականութիւնը եղաւ:

Այս է ահա, որ պակսեցաւ դադութներուն: Ուր՝ թէեւ կային ունեւորներ, բայց անոնց մէջ բացակայողը՝ շատ քիչ բացառութեամբ՝ ազնուականութիւնը եղաւ:

Այս բարձրութեան վրայ գտնուող Պոլիս քաղաքը՝ չէր կրնար համապատասխան մակարդակով շօտենալ նաեւ գրականութեան եւ զայն իմաստաւորող՝ քննադատութեան:

Քննադատելը եւ քննադատութիւն ընդունելը ապացոյց են ուժի գիտակցութեան: Այս ամուր պատուանդանին վրայ կենալով էր, որ Պոլիսը Պոլիս դարձաւ: Այնտեղ ինքե՛րէն ներս, բանաստեղծներ, գրադէտներ, աղգային ու կուսակցական գործիչներ, դեռ մինչեւ հիմա անձեռնմխելի կարծուող բարձրաստիճան կղերականներ ու հաստափոր... անօգուտներ իրենց ճակտէն զարնելով տէր դարձաւ քննադատի կոչումին: Ի՞նչ կ'արժեն, ի վերջոյ, սըրճարանային տրտունջները, անուններու եւ նոյնիսկ գրական կամ այլ գործերուն շուրջ: Ողջատ մարդոց կողմէ ու միջոցաւ կատարուող այս քննադատութիւնները կ'ըլլան այն յանդգնութեամբ, որուն ստեղծիչը երկշտտութիւնն է անկասկած եւ կամ՝ զայն ողորդող արուեստական արիութիւնը: Պոլսոյ մասին կատարուած հաստատումները շատ աւելի համոզիչ կը դառնան, եթէ Յ. Օշական անգնտահատելի քննադատը՝ ճամբայ հանենք սուլթան Համիտի քաղաքէն, ըսելով.—

Արդէն կարծր նկարագիր, քայց չէ՞ք կարծել, որ զինք առաւելագոյն չափով յատկանշող շինարար-կործանարարութեան խմորին մակարդը, քիչ-շատ, քայց աւելի՝ շատ քիչ տոկոսով, բերաւ Պոլսէն, թէեւ իր անխնայութիւնները բոլոր երկինքներու տակ ալ նոյնը եղան, հիմնաւորելով վերջնա-

կան այն համոզումը, որ արդանդային երակներն էին անկասկած Օչականի ներքին ովկիանոսին ստեղծելները:

Երբ հանրային կենսքին մէջ «գօտի» շահած ախոյեան... ազգային ընդեր, կղերականներ, աւելի վարերը երթալով՝ թաղականներ կը հարուածւէին՝ Յ. Պարոնեան, ախարդախ երգիծաղրի իր գրիչին չէ՞ր կապած Պոլսոյ գրական մթնոլորտին լայնախրտ ու բարձր մակարդակը: Կամ՝ շրջելով դերերը, եթէ Պարոնեան դժբախտութիւնը ունենար տարազրութեան ճամբան բռնելէ յետոյ հո՛ւ, այս կողմերը հաստատուելու՝ իր տնտեսութիւնը ապահովելու համար, որո՞ւ պիտի դիմէր, եթէ ոչ մեզի ծանօթ թաղականին, որ զինք վարձովով, պիտի նստեցնէր թաղի զպրոցներէն մէկուն մէջ:

Բայց գրիչը: Բայց ի՞նչ ընէր այդ գրիչը, ե՛րբ կրնար գործածել: Ահա Պարոնեան պարտեց, որ հաւանաբար ամէն տարի շրջապտոյտի ելլէր, կարգով այցելելու համար Գարանթինա, Հաճըն, Ռալիլ Պէտէուրի, Սիւս, Թրաք, Մարաշ կամ... Ճարապուս: Ո՛վ որ քաջ է՝... Թող ո՛չ բռն:

Ընդունի՛նք այլեւս: Մեր թաղականներուն մեծ մասը եթէ մեկնեցաւ, թաղականութիւնը ռստածը կը մնայ տակաւին իբրեւ հոգեբանութիւն:

Այս բոլորէն ետք, հետաքրքրականը այն է, թէ ի վերջոյ՝ ի՞նչ պիտի ըլլան անոնք: Կա՞մ... մաքրաշրենք եւ կամ՝ մաքրագործենք: Եւ եթէ որդեկարգի դրութիւն այս առաջարկները՝ կարելի է աշխատանք տանել, որպէսզի երկրորդին ինչայ բացարձակ մեծամասնութիւնը:

Մեր ներքին տկարութենէն, որ միմիայն անտարբերութեան մեղքը ունի՝ որքա՞ն օգուտ քաղեցին անոնք: Անոնց բացառութիւնը՝ անակնկալին հաճելի խաղն է միայն եւ եթէ կայ այդ մէկը՝ ա՛ն ալ, միսներուն նման՝ թող այս տողերը կարգայ մարգակոն ոգիով, ճշմարիտի եթէ չէ վազած գլխաւէի» հետ եւ տեղեւայլի է մարմնամարզի իր մասնագիտութիւնը:

Հակադրելով մերը Պոլսոյ երբեմնի մթնոլորտին հետ, հաստատեցինք երկուքը իրարու միացնող, տեղ-տեղ հեռացնող, բայց քնդհանրական խորքով՝ նոյնանման, հիմնական դիժեր:

Ուրիշ էր Պոլսոյ մտաւորական ու գրական տաղնապներուն տեսակարար ծանրութիւնը: Կային պատճառներ անուշտ, բանաստեղծին ու գրագէտին թեւեր տուող, բայց նոյնիսկ հո՛ն, ուր ընդհանրապէս բնկրկումը կը սկսի եւ կ'ամլանայ դրողին ստեղծագործական կիրքին հրահրիչը, իբրեւ հետեւանք Ֆիդիքականին սպառնացող զանազան անձկութիւններու՝ Սկիւարը եւ անոր նման շատ մը սրբափայլեր՝ ունեցան իրենց հրաշագործները:

Վեհութիւն մը կար բոլորին մօտ, հոպիի այն բարձրութեան հետ, որ հեռու կը պահէ մարդը թաղային վէճերէ, բայց երբ գրական կամ պաշտօնական պայքարն է յայտարարուածը՝ ճշմարիտ քննադատութեան արդարադատութիւնն է անոր միակ թելադրանքը: Առաջին ու վերջին պայմանը:

Նեղմտութեան բաւական մանրէներ անցուցած մեր իրականութեան հակադրութիւնը, կէս դարէն քիչ մը աւելի հեռաւորութեամբ անցեալի մը հետ՝ դառն եզրակացութիւններու դուռ կը բանայ մեղի, ի դերեւ հանելով մեր անքննադատութիւնը պարտկել փորձող գրեթէ բոլոր պատճառաբանութիւնները: Եթէ նոյնիսկ, կարգ մը անհերքելի վիճակներ, հոս արձանագրութեամբ նահանջներուն համար չքմեղանքին իրաւունքը տան մեզի, մեր անկարողութիւնները սակայն, ի՛նչ ճարպիկութիւն ալ ի գործ դրուի՝ կարելի չէ առաւելութեան վերածել:

Ինչպէ՞ս մեր գլխարկները հանելով՝ չկենանք անցեալին՝ Պոլսո՛յ կողքին: Ուր հայ դրագէտը, ներքին ու արտաքին դժբախտութեանց մէջ եւ մո-

դովորդի մը միազահաս մահուան սարսուռով ստեղծագործեց ու անմահացաւ :

Շրջան մը շրջանի մը հետ բաղդատել՝ անոնցմէ մէկը ուրանալ չի՝ նշտնակեր : Յաջող դարձի մը հրդեհող յատկութիւնները չեն կրնար մոխրի վերածել ուրիշ գործ մը, եթէ վերջինը՝ կենալու իրաւունք մը տուած է ինքզինքին : Արժեւորումը հիմնականը ունի իրեւ տոանցք : Այո՛ ձեռով կը տրուի կարեւորութիւնը : Որքան մօտենաս հիմնականին, այնքան աւելի քիչ ժամանակ կ'ունենաս մանրանալու : Անոր համար զեղեցիկ է նպատակը, որ թանձրացնել հիմնականն է հաւաքական կեանքի բոլոր պայքարներուն :

Պոլսոյ այդ օրերու ազդային ու զաղափարական եռուղեք ունէր նպատակին անմիջականութիւնը : Այնքան տարութիւն ու արթնութիւն կը պահանջէր անիկա, որ ամբողջ հայութիւնը, մէկ սրտի վերածուած, ապրեցաւ վաղւան տեսիլքը եւ ապրումներու, ներշնչումներու ու զաղափարի մարդոց մահը արհամարհող արիւթեանց դիմագրկութեան մէջ՝ ժամափոփառ չնշտնալու խանդավառութենէ զուրկ գործերով :

Եթէ Պոլսոյ յիշատակումը ըրինք՝ պարզապէս ցոյց տալու համար օրինակը նոյն հորմէն եւ ժօրմէն ծնած երկուորեակներուն, որոնք միեւնոյն արիւնը կրելով՝ հանգերձ՝ ընդունակութեան եւ խառնուածքի տարբեր տատիւններ կրնան երեւան հանել իրենց մատահաւ լախտանքներուն մէջ : Ոճերը եթէ տարբեր են միշտ՝ նոյնն է տաղնապը սակայն, ինչպէս նաեւ նոյն՝ նպատակը :

Քոստովանինք սակայն, որ մտաւորականին կամակորութիւնը ինքնին տկարութիւն մը չէր : Կու դարձ՝ կրթական հարցերէն, ուսուցչին լուս տառապանքէն ատենդեակ, արեւ շտեսած խաւարամտութեամբ ու նիւթով եւ՝ ինչ որ ամէնէն ուղարկուէ՝ կողմակերպութեանց անտարբերութիւնը միշտ ապաւնտոված աւատապետ թաղականներու կողմէ :

Ո՛րք էր այն ատեն ըննադատութիւնը, ո՛րք էր՝ ինքնաքննադատութիւնը : Փնտռեցինք ու չգտանք : Իսկ երբ դասած կարծեցինք ու չուրջը դառնալու փորձեր բրինձ՝ մէր ականջները խորհրդաւոր խօսքերով լեցունեցան :

Եւ տօնկա այն պաղարինութեամբ, որ կարծես ուսուցչին ապտակ ուտելը եւ տնօրէնին ծեծութիւնը՝ անոնց պարտաւորութիւններուն մաս կազմող անգիր օրէնքներով ճշդուած ըլլային Ուսումնական Պրահայի գնեթը կանոնադրութեանց մէջ :

«Պատահական», բայց խաթար այս վերաբերումները չէինք կրնար չտեսնել... զոնէ, բերելու համար մինչեւ հոս եւ ըսելու, թէ անոնք, իրեւ մտայնութիւն ու բարոյական մակարդակ՝ սեւապրութիւնն են շրջանի մը, որ կրթական մշակիչ ազատ խօսքէ դուրկ մթնոլորտը հղաւ :

Կա՛ն տակաւին, արդեօ՞ք, նման վերաբերումներ սնուցանող ախորժակներուն հետ, ուսուցիչը զեռ «վարժապետ» կողող խաւարամտութիւններ : Այնքան յոռետես չըլլանք, ըսելու համար, թէ չէ փարատած այդ վախը եւ ունինք զայն դեռ չոգիի վրայ պահող եւ հինը յիշեցնող մութ անկիւններ :

Որեւէ ճշմարտութիւն կարելի է յիշատել, ներկայացնելով հակառակ ուղղութեամբ. մարդկային որեւէ արարքի՝ բնէ լաւ, եթէ այդպէս չէ : Այս յարաբերականութեան մէջ պիտի չուղէինք զբողին եւ ուսուցչին կրած տառապանքը շա՛տ բնական տեսնող ըլլալ ու տեսնողներու ալ հանդիպել : Դիւրին ապրած ու դիւրինին սահմանուած մարդիկ չեն կրնար մտնել այս սողերուն մէջ : Ընդհակառակն, կը խօսինք անոնց անունով, որոնք կրթական, գրական կամ արուեստի որեւէ ճշմարիտ դործ ընելու տալանալով՝

ճամբայ ելան խանձ արեւի մը տակ, գիտնալով որ տնապատն է գիրենք քաւորը — իմացեալ տառապանքը: Բաւական երթալէ յետոյ, երբ տեսած կարծեցին զով ու ջրառատ տեղ մը՝ մօտենալէ ետք՝ չգտան երկուքն ալ: Եւ որովհետեւ արեւը մտած էր իրենց մէջ՝ սկսան հաճոյք առնել կրակէն ու շարունակեցին ճամբան: Զկա՛յ տառապանք, այստեղ. թէ ոչ՝ կայ միայն... տառապանք: Ուսուցչին ու դրողին երթն է մօտաւորապէս այս պատկերը:

Նման պարագաներու, երբ տառապանքն է խօսեցնողը՝ կը սիրենք կրկնել ըսելով, թէ զժուար, նոյնիսկ ստրկացնող ինչ պայմաններ ալ տիրեն, ունինք անհրաժեշտ գիմադրողականութիւնը ծունկի բերելու անյադ-թա՛ւարելի «կարծուած» դժուարութիւնները, փրկելով՝ միաժամանակ, մարդուն վտանգուած ինքնութիւնը: Սակայն աստեք մտածած ու ընել ուզած պահերուդ՝ նայեցա՛ր շուրջը անդամ մը ու նայելէ ետք՝ գիտցա՛ր, որ զլմացող կեցող, վրադ ինդացող, չիացող, ճամբայ ցոյց տուող ու զոցող այլ ամենակարողին անունը ՇԻՋԱՊԱՆ ԲՈՒՄԵՆ է, որ արհամարհելու թաւունքը շատ քիչ բախտաւորներու կը տրուի:

Սակայն մարդը քանի՞ ճակատի վրայ պիտի պայքարի, որպէսզի իր ֆիզիկականին չեւո՛ր պահէ նաեւ իր անհատականութիւնը ու չկորսուի քարտէսէն:

Ո՛ր տեղաւորել՝ իսկապէս, բնութեան ստեղծած «հրաշք» մարդո՛ւն իսկ ձեռքով կատարելագործուած Շրջապատը, որ ամբողջական տիրապե-տութիւն մը հաստատած է մեր վրան: Որ, ուզած ատեն, կը մեղադրէ ու անպարտ կ'արձակէ եւ պիտէ քեզ լոնցնելու լատողոյն եղանակները:

Ան է ահա, որ մարդուն համար բնութեան զրկած արդար իրաւունք-ները կը բռնագրուէ ու յետոյ, իրեն իր սեփականութիւնը՝ պատառ-պա-տառ կը վերադարձնէ, (իմշպէս խօսի ու գրչի ազատութիւն) ողորմութիւն բաժնելու եղանակով:

Եւ ահա՛ դարձեալ Շրջապատը, այս անգամ արդէն իրեն արժեքափ ու վիճակազէր, իրեն բարոյախօս ու մարդարէ: Կը ծնին «խելացի»ները, «ապուշ»ները: Ոմանք կը պահանջեն, ուրիշներ՝ չեն պահանջեր. Շրջապատը, կրկին, նախաձեռնութիւնը առնելով՝ վճիռներ կ'արձակէ — մկարագիր ու-մի, մկարագիր չումի, կարգապահ է, ըմբատ է: Տոկալու յորդորները բաժ-նած պահուն, ետեւ անցնելով եւ կարելի ճկունութեամբ, կը կազմակերպէ, որ ականջ շտապ անոնց կամ՝ տա՛ս, երկուքը միասին: Որպէսզի՞ վերջին խօսքը մնայ մէջտ իրեն՝ Շրջապատին կամ մթնոլորտին:

Ըսէ՛ք, ո՞վ պիտի դիմանար այսքան քարդ մեքենայի մը սրատամ ճեղ-մոցներուն, եթէ ոչ դարձեալ՝ նոյն այդ Շրջապատին պատրաստած զօրաւոր մարդը: Ո՞վ պիտի չգիմանար, եթէ ոչ կրկին՝ յողնած պահու մը մէջտեղ բերած, «գործի եկող» իր տկարը: Շրջապատը, որ ուրիշներուն մաքուր թըղ-թածրարները առնելով՝ կը դնէ իրը անոնց տեղ եւ կը սկսի վարկով զբաղիլ: Կը ծախէ ու կը ծախէ, բայց ուզած մարդուն: Նախընտրաբար... ստրկա-միտներուն:

Ինքզինք վարկաբեկող եւ ինքզինք արժեւորող, ճակատագրականօրէն անոխաւափիի՛ Շրջապատը:

Ու եթէ մեր անհայրենիք գրականութիւնը տուաւ տաքութիւն, եթէ մենք ունեցանք ճշմարիտ ստեղծագործութեան մագնիսը եւ քննադատութեան խաղաղանը՝ ազրիւրը անոնց մեր շրջապատներն էին կամ մթնոլորտները:

Քննադատութեան ու ինքնաքննադատութեան համար շնչելի մթնոլորտ ստեղծելու անհրաժեշտութիւնը, որ կենսական պահանջի մը տալնապով չընկերայացաւ ասկէ տուալ եւ որուն իրազործութիւնը անյետաձգելի կը համարուի այսօր, գաղափարական կազմակերպութեան մը ներկայ դեկալարութիւնը կը դնէ մտքի ու հոգիի բարձր մակարդակի մը վրայ:

Կրթական մշակին, գրողին եւ աստեղ մը ի վեր իր կոշտմին ու սահմանաւոր դերին գիտակցութեամբը դադարաբաշխ աշխատանքի ընտան մեր ուսանողութեան կը մնայ յետադու իրենք զիրենք զգալ այն շրջանին ու շրջապատին մէջ, ուր դրօշակին, սուրին, գրականութեան ու մշակութիւն բաժնետէ դերերը կը կատարուէին վարակիչ հաւատքով եւ մտաւորականի բարձր մակարդակով: Ուր, քննադատութիւնն ու ինքնաքննադատութիւնը նշան էին կենսունակութեան եւ ուժի գիտակցութեան:

Այս գիտակցութեան դիմաց՝ ահա մեր ինքնաքննադատութեան կապաւոր մեղանք, իրեն հաւատարմութեամբ մեր պարկեշտութեան ու մանաւանդ փափկանկատութեան:

Շատերու մտքին մէջ եթէ անպատկառութիւնները, անփափկանկատութիւնները նշան են... գեղջութեան՝ մեր բմբուսած մեծին մէջ, յարգանքի ու փափկանկատութեան վերաբերմանն են արեւմտեան միակ ապացոյցը:

«Դէպի ազգիւրը [այսինքն] առնուած այս քայլը, այնքան ուժ կը բովանդակէ իր մէջ, որ չի՛ կրնար հաղարձ ունենալ: Գալիքը, որընթաց արշաւն է ալիւս: Որովհետեւ՝ կայ վիրահատիմ ներկայ դարուն համապատասխան լուսաւարութիւնն ու դադարաբաշխ մարդը յատկանշող խոսքին արժանաւորութիւնը: Ի՞նչ արժէք պիտի ներկայացնէր տրուածը, եթէ քննադատութիւնը ինքնաքննադատութեան ժողովնող Ուժը չափած չըլլար որոշումը սպասող ուսուցչին ու գրագէտին հաւատարմութեան հետ, նաեւ՝ ազատ խօսքին ծարաւն ու անոնց սահմաններուն գիտակցութիւնը: Օրինապահութիւնը: Գալիքը, սրբնթաց արշաւն է՝ այո՛ւ:

Այս ներդաշնակութեամբ չէ՛ր, երբ տեղի ունեցաւ ուսանողին կազմակերպած միւս Գայլարշաւը, որ սկսուեց պեղեցիկ ոճ մըն էր, բայց որ զլացուեցաւ այս անգամ, երբ չհամոզուելու բոլոր առաւելութիւնները ունէինք մեր երաններուն եւ ուղեղներուն մէջ: Այդ քայլարշաւով, մենք բարեփոխեցինք նաեւ սկսուեց մեր եղանակը, դուրս գալով թաղերէն, ուր սղահանգէր եւ հոգեհանգիստը առարկներու ընթացքին համերաշխութիւն մը ստեղծած են:

Անվտանգ է այլեւս մեր լուստեսութիւնը եւ ոչ մէկ կասկած այդ ուղղութեամբ: Հիմա, որ ինքնաքննադատութեան միանուագ գումարին հետ ապագովուած է նաեւ չարաշահութիւններ չընելու պրոպէն վստահելութիւնը՝ եւ իրեն հզօրակացութիւն, կրնա՞ք հարցնել:

Որո՞ւն էր արդէն, այսօր մեզի տրուող այս ազատութիւնը, անոր իրաւունքը: Եթէ այսօր կը արուի, ուրեմն՝ մինչեւ հիմա հոգը զրկուած էր իր ջուրէն, բաւը՝ իմաստէն: Հոգին կեանք տուող ջուրը, բառին խորք տըւող իմաստը վերադարձնելով՝ (չենք ըսեր՝ տալով) յափշտակած ըլլալու ապացոյցը տուած չենք ըլլար արդեօք:

Մթնոլորտին ներած ազատութեամբ քննադատութեան մը, որ բնական իրաւունքն է մարդուն՝ կարելի է, նոյն ազատութեամբ՝ վերաբերում ցոյց տալ, համաձայն ըլլալ կամ չըլլալ։

Եթէ փաստողը հաւաքականութեան մը բարոյական կառոյցն է եւ նենգամատութիւն ու անձնական հետապնդումներ կան այդ «ազատ խօսք»ին մէջ՝ տրամաբանական է զայն չէզոքացնելը. բայց՝ հակադարձելով, աւելի համոզիչ դառնալով։

Հոս, այս պարագային՝ անկաշկանդ է քննադատութիւնը։ Երբ վիճելի է քննադատութիւնը տիրողին համար եւ նոյնիսկ «հաշտանք» կայ հեղինակին դէմ՝ կը զտնուի՞նք արդէն անկաշկանդ ինքնաքննադատութեան դիմաց։ Իսկ վերջինին ոտնդած հակազդեցութեան տեսակն ալ, իր կարգին, ցոյց կու տայ տիրողին մտքի ու հոգիի մակարդակը, ինքնաքննադատութեան առտակ ըլլալը, չըլլալը։

Մերը երբեք այս պատկերը չպարզեց։ Զկրցանք վիճելի քննադատութիւններ ունենալ, իսկ երբ ունեցանք եւ ինքնաքննադատութեան ալ մօտեցանք տեղ-տեղ՝ գրողին մտքին ամացած իմաստակարար շրջանցաւ եւ ճարպիկ դարձուածներու յանձնուեցաւ զրոգին նկարագրելը, անոր փրկութիւնը։

Մեր վրայ տիրող, հաւանաբար ճակատադրական, իւրայատուկ մթնոլորտը, թոյլատու չեղաւ ինքնաքննադատութեան։

ՄԻՇՏ Եւ ԱՄԷԼ ՏԵՂ։

Մեր զրոգներէն ո՞ր մէկուն վաստակը նժարի դրինք։ Մանրութեան ի՞նչ շափ ալ դորձածուեցաւ՝ մէկ կողմը անպայման ծանր կշռեց։ Որովհետեւ, զգլուխները հարազատ էին, չէին կրնար պարապ ըլլալ եւ անոր համար ալ՝ միշտ ծանր մնացին, նոյնիսկ երբ անարժէք դորձ մը հրապարակ հանեցին։

Այս եւ նման մեղանշումներ, ազգային, դրական, մշակութային գեւորներու վրայ անհաւատարմութիւններն զոյսութիւն ունեցող այլ անտեսումներ եւ այդ բոլորին հակառակը՝ տիրապետողին մտքի ու բարոյական ըմբռնումներուն մակարդակը ճշդող վիճակներն են եւ ցոյց կու տան, միաժամանակ՝ ուժի գիտակցութեան բացակայութիւնը կամ ներկայութիւնը։

Ո՛րքան տկար է իշխողը, ա՛յնքան բիրտ է անոր տիրապետութիւնը։ Հո՛ն, ուր անկարողութիւնը նշմարելի դառնալ կը սկսի եւ բացայայտ կը դառնայ հպատակին հասունութիւնը՝ անխուսափելի է միջամտութիւնը իր զանազան սեղմումներով։

Ղեկավարուող ու զեկալար, իրենց ընդունակութեամբ եւ զազափաբական համոզումով որքան ներդաշնակ ըլլան՝ այնքան աւելի զօրաւոր է ուժին գիտակցութիւնը։

Ղեկավարութեան ուժի գիտակցութիւնը միայն կրնայ հոգիներու մէջ ստեղծել վստահութեան այն խաղաղ մթնոլորտը, որ սնուցիչն է նաեւ խօսքի ու գրչի ազատութեան։

ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ

Գ. Պ Ը Լ Տ Ե Ա Ն

ՀԵՌԱՅՈՒՄ / ՄՕՏԵՑՈՒՄ / ԵՐԿՆՈՒՄ

Քաղաքում «Միջերկրական» էն հրեք հատուածներ կը տրուին մեղի իրենց բացայայտութեան մէջ յայտնի, դրեթէ բնական շեշտով: Բայց ի՞նչ կը խօսի անոնց մէջէն, տնդին, ի՞նչ կը լսենք, երբ ունկնդիր կ'ըլլանք անոնց: Զգե՛լ, որ ականջը խորունկնայ եւ լսէ, մոռնալով ինքզինք, դառնալով ընդունիչ մը թափանցիկ, բայց խոհուն միեւնոյն ատեն: Գրե՛լ, ըլլալ վայրը:

Ա.

«Գիշերն ավէն այս օտար՝ կ'երթամ կտրած ամէն կապ:
Աշխարհին ծայրն եմ նետուած: Եւ միջոցս զիս իմ խորժէս,
Հայրենիքիս, մարդկութեան աւելի մօտ կը զգամ ես,
Աւելի շատ հեռացած՝ զիս անճղմէ ես կը զգամ»:

«Գիշեր» է նախ՝ ո՛չ միայն բնակարային ահաբան կամ ժամ յաջորդող կէտերին, այլ ներքին տարածութիւն ու ժամանակ, որուն մէջ կը քալէ ան, որ «ես» կը գրէ: Մութը անոր շրջան է պատմութեան, անել՝ ուր կ'ապրի ան. մարած են լոյսերը, անհետացած աստուածները, քննուած՝ ծանօթ նամբաները, լուծումները: Մարդը հոս առանձին է եւ կորսուած իր իսկ մտածումին եւ ընդհանրական գիւերին մէջ. քառս:

«Կ'երթամ» եւ իր լինելութիւնն է այս երթը՝ աեզ մը անծանօթ, անմատչելի թերեւս, թերեւս բաւական՝ ինքնին, երթը ըլլալով կարեւորը եւ ոչ նպատակը. շարժուն՝ պահող զայն արթուն, ուժական, գուրս: Կ'երթայ

«ափէն այս օտար»: Հողը ծովուն դէմ, շատ հին վայր ու նոր պայքարի՝ ջուրին ու ցամաքին միջեւ: Հողը՝ կայունութեան, ապահովութեան կալւած: Բայց օտար ափ, տարբեր տարածութիւն եսին համար, որ պիտէ տարբերութիւնը՝ ափին եւ իր միջեւ եկող: Օտար ափ եւ տարբերի տեսողութիւն: Տարբերութիւնը կը բերէ միւսը, կը քննէ ամէն կարելիութիւն միանալու ափին, ըլլալու նման: «Օտարը» բոլորովին տարբեր է, որմէ բաժնըւած հսը կը մնայ անհաղորդ անոր, չի կրնար տեսնել հոն ինքզինք, ըլլալ, ըլլալ մի եւ մէկ: Օտարը կը յայտնուի հարազատին դէմ, միութեան, ան վերածուած է առարկաներու ցամաք ամբողջութեան մը, որուն դէմ է հսը, բայց չէ ու չ'ըլլար բնաւ իր նախկին միութիւնը: Օտարը ըլլալով անմիջական դրացութիւն, կը պատռէ հարազատին միութիւնը, կը կրծէ զայն, որովհետեւ կարելի չէ ապրիլ առանց անոր. հոն ենք: Կ'երթայ

«կտրած ամէն կապ» հողի, որուն հետ կ'ապրէք ան, կը կապուէք աւոր: Բոլոր մեղի ծանօթ առեւանդները, որոնք միայն տուեալ շեն, այլ կեն-

զանութիւն, հաղորդակցութիւն, սէր, իտէալ, հրազ, հոգ, կապեր են, որոնց միջոցով կ'ապրինք ընկերութեան մը մէջ: Մեր յարաբերութիւնները՝ մեզ միացնող ուրիշներու կը կանոնաւորեն մեր կեանքը: Օրէնքներն ալ նոյնպէս: Կապերը կտրուած են: Օրէնքները քննուած, ձգուած են ետին: Ոչ մէկ կանոն, որ կրնար կապել եսը, որ կապանք ըլլալէ առաջ՝ ըլլար կանոնաւորում:

«Աշխարհիմ ծալքի եմ»․ կապերէ դուրս, եսը կը գտնուի աշխարհին ծալքը, եղբրքը, որմէ անդին թերեւ աշխարհ չէ, իր կանոններուն մէջ ապահով: Ծալքը սակայն լուսանց չէ, այլ տեղ՝ ուր եսը ծայրագոյն, առաւելագոյն իր սահմանին վրայ՝ քննած է ինչ որ տրուած էր իրեն: Հարազատը կեդրոնն է եւ անկէ դուրս մնացողները ծայրիկներն են․ ո՛չ միշտ, որովհետեւ կան, կը տանին հարազատ հողը իրենց հետ, կը գոցեն իրենց աչքերը ու կը մոռնան օտար ափը: Այստեղ աշխարհին ծալքը՝ ծայրն է ծայրագոյն հեռաւորութեան, ուր օտարը կը յայտնուի իր ամբողջ բնութեամբ: Եթէ աշխարհը տուեալ իրերու ամբողջութիւնն է այս մակարդակին վրայ, անոր ծալքը ըլլալ կը նշանակէ ըլլալ ո՛չ միայն քովը, զանցել, այլեւ ըլլալ դուրս անոր օրէնքներէն: Օտարութիւնը ծայրագոյն կացութիւն մըն է, անտանելի, զնոյ մարդը անօրէնի սահմաններուն մէջ:

«Անտուած»․ ետին գոյարանական կացութիւնը օտարութեան վրայ «նետուած» ըլլալն է: Եսը նետուած է․ ասիկա ո՛չ իբրեւ պահպանուող անլարժ վիճակ, հաստատութիւն, այլ լինելութիւն: Եսն է նետուած, նետած ինքզինք աշխարհին ծալքը, երթալով անդին, նետելով ինքզինք ինքնիմէ դուրս, ուրիշներէն անդին եւ անդին բոլոր կապերէն: Նետուած՝ հարազատ հողէն անդին՝ օտարութեան, որ զինք կը դարձնէ ինքզինքին օտարականը: «Մինչդեռ» բերող երկու ժամանակ կամ ժամանակին մէջ երկու ասարեքի ուղղութեամբ ընթացող շարժումներ, երկուդի գնացք, երկրորդ ժամանակ:

«Ղիս» եւ

«Ես» նոյն մարդուն մէջ. ան՝ որ էի, ան՝ որ պիտի ըլլամ: Օտարութիւնը գիւրդին պիտի ըլլար, եթէ ըլլար միայն արտաքին. ան կը բերէ ներքին տարբերութիւն, որուն մէջ չկայ հատում. ինչ որ էի՝ կը տանիմ հետս ըլլալիս մէջ եւ ինչ որ պիտի ըլլամ՝ պիտի վերածուի եղածի: Օտարութիւնը կը բերէ ժամանակի գիտակցութիւն՝ բաժնող եսը ինքն իր մէջ: Օտարութիւնը գիտակցութիւն է:

Երկու շարժումները տեղի կ'ունենան «խորք»ին մէջ, որ կը կադմէ ետին հիմը, հորը. վայրն է ներքորտումի, ինքնագազացումի, որով ան կը դառնայ մարմին:

«Կը զգամ ես

Ղիս» եւ ներքին բաժանումս: Զգայութիւնը կը կապէ ու նաեւ կը բաժնէ կ'անջատէ եսը զիսէն: Կը զգամ զիս

«Ես»-ի մօտ»․ բաժանումը հողէն եսը կը զգայ իբրեւ մօտեցում մը, ներսէն, հողին. կը քննուի հեռաւորութիւնը եւ հողը կու գայ օտար ափին վրայ: Ծալքը կը մօտենայ կեդրոնին, եսը կը մօտենայ

«Մարդկութեան», զոր լքեր էր, ինքն իր մարդկայնութեան, թերեւս մահականացութեան. կ'ըլլայ աւելի մօտ, քան երբ մօտ էր իսկապէս, հողին վրայ. այն ատեն պարզապէս հեռու էր, ըլլալով անդիտակ անոր: Բայց նոյն ատեն

«Աւելի շատ հեռացած» կը զգայ ինքզինք հիմա. մօտեցումը կը վերածուի հեռացումի մը: Մօտեցումը կը բերէ օտարի գիտակցութիւնը: Օտար

ըը ներքինն է: Երբ եսը կը մօտենայ կեդրոնին, կը զգայ ինքզինք այլացած, փոխուած, տարբեր, օտարացած: Եսը տարբեր է գիտէն եւ համաձեւութեամբ՝ անկարելի: Նախկին միութիւնը, եթէ կար, ջնջուած է: Հարազատը, որ է՛ր, ալ չիմ, ալ օտար եմ: Այսպէս կեդրոնը, հեռանալէ ետք, կը դառնայ աննուաճելի: Հարազատը կը դառնայ օտար: Ինչ որ կը մօտեցնէ, կը հեռացնէ:

Բ.

«Գիշերն ամէն կը քալեմ, միմալ, կտրած ամէն կապ,
եւ հեռանալ կ'ուզեմ դեռ եւ աւելի շատ կարծես
կը մօտենամ իմ երկրիս, մարդոց, իմծի, ծովին պէս,
անվերջ կապուած, կտրուած, հզօր, անզօր զիս կը գգամ»:

Երկրորդ փայլը՝ մերադարձող ինքն իր վրայ, կրկնուող, կրկնող ինքզինք, թայց շարունակուող, նորոգող.

«կը քալեմ

միմալ»։ Երբ կապերը կ'իյնան, շրջողը կ'ըլլայ խորհող եւ առանձին, տրուած իր անձին, զոր կարելի չէ դանցել կամ շրջանցել: Բայց անձը չի կրնար մերադառնալ չինին, այլ կրնայ միայն աւելի

«հեռանալ... դեռ»։ Հեռանալ ձգելով ինչ որ կայ ու կար, ան՝ որ էր. ասիկա ոչ իբրեւ փախուստ, այլ մերժում, ժխտումը եղածին, որ կը փորձէ լինելութիւն մը կազմապարել, բռնել անոր տեղը, տեղաւորուել: Անդին, աւելի անդին օտարութեան մէջ, ըլլալ հեռաւորութիւն, անդադար.

«դեռ եւ

աւելի շատ կարծես

կը մօտենամ իմ երկրիս...»։ Հեռանալը մօտենալ է: Կեդրոնախոյսը կը դառնայ կեդրոնաձիգ: Երբ եսը կը հեռանայ աշխարհէն, երկրէն, կը նետուի նորին դէմ, այն ատեն կը զգայ ինքզինք տարբեր: Հեռուն՝ նորն է, անծանօթը, օտարութեան լայնածիր կայսրութիւնը, տարբերը, որուն դէմ կուգայ եւ որուն օտար է: Հեռացումը կ'աւելցնէ օտարութիւնը, կը նետէ եսը օտարի իր գիտակցութեան: Եսը՝ օտարին դէմ օտարական է, ատով կը դառնայ հարազատին, կը մօտենայ երկրին իր եւ

«մարդոց» եւ

«իմծի»։ Հաղորդակցութիւնը կը վերստեղծուի, ներսէն: Կը մօտենամ ես ինծի, քիչ մը աւելի կը դառնամ ես զիս, առանց որ նոյնանամ ու քիչեմ ներքին: արտաքին տարբերութիւնս, որուն մէջ կը տարութեւրդիմ: Մօտեցումը, կենակցութիւն մը կը ստեղծուի, ինչ որ չի բերեր միութիւն: Մօտեցում, հեռացում, տարութեւրդ մերկու բեւեռներու միջեւ

«ծովին պէս»։ Կը մտնէ տարրը, որ բաղդատութեան եզր չէ, այլ օրէնք: Տեղատեղութեան մէջ ծովը կը հեռանայ ափերէն, կ'ամփոփուի, կը պատրաստէ մակընթացութիւն մը եկող: Տեղատեղութիւնը մակընթացութիւն մըն է, եթէ այս գէշն կարդանք իր տեւողական-լինելական ցանցին մէջ: Մովին պէս հեռացումը հողէն կը բերէ երկրորդ ու բարձր մօտեցում մը հողին, երբ ալիքը կու գայ փոսիլ աւազին:

«ծովին պէս

անվերջ»։ Հեռացում, մօտեցում, ո՛չ մէկ դադար, տեղալի կացութեան մը մէջ, որ ըլլար վերջ մը. մօտեցումը եւ հեռացումը զիբար բերող, կը մընան միշտ անաւարտ եւ կայուն համաձեւութեամբ մը հողին հետ կամ եսին տեւական աշխատանք են.

«կապում» միւս հողին, բայց նաեւ կապում օտարութեան, առանց որուն անկարելի է ըլլալ հոս, անկարելի է ըլլալ հոն,

«կապում» հողէն նախկին, կտրուած նոր հողէն հինին պատճառով, «կապում», կտրում» կրկնակի. ստորակէտը երկու բառերուն միջեւ նշան է եւ կապի, եւ բաժանման, հեռացման եւ մօտեցման, կապի կամ բաժանման: Երեք կարելիութիւնները՝ միասին, հաւասար իրարու եւ ամբողջական են:

«հզօր» ծովուն պէս հատուկ նախկին կապանքները, ստեղծող ինքզինք, տիրապետող

«անզօր» նաեւ բոլոր բաժանումներուն, անջատումներուն առջեւ, անցեալին ու ներկային, հատուած երկուքին ինքն իր մէջ եւ այսպէս եղած անկարող, վերանաճելու նախկին միութիւնը.

յաջորդաբար եւ միասին կարգաւ «հզօր», անզօր: Օտարութիւնը անզօրութիւն է մակարդակի մը վրայ, բայց կը դառնայ զօրութիւն երկրորդ մակարդակի մը, երբ կ'ընդունուի, կ'ապրուի մինչեւ ծայրը, կը ստեղծէ: Անզօրութիւնը կը դառնայ զօրութիւն, օտարութիւնը՝ ոչ-օտարութիւն: Օտարութիւնը ջնջել զայն ապրելով, զայն նկատելով պարզ եւ որով հարազատութեան ընդունում մը կը պատրաստուի եւ կ'ըլլայ:

Գ.

«Հոս կարօտներ հանգիստէս շատ աւելի կենսաբեր:

Անսահմանից անցեւ եմ եւ անցեւ եմ ծովուն մեր:

Երկնայա խոնգս է ամած՝ ջուրերում քով յարգահաս:

Կ'իլլեմ կամուխ, ցերեկանդ, կը քալեմ երբ մութ է դեռ»:

«Անսահմանին անցեւ եմ» ծովուն, որուն եզերքէն կը քալէ: Անսահմանը սահմաններէ, սահմանումներէ, սահմանադրումներէ անդին գտնուողն է, հեռու մասնակիէն, չափաւորէն, ծանօթէն: Թերեւս ծայրագոյնը, որուն դիմաց կ'ըլլայ ետը ու կը սահմանուի. անսահմանը շարժում է, կենդանութիւն, անպարփակելի:

«հոս»՝ վայր մը, կայուն, անսահմանի սահմանին, եզերքին վրայ, տնով, բռնուած անսահմանի ձգողութեան մէջ, անկարող փախչելու անոր զրացութենէն: Վայրը, հոս, լինելութեան վայրն է մարդուն, հակադրուող անսահմանին, որ վայր չէ, այլ վայրերու կորուստը: Հոս է նաեւ էջը, ուր կը գրուի այդ լինելութիւնը:

«Ծովուն մեր»՝ ո՞վ ենք «մենք» եթէ ոչ ծովու գրացիներ, ծովէն անդին եզողին ձգողութեան մէջ ապրողներ: Ծովը սահմանն է մեր, մեր չափը, մեր բաժանման գիծը եւ պատուաւորը, որ կը բանայ մեր տարրերութիւնը: Ծովը կը հիմնէ «մեր» տարրերութիւնը դուրսը եւ մեր մէջ:

«կարօտ»՝ հին, նոր նշանն է հեռաւորութեան մը՝ անցեալէն, ապրումն ու հիմա միայն յիշում: Կարօտը կը հիմնուի յիշողութեան վրայ եւ բաղձաւորին: Անիկա կը ժողովէ կարօտողը կարօտեալին, կը տանի զայն անոր մօտ: Մօտեցումով կարօտը ժամանակաւորապէս կը ջնջէ ետ օտար անիւն, կը հեռացնէ զայն այստեղէն: Բայց կարօտիւր եթէ կը ջնջէ նոր հողը, անոր պատկանելիութիւնը, կը շնչէ միւս հողին բացակայութիւնը: Կարօտին մէջ արձանագրուած է երկուութիւնը այստեղին եւ այնտեղին, մօտին եւ հեռուն, ներկային եւ անցեալին: Կարօտը կը բաժնէ մեզ երկուքի. կ'ըլլանք մենք մեզ եւ այն միւսը, որ էինք, որ չենք: Կարօտը կը ստեղծէ «տրամ» մը, ձգում մը տարրերու միջեւ, կտիւ: Կը հակադրուի

«համզդիստիմ» . Եսը հանգիստ է հոս , անքան ատեն , որ հոս է միայն եւ ոչ անդին , կ'ապրի միացած , հաշտուած ափերու աւաղին , ծառերուն եւ հողին , բնութեան , բնականութեան : Հանգիստը , որուն կը ձգտին մարդիկ , կը ջնջէ բոլոր ձգտումները : Անկարելի երանութիւնն է անիկա , անկարելի եւ բազմալի : Հանգիստը կ'աւելցնէ զօրութիւնը , բայց անկէ աւելի

«կենսաբեր» է կարօտը : Եթէ այս հողը ջնջուէր ամբողջովին եւ կարօտը տանէր մարդը նախկին վայրերուն մօտ , կարօտը կը ջնջուէր ինքնին , կը մնար միայն նախկին հողին վերադարձող եւ անոր հետ միացող եսը : Կարօտը կը դադրէր ըլլալէ կենսե տուող , տրամ եղող : Կարօտը կենսաբեր է միայն այն ատեն , երբ չ'իրագործէր ինքզինք իրրեւ բաղձանք , կը մնայ բաղձանք , շարժող հեռաւորութեան մէջ , ծայրագոյնին դէմ : Կարօտը կը պահէ ձգտումի օրէնքը , կը պահէ հաւասարակշռութիւն մը օտար ափին եւ երկրին միջեւ եւ այս հանգոյցին մէջ կը օտեղծէ ապրելու նոր եղանակ մը . ո՛չ հոս , ո՛չ հոն , թէ՛ հոս , թէ՛ հոն : Ահա կարօտը մտածելու եղանակ մը , որ կը հրաժարի աւանդական լոցէն , սրտածմլիկէն : Կարօտը էր բերէ լինելութիւն եւ ուրեմն

«խանդ» .

Չուրբը «յորդախաս» են , կը բերեն հարստութիւն , բերրութիւն , կ'ելլեն չափաւորի հունքէն : Յորդումը նշանն է ծայրագոյն լիութեան , ուրախութեան : Կենսաբեր դուրս կ'ելլէ ինքն իր սահմաններէն , կ'ըլլայ անսահման ձգելով տուեալ ծանօթ կառուանքները : Այս հոստումը խանդ է , որ տարբեր է պարզ խանդավառութենէն , ներշնչումէն . խանդին մէջ կու գայ ծովը ինքը , կը խօսի . դրուած է . «խօսողն ան է , ծովն այդ» քեզ քեզեւրող կենսատուն : խանդը կու գայ ծովէն , կը փոխէ , կ'այլափոխէ եսին տեսողութիւնը . խանդը էական չլիւսմ մը կը բերէ , որով եսը կը ծնի . խանդ՝

«երկնային» ինքզինք եւ երկը , գործը . ասոնք ոչ իրրեւ երկու տարբեր ծնունդներ , այլ մէկ , միասին : Երկնումը եսին՝ օտար հողին վրայ . երկնումը այս իմաստով կը հաշտեցնէ եսը օտարութեան հետ եւ ուրեմն՝ կը ջնջէ մասամբ տարբերութիւնը : Բայց եսին երկնումը տեղի կ'ունենայ երկին մէջ : Երկը կ'երկնէ եսը — կարգաւ երկու ուղղութեամբ — : Երկը խօսող ծովէն , ծովու խօսք , էապէս կենսաբեր է . ծնունդ կու տայ քերթողին , որ չկայ առանց երկին : Երկնում՝ ցաւ , տառապանք , բայց միշտ դրական աշխատանք : Ասոր համար է , որ ան կը հանէ եսը ինքզինքէն , հողէն , մութէն եւ կը նեղէ օտարութեան դէմ : Ամէն երկնում կը սկսի մութէն , գիշերէն , որուն եկող գիտակցութիւնը — մութի գիտակցութիւնը — է թէ՛ լուսաւոր , թէ՛ մութ :

«Կ'ելլիմ կամուխ» . կը ժայթքեմ մութէն եւ քունէն , ուր էի անգիտակից , ուր կ'ապրէի մոռցած ես գիտ . կը մնայի անգիտակ կացութեան : Ելլել , դտնել էլք , բարձրանալ լոյսին , հաւատացեալի մը պէս

«գերմեռանդ» բռնուած երկնումի խանդէն , տենդէն , ձգուած՝ եկող լոյսին մագնիսական մէջ , կանուխ սակայն , կանխելով լոյսի ծագումը ,

«կը քալիմ» . չի նստիր , նոյնիսկ երբ կը գրէ . կը խօսի : Քալիլը , գրեւոր , ելլելը նոյն արարքը կը կազմեն , ուժական ժայթքումը գրութեան լոյսին մէջ : Քալիլը գրել է , ըլլալ , արձանագրել այդ լինելութիւնը աւազին եւ թուղթին վրայ :

«մութ է դեռ» քանի կարելի չէ գիտնալ , թէ ի՞նչ պիտի գայ , ի՞նչ լոյս , ի՞նչ պիտի գրուի եւ ո՞վ պիտի գայ : Մութին մէջէն յանկարծ պիտի ժայթքէ թերեւս քերթուածը , պիտի ըլլանք եթէ գիտնանք :

Գ. ԳԼԿՏԵԱՆ



ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ

ՍԱՄՈՒԷԼ ՊԵՔԷԹ

ԱՆՁԻՆ ՓՆՏՈՏՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔՆԱՐ ՁԵՆՊԱՆԵԱՆ

Պէքէթի առաջին թատերգութեան՝ «Աղատագրամասին» («Eleutherias») մէջ, հիմնական կացութիւնը մակերեսային նմանութիւն մը ունի Քլոփի եւ Համի յարաբերութեանց հետ։ Թատերգութեան երիտասարդ հերոսը կ'ուզէ ձգել իր ընտանիքը եւ խաղի աւարտին կը յաջողի հեռանալ։ «Աւարտախաղ»ին մէջ, ամէն պարագայի, կացութիւնը խորացում է համայնաբանային չափանիշի մը վրայ։ Կոտորած խտացում է եւ անհաշիւօրէն հարստացում՝ աղատագրուած ըլլալով բնութեան եւ բնկերային կացութիւններու պարտադրած արտաքին երևոյթներէն։ Պատգամի արարքը, զոր Պէքէթ Փրուստի մասին իր կատարած ուսումնասիրութեան մէջ կը նկարագրէ իբրեւ արուեստագէտի յատկանիշ, ակնհայտօրէն յաջողած է այստեղ։ Փոխանակ մակերեսային փնտրումը մը ըլլալու՝ «Աւարտախաղ»ի նման թատերգութիւն մը եղած է շեղք մը, որ կը խորանայ լինելութեան ներքին խաւերուն մէջ։ Կանաչաւորակ աչք պատճառով է, որ թատերգութիւնը կը վերլուծուի զանազան մակարդակներու վրայ, իւրաքանչիւր խոր

ուսումնասիրութեան ընթացքին յայտնաբերելով նորութիւն մը։ Ինչ որ առաջին հերթին կը թուի մթին ու թերի ըլլալ, հետզհետէ կը վերածուի նիւթին էութեան իսկ, հսկայական խտացում մը, որ ծնունդն է իրապէ՛ս ստեղծագործ երեւակայութեան մը, բոլորովին հեռու ընթացիկ նմանութիւն մը ըլլալէ։

Այս ենթադրութիւններու զօրութիւնը վեր կը հանուի մասնաւոր յստակութեամբ մը, երբ գէժ յանդիման կը դրոշմէ «Աւարտախաղ»ին ռեժի՛սոր թատերգութեան մը եւ կը ջանանք զայն վերլուծել իբրեւ գիտակցուած եւ չգիտակցուած ինքնակենսագրութեան մը մէկ փորձը։ Լիոն Ապէլ, իր մէկ ուսումնասիրութեան մէջ կը պաշտպանէ այն թեզը, ըստ որում՝ Համի եւ Փոզզոյի տիպարներուն մէջ Պէքէթ պատկերացուցած է իր դրական հերոսը՝ ձէյմս Ճոյսը, մինչ Լաբին եւ Քլոփը կը ներկայացնեն զինք՝ Պէքէթը։ Հետեւաբար, «Աւարտախաղ»ը կը վերածուի այլաբանական թատերգութեան մը, ուր կը ներկայացուին իշխող եւ գրեթէ կոյր Ճոյսը եւ զինք պաշտոյ աշակերտը, որ ինքզինք ճգնուած կը զգայ՝ իր

տիրոջ յորդող զբաղան ազգեցութենէն։ Երեւութապէս նմանողութիւնները յստակ են։ Համը կը ներկայացուի իբրեւ անվերջանալի պատմութեան մը վրայ աշխատողը, Լաքի կը ներկայացնէ մասնուժաներու շարք մը, որ ըստ Լիոն Ապէլի կըրնայ ըլլալ ձոյսի ոճին երգիծական յորինումը։ Այսուհանդերձ, աւելի մօտէն կատարուած ուսումնասիրութեամբ մը յիշեալ տեսութիւնը վստահաբար անգործանական կը դառնայ, ո՛չ այն պատճառով, որ իրականութեան որոշ նկիւններ կը պակսին այդտեղ (Իւրաքանչիւր զորոք բնականորէն կ'օգտուի իր կենսաբիոփորձառութենէն), բայց որովհետեւ Լիոն Ապէլի տեսութիւնը հետեւ է ամբողջական լոյս մը սփռելէ՝ «Աւարտախաղ»-ին ամբողջութեան վրայ, ապա ուրեմն անոր ըրած վերլուծումը կը մնայ նախնական մակարդակի մը վրայ։ Եթէ «Աւարտախաղ»-ը ուրիշ բան չէ, այլ երկու որոշ անձերու միջեւ դրուած ունեցող զբաղան եւ մարդկային փոխյարաբերութիւններ, այդ պարագային հնարաւոր չէ, որ ունենայ այն ցնցող ազգեցութիւնը, որ կ'ընկերւորէն ունի նոյնիսկ այն հանդիսատեսներուն վրայ, որոնք բոլորովին անտեղեակ են նման պարագայի մը։ Տակաւին, կասկածէ վեր է, որ «Աւարտախաղ»-ը ունի խոր եւ ուղղակի ազգեցութիւն մը, որ ծնունդն է անոր մեծ թիւով մարդոց մասնողութեան մէջ թել մը ստեղծելու կարողութեան։ Գրականութեան վարպետի մը եւ անոր աշակերտին միջեւ գոյութիւն ունեցող փոխյարաբերութիւնը դժուար թէ կարենայ նրման հակազդեցութեան մը առիթ տալ, այդ պարագային շատ քիչ թիւով հանդիսատեսներ միայն պիտի կարենային իրենք զիրենք տեսնել թատերգութեան ընթացքին մէջ։ Պարզ է, որ թատերգութիւն մը, որ կը ներկայացնէ ձոյսի եւ Պէթէթի միջեւ տեղի ունեցած հարց մը, պիտի հետաքրքրէ միայն այն հանդիսատեսները, որոնց համար ինքնակենսադրական զրականութիւնը արժէք մը կը ներկայացնէ։ Բայց ճիշդ ասիկա է, որ չի արուիք «Աւարտախաղ»-ին միջոցաւ։

Այն տպաւորութիւնը, որ կը ստեղծուի խնդրոյ առարկայ այդ թատերգութեան ընդմէջէն, կու գայ աւելի համալսարհային շարաններէ։ Անգամ մը, որ կը յստականայ այդ պարագան, այնուհետեւ որոշ է այլեւս, թէ իր երեւութական դատումէն դուրս թատերգութիւնը կը ներկայացնէ աւելի քան բազմաթիւ վերլուծումներու հարուստ ախաղաղաւ մը։ Իրականութեան մէջ, զուգահեռները այնքան ալ մօտիկ չեն իրարու։ «Սպասելով Կոռոյի» թատերգութեան մէջ, որին ահ, Լաքիի մենախօսութիւնը որեւէ բանի կարելի է վերագրել, բացի ձոյսի ոճին երգիծական շնչէն։ Ատիկա պարագայէս նմանողութիւնն է փիլիսոփայական ուսմէներէն եւ զիտական կրկնախօսութեան — ճիշդ հակառակը այն ոճին, զոր Պէթէթ եւ ձոյս միւս փափաքեցան նուաճել իրենց զբաղանութեան մէջ։ Միւս կողմէ՝ Փոզո, որ կը կարծուի ներկայացնել ձոյսը, բոլորովին անարուեստ է իր առաջին անձնաւորութեան մէջ, եւ միայն կուրծիկէ ետք է, որ կ'իյնայ մեղադրանքի զգայնութեան մը մէջ։ Եւ եթէ Փոզոն ձոյսը ինքն է, այդ պարագային ինչ իմաստ պիտի ունենայ Լաքիի համրութիւնը, որ կը զուգահեռուի ճիշդ ու ճիշդ Փոզոյի կուրծած ժամուն։ Վէպը, զոր Համ կը յորինէ «Աւարտախաղ»-ին մէջ, կը յատկանշուի զիտական իր ճշգրտութեամբ եւ յստակ է, որ ասիկա արուեստի գործ մը չէ բնաւ, այլ պարագայէս թաքուն մէկ արտայայտութիւնը, յանցանքի այն զգացումին, զոր Համ ունեցած է խորհրդաւոր աղէտին ատեն՝ իր դրացիներուն օդնութեան հասած չորլայուն իրրեւ հետեւանք։ Միւս կողմէ՝ Քլով կը թուի բոլորովին հետաքրքրուած չորլայ Համի «Գործ յառաջիմուքեան մէջ»-ով, որով Համ ստիպուած է յաճախ խնդրել իր տիեզի հօրմէն, որ մօտիկ ընէ դիմք ուրիշ կացութիւն մը նաեւ՝ որ բոլորովին հետեւ է ձոյսի եւ Պէթէթի ունեցած յարաբերութիւններուն նման ըլլալէ։

Փորձառութիւնները, որ կը յայտնաբերուին Պէթէթի թատերգութիւններու

բէն իրենց մէջ կը կրեն զուտ ինքնակենսապրական բնոյթէն աւելի բան մը: Անոնք կ'ոչեկուեն ժամանակաւորին եւ անհետացողին փորձառութիւնը. իր անձնական ապրումը այն ողբերգական զբաւառութեան, որ կը ցցուի ամէն անգամ, երբ մարդ կ'ուզէ իր անձին վերագրուել չլալոյդելով յաղթահարել ժամանակին պատճառած աւերը, տակաւին կը խօսին մարդկային գոյութիւններու միջեւ յարաբերութիւններու դժուարութեանց մասին, իրականութեան փնտրութեան նուիրումն այն անվերջանալի հարցումին մասին, որ կ'ուզողուի ամէնուրեք այս աշխարհին մէջ, ուր ամէն բան անորոշ է, եւ թէ՛ երազն ու արթնութիւնը իրարմէ բաժնող բարակ գիծը յաւիտենական թեքումի մէջ է, նաեւ՝ սիրոյ փոխարարութեան եւ բարեկամութեան պատճառած ինքնախաբեկանքին եւ այլ բաներու մասին: «Աւարտախաղ» զօրին մէջ մենք նմանապէս դժ մասնորոշման կը հանունք մեռած ըլլալու զգալնութեան, կապարային օտարութեան ու յուսալքութեան, որոնց փորձառութիւնը կը յայտնաբերուի խորունկ վիճառութեան պարագային. նման կացութեան մը զոհ անձին համար զուրտի աշխարհը կը թուի մեռած ըլլալ, բայց անոր ներսիդին, մըտածումին մէջ անընդհատ վեճ մը գոյութիւն ունի իր անձը կազմող զանազան մասերուն միջեւ, որոնք վերածուած են ինքնուրոյն գոյակցութիւններու:

Ասիկա չի նշանակեր, որ Պէթէթ գիտական տարրալուծումով մը կը նկարագրէ Հոգեբանական կացութիւններ: Անոր ստեղծագործ բնագործ կը պնդէ փորձառութիւններու նիւթեր եւ կը յայտնարել այն աստիճանաւորումները, ուր մարդիկ իրենց անձին ամենախորունկ խուրդուն մէջ կը կրեն յիշեալ վիճառութեանց եւ յուսալքումին հունտերը: Սէն Գուէնթինի բանաստեղծները ապրումով դիմաւորեցին «Ապաւնելով կոտորի» թատերականութեան բեմագրութիւնը, որովհետեւ անոնք կը դիմագրաւէին ժամանակէն, սպասումի, յոյսի եւ յուսախաբուութեան մէջ ունեցած իրենց անձնական

փորձառութիւնը. անո՛ր համար նաեւ, որ անոնք ճանչցան իսկութիւնը իրենց անձնական փոխարարութեան մէջ, որուն զուտ հերթն էին Փողոս եւ Լաքի եւ այն աստիճանութիւն-սիրոյ մէջ, որ կը կապէր Վլադիմիրն ու Իսթրակոնը: Ասիկա նաեւ բանալին է Պէթէթի թատերգութիւններուն զտած լայն յաղորդութեան. դժ մասնորոշման դրուիլ ամենախորունկ վախերու եւ անձնութիւններու թանձրացեալ պատկերին, որ միայն մշուշոտ կերպով կը զգացուի, երբ մարդ կ'սպասեալակից կացութեան մը մէջ է, նման այն երեւոյթին, երբ հոգեբանական վերլուծումներու եւ բուժումի ընթացքին հիւանդը կը ստիպուի դիմադրաւել իր մտքի անդիտակիցին մէջ գոյութիւն ունեցող նիւթերը, որոնց ցարդ անտեղեակ կը մնար: Ասիկա հուսանարար նաեւ ազատագրումն է, որ պիտի պատահի այն աստիճան, երբ Քյոյով յաղողի մերթադատուիլ Համէն եւ աշխարհ չուրա զալ, որ այնքան մեռած չէ, որքան կը թուի ըլլալ, երբ ան Համի սահմանափակ աշխարհին մէջ կը գտնուէր: Ասիկա, իրականութեան մէջ, կը նշուի նաեւ այն տարրինակ պատահարով, երբ պզտիկ տղան կը նշմարուի Քյոյի կողմէ «Աւարտախաղ» վերջին տեսարանին: Այս փոքր տղան, ուրեմն, խորհրդանշէ կեանքին իրականութեան անվատուած այդ զոց լրջանակին մէջ:

Շահեկան է անդրադառնալ, որ յիշեալ թատերգութեան մէջ տեղ զտած այդ պատմութեան աւելի բացայայտուէն անդրադարձած է Պէթէթ իր աւելի ուշ գրած անգլերէն բնագործին մէջ: Կը թուի, թէ ան զգացած է, որ արուեստագէտի գործը նման գրականութեան մը մէջ կ'ստով լոյս մը սփռել պէտք է ըլլալ ըստածին վրայ աւելի՛ քան խնդրուած խորհուրդներու գործածութիւնը: Յամենայն դէպս, Փրանսերէն եւ անգլերէն բնագործներուն միջեւ բաղադրական մը լուսսարանող է իր կարգին:

Քլոյով. (Աւարտելով) Փոքր տղու մը կը նմանի:

ՀԱՄ — (Հեզնական) Պղտիկ... տը—
զայ մը:

ՔԼՈՎ — Պղտի երթամ եւ տեսնեմ:
(Ան վար կ'ըջնէ, մէկ կողմ կը ձգէ հե-
ռադիոսկը, կ'ուղղուի դրամ կողմը,
կը վերադառնայ) Հետս պիտի տանիմ. ե-
ռանկիւն առադատու (կը փնտռէ առա-
գաստը, կը գտնէ եւ կ'ածաղարէ դրամ
կողմը):

ՀԱՄ — Ո՛րչ:

(Քլով կ'անց կ'առնէ):

ՔԼՈՎ — Ո՛րչ: Ուժական նախատեղ-
ծող մը:

ՀԱՄ — Եթէ ան գոյութիւն ունի պի-
տի մեռնի Հոն կամ պիտի գայ Հոս: Եւ
եթէ ոչ...

(Լռութիւն):

Առաջին՝ Ֆրանսերէն բնագրին մէջ,
Համ փոքր աղուն Հանդէպ ջոյց կու տայ
աւելի մեծ հետաքրքրութիւն. անոր կեց-
ւածքը պարզ հիւրատիրութենէն աւելի
անդին կ'անցնի՝ վերածուելով համա-
կերպութեան:

ՔԼՈՎ — Մէկը կայ այդտեղ, մէկը:

ՀԱՄ — Լաւ, դեռ եւ բնաջնջ գայն:
(Քլով վար կու գայ իր կայնած արտիմ
վրայն) Մէկը... (Դադացող ձայնով)
Կատարէ՛ պարտականութիւնդ: (Քլով կը
խաւթէ դէպի դուռ) Ո՛րչ, ո՛րչ, մի յոգնիր:
(Քլով կ'անց կ'առնէ) Ո՛րքան է հեռաւո-
րութիւնը:

(Քլով դարձեալ կը քարծրանայ տ-
քտիմ վրայ եւ կը դիտէ հեռադիտա-
կով):

ՔԼՈՎ — Եոթանասուն... չորս մեթր:

ՀԱՄ — Կը մօտենա՞յ, կը նահանջն:

ՔԼՈՎ — (կը շարունակէ դիտել) Կա-
յուն է:

ՀԱՄ — Սեփ:

ՔԼՈՎ — Ի՞նչ կարեւորութիւն ունի:
(կը քանայ պատուեանը, կը հակի դուռ:
Լռութիւն: կը շտկուի, վար կ'առնէ հե-
ռադիոսկը, կը դառնայ Համին, սարսա-
փած) Փոքր աղու մը կը նմանի:

ՀԱՄ — Ինչո՞վ գրադած է:

ՔԼՈՎ — Ի՞նչ:

ՀԱՄ — (նստորէն) Ի՞նչ կ'ընէ:

ՔԼՈՎ — (նայնպէս) Ձեռ գիտեր ի՞նչ
կ'ընէ: Ի՞նչ կ'ընեն բոլոր պզտիկ տղաքը:

(կը նայի հեռադիտակով: Լռու-
թիւն: վար կ'առնէ գայն, կը դառնայ
Համին):

Կը թուի, թէ ան նստած է գետին,
կոնակը տուած բանի մը:

ՀԱՄ — Վեր առնուած քարին: (Լը-
ռութիւն): Տեսողութիւնդ հետզհետէ ա-
ւելի կը պայծառանայ: (Լռութիւն): Ան-
կասկած, որ ան տունին կը նայի Մով-
սէսին մեռնող աչքերով:

ՔԼՈՎ — Ո՛րչ:

ՀԱՄ — Ինչի՞ն կը նայի ան:

ՔԼՈՎ — (նստորէն) Ձեռ գիտեր, թէ
ինչին կը նայի: (կը վերցնէ հեռադիտա-
կը: Լռութիւն: վար կ'առնէ գայն. կը
դառնայ Համին): Իր պորտին, կամ այդ-
տեղ տեղ մը: (Լռութիւն): Ինչո՞ւ այս
խաչածեւ հարցաքննութիւնը:

ՀԱՄ — Թերեւս մեռած է:

Այս հատուածէն ետք, Ֆրանսերէն
եւ անգլերէն բնագրերը դարձեալ նոյն
ձեւով կ'ընթանան: Քլով կ'ուզէ հասնիլ
նորեկին՝ իր առաջատարով, Համ կ'արգի-
լէ եւ պզտիկ տատամտում մը եւ կաս-
կածներէ ետք, թէ արդեօք Քլով ճը-
մարտութիւնը կը խօսի, կ'անդրադառ-
նայ, թէ դարձակէտը մօտ է. «Ալ
վերջացաւ, Քլով. հասած եմք տարտին:
Այլեւս պիտի չուրիմ քեզի»:

Աւելի երկար եւ աւելի մանրամաս-
նօրէն ուսումնասիրուած բնագիր մը
յատակօրէն կը մատնանչէ նաեւ կրօնական
կամ դրեթէ կրօնական խորհրդանիշը,
որ իրեն հետ կը բերէ այդ փոքր տղան.
Մովսէսին եւ քարծրացուած քարին մատ-
նանչումը կը թուի, թէ դրուած է՝ շեշ-
տելու համար այն պարագան, ըստ որում՝
մեծ կործանումէն ետք գոյութիւն ստա-
ցող առաջին մարդ էակը նման չէր այն
Մովսէսին, որ մեռած աչքերը թէեւ յա-
ռած էր խոստացուած քաղաքին, բայց
կը նմանէր Քրիստոսին, որ իր յարու-
թենէն ետք՝ նոր կ'աւելար մը կը ծնէր:
Աւելին. ան կը նմանէր Պուտային.
պզտիկ տղան աչքերը յառած էր իր պո-
ր-

տին: Եւ անոր երեւումը կը համոզէ Համբ, որ բաժանումի ժամը եւ աւարտախաղին վերջին հանգրուանը հնչած է:

Փոքր ուղուն երեւումը, որ անկապած դադարեցնուցէր տեսարան մըն է թատերգութեան մէջ, կրնայ նաեւ խորհրդանշել իրականութիւն մը, որ աւերի վեր է, քան պատրանքներու եւ անհետացումի աշխարհը: Փոքր տղան հետաքրքրուած է իր անձնական պորտով եւ իր նայուածքը ամփոփած է այդտեղ. այսինքն՝ ան կը նայի ներկայիս ունեւորութեան, ոչնչութեան, որուն մասին Տէմոքրիդուս Ապրետայթ կ'ըսէ Պէթէթի մէկ շատ սիրելի նախադասութեան մէջ. «Ոչինչ աւելի իրական է, քան ոչնչութիւնը»:

Մըրֆին, որ խաղացած էր ճատարակի խաղ մը, իր մահէն վայրկեան մը առաջ տեղի ունեցող լուսաւորումի բուսկին փորձառութիւնը կ'ունենայ տարօրինակ զգայնութեան մը. «...Եւ Մըրֆին սկսաւ տեսնել ոչինչը... այն անգամութիւնը, որ այնքան հագուածիւս պարագայ մըն է մարդու ծնունդէն ետք... ոչ տեսնելու. այլ քնկալելու ամկարգութեան հետեւումով: Անոր միւս զգայնութեանն ալ իրենց գիրենց գտան խաղադուրեան մէջ, չակկալուած հաճոյք մը: Ո՛չ իրենց տկարացումին այն բութ խաղադուրեանը, այլ այն մէկը, որ կը պատահի, երբ բաները կը դադրին գոյութիւն ունենալէ եւ կամ պարզապէս կը գոմարլին Ոչինչին վրայ, որմէ աւելի ոչինչ իրական է Ապրետայթի մօտ: Փամանակը կանգ չ'առնիր, ատիկա քիչ մը չափազանցութիւն պիտի ըլլար, բայց կլար անհանգիստ եւ լուսութիւնը կանգ կ'առնեն, ու Մըրֆին իր գլուխը դրած գիտութեան մէջ (այսինքն՝ ճատարակին) կը շարունակէ ներծծել իր դադացող ծագիլն ամէն մէկ երեսկէնով, ամենապահով, Մէկ-եւ-Միակը, զոր ըստ համաձայնութեան կոչած ենք Ոչինչ»:

Ուրեմն, Համ, որ ինքզինք կ'զգայացած է ամբողջ աշխարհէն եւ սպաննած է ողջ մարդկութիւնը՝ կառնած մընաւով իր նիւթական ինչքին (Համը, որ

կուր է, զգայնատ ու ետակերտն, կը մեռնի՝) երբ Քլոզ, իր տրամաբանութիւն խորհրդանշող մասով կ'անդրադառնայ նիւթական աշխարհի պատրանքներուն եւ ինքզինք կ'ազատագրէ ժամանակի թաւալքէն, որ ճիշդ ու ճիշդ կը գտնուի քամնապահով Մէկ-եւ-Միակին մէջ, զոր ըստ համաձայնութեան կոչած ենք Ոչինչ»:

Անհրաժեշտութիւն չենք տեսներ աւելի եւս ծանրանալու այս բաղդատութիւններուն վրայ. նախապատուութիւն տալ անոնցմէ որեւէ մէկուն՝ պիտի նշանակէ միաժամանակ եւ րնդունիլ միւսը, կամ երբորդ կարելիութեան իրականութիւնը: Յամենայնդէպս, «Արար»՝ անանց եւ րառերուն թատերգութիւնը իր մէջ խաղացած կը ներկայացնէ այն տեսակէտը, որ Պէթէթ ունի նիւթական պէտքերուն եւ անհանգստութեան ու ամբողջական զգացումներու փոխարարներութեանց մասին: Սամուէլ Պէթէթի իրենալ թատերգութիւնը առաջին տեղում բեմ հանուած է «Աւարտախաղի» ներկայացման օրը եւ բեմադրուած է միաժամանակ: Թատերգութեան տեսարանը պարզապէս անապատ մըն է, որ մարդ մը «դէպի ետեւ կը շարժուի»: Խորհրդաւոր սուրճանիւր անոր ուղարկութիւնը կը կեդրոնացնեն զանազան ուղղութիւններու վրայ: Եւրոպէ մը ցանկալի առարկաներ, որոնց մէջ ուղարկութիւն կը գրուէ լիւ մը ջուրը, կը ճօճին մարդուն դիմաց: Ան կը փորձէ հասնիլ լիւին, որ շատ բարձր կախուած է: Քանի մը կտոր տախտակներ, որոնք պարզապէս պիտի դիւրացրեն ջուրին հասնելու անոր փորձը, իրենց կը բերուն ոգին մէջէն: Բայց ի՞նչ ձեւով ալ ան իրարու վրայ չարէ այդ տախտակները՝ չի կրնար հասնիլ լիւին. անիկա կը մնայ իր հասողութեան սահմանէն անմիջապէս դուրս: Թատերգութեան աւարտին հերոսը կը մխրճուի ամբողջական անհարգութեան մէջ: Սուրճը կը շարունակուի, բայց անիկա չի հետապնդեր ձայները: Զուրին լիւը կը շարժի եւ կը զարնուի իր դէմքին, բայց ան ոչ մէկ շարժում կ'ընէ: Նոյնիսկ այն արժա-

ւենին, որուն շուքին նստած է ինք, տե-
րեւթաթի կ'ըլլայ եւ կը վերածուի մանր
շիւղերու, որոնք կը քշուին հովէն: Ան կը
մնայ անշարժ՝ շարունակելով գիտել իր
ձեռքերը:

Այստեղ դարձեալ մենք կը հանդի-
պինք կեանքին բեմին վրայ գործող մար-
դուն, որ առաջին առթիւ արժէք կու տայ
շարք մը մղումներու, ուշադրութիւն կը
դարձնէ առարկաներու իտարկներին, զա-
նազան կողմերէ՝ եկող սուղոցներուն,
բայց կեանքի դասը սորվելէն ետք՝ նոյն
այդ անձը կը մերժէ այն բոլոր շօշափե-
լի պէտքերը, որոնք կը շարժին իր աշ-
քերուն դիմաց: Նպատակներ հետապնդե-
ղելու փորձը, որ անխուսափելի է
մահուան գործունէութեան մէջ եւ մեզ
կը փոխէ մեր հետապնդած նպատակին
հասնելու արարքին մէջ, — կրնայ լու-
ծում մը գտնել միայն այն ճանաչումի
պարագային, ըստ որում՝ ոչնչութիւնը
միակ իրականութիւնն է: Սուղոցներ, ո-
րոնք կը լսուէին թեւերու բախումէն՝ կը
նմանին այն սուղոցներուն, զորս Համ
կ'արձակէր Հրաւիրելու Համար Քլովը իր
պարտաւորութիւններուն՝ լրացնելու իր
նիւթական պէտքերը: Իսկ վերջին ան-
գործ կացութիւնը, որուն մէջ կ'իյնայ
«Արար» առանց եւ քառերուն» թատեր-
դու թեան հերոսը, կը վերակոչէ «Աւար-
տախաղ» թատերգութեան մէջ փոքրիկ
տղուն պարզած պատկերը:

Փոքրոյի եւ Լաքիի գործունէութիւ-
նը տեղէ տեղ — միշտ քշողը եւ քշուե-
ղը, — սպասումը խթանողն եւ վշա-
տիմբի, որոնց ուշադրութիւնը կեղեր-
նացած է եկող բանի մը խոստումին վը-
րայ, պաշտպանողական կեցուածքը Հա-
մին, որ ինքզինքին Համար չինած է աշ-
խարհէն հեռու պատուարան մը՝ պաշտ-
պանելու Համար իր ստացուածքը, այս
բոլորը պարզապէս զանազան երեսներն
են այն ամուլ կացութիւններուն, որոնք
մարդուն կը պարտադրեն տարուիլ նիւ-
թական պէտքերու գոհացումով եւ խա-
կանքին հետապնդած նպատակակէտնե-
րով: Որեւէ շարժում անկարգութիւն է:
Ինչպէս Քլով կ'ըսէ. «Եւ սիրեմ կարգն

ու կանոնը: Ատիկա իմ երազս է: Աշ-
խարհ մը, ուր ամէն ոք հանդարտ եւ
լուռ պիտի ըլլայ եւ ամէն բան դրուած
պիտի ըլլայ իր վերջին տեղը, վերջին
ամզամ գալն ծածկող փոշին տակ»:

«Ապաստելով Կոտային» եւ «Աւարտա-
խաղ» թատերգութիւնները, զորս Պէքէթ
գրած է Փրանսերէնով՝ արամաթիք
պատկերացումն են մարդկային կացու-
թեան: Այդ երկու թատերգութիւններուն
մէջ կը պակսին դասական հերոսներն ու
նիւթը, որովհետեւ անոնք իրենց նիւթն
ու թեման կը զետեղեն այնպիսի մակար-
դակի մը վրայ, ուր ո'չ հերոսներ եւ ո'չ
այ նիւթ գոյութիւն ունին: Տիպարներու
պարագային, ենթադրաբար կ'ընդուն-
ւի, որ մարդկային բնութիւնը եւ անհա-
տակաւութեան ու անձին նկարագիրը
բազմակողմանի են, իրաւ են եւ իմաս-
տալից. նիւթը գոյութիւն կրնայ ունենալ
այն հիման վրայ միայն, որ գէպքերը
ժամանակի մը մէջ շահեկան են: Վերու
յիշուածները միասնաբար կը կազմեն այն
ենթադրութիւնները, որոնք իբրեւ Հա-
ցումներ կը ծնին յիշեալ երկու թատեր-
գութիւններէն: Համն ու Քլովը, Փոքրոյն
ու Լաքին, Վլատիմիրն ու Էսթրադոնը,
Նէկն ու Նէլը տիպարներ չեն, այլ մարմ-
նացում մարդկային հիմնական համ-
գումներու, աւելի քան նման այն անձնա-
կանացուած լսելին ու շարին, որոնք գո-
յութիւն ունին Միջնադարու խորհրդաւոր
թատերախաղերուն մէջ կամ կը յիշեցնեն
նպանական ծէսեր: Այն բոլորը, որ տեղի
կ'ունենան թատերգութիւններուն մէջ՝
դէպքեր չեն, այլ կացութիւններ, որոնք
յաւիտեան պիտի կրկնեն զիրար: Այդ
պատճառով է, որ «Ապաստելով Կոտային»
թատերգութեան առաջին արարին խո-
քերը, տարբեր շարքով կը կրկնուին նոյն
թատերգութեան երկրորդ արարին մէջ:
Այդ պատճառով է, որ «Աւարտախաղ»
թատերգութեան մէջ մենք չենք տեսներ
Քլովի իրապէս Համին քովէն հեռանալը,
այլ այդ երկուքը կը ձգենք տեսակ մը
ստուած դիքերու մէջ: Երկու թատեր-
գութիւններն ալ հիմնուած են օրինակովը
այն երգին, զոր Վլատիմիր կ'երգէ

«Ապատելով Կոտայիկ» թատերգութեան հրկրորդ արարին սկիզբը: Երգը շան մը մասին է, որ հաց կը գողնայ խոհանոցէն եւ խոհարարը զայն կը ուզանէ, բնկեր շուները կը թաղեն զայն եւ անոր գերեզմանաբարին վրայ փորագրել կու տան շան պատմութիւնը, որ հաց մը կը գողնայ խոհանոցէն եւ խոհարարը կը սպաննէ զայն — եւ այսպէս շարունակաբար, անվերջ: «Աւարտախաղ» եւ «Ապատելով Կոտայիկ» թատերգութիւններուն մէջ Պէթէթ աշխատած է խորանայ աշխատանք, որ այլեւս զոյուրիւն շունենան անհատ եւ դէպք հասկացողութիւնները, այլ միայն տեղ տրուի Հիմնական կացութիւններու:

Իր բնիկ եւ ծայնասփիւռի Համար գրած անգլերէն թատերգութիւններուն մէջ՝ Պէթէթ աշխատած է խորացած է, որ այդ տիպի թատերախաղերուն մէջ գոյութիւն ունին եւ տիպարներ, եւ առանձնացած զէպերու: Զիջեալ, որոնք դարձեալ կը ցոյցանեն իր կեանքի ըմբռնողութիւնը: Այսուհանդերձ, վերադրուած են առանձին անհատներու եւ անոնց կեանքին: «Բլիւֆի վերջին երկրը» թատերգութիւնը կը ներկայացնէ ժամանակի անվերջ սահանքը եւ անձին անկայունութիւնը: «Ամէն քամ, որ կ'իյնայ» եւ «Պախ» թատերախաղերը իրեն նիւթ ունին սպառումը, յանցանքը եւ մէկու մը տածած յոյսերուն ամուլութիւնը:

«Ամէն քամ, որ կ'իյնայ» (խորագիրը առնուած է 145րդ Սաղմոսէն — «Հաստատէ Տէր զամենայն գայթակղեալս, եւ կանգնէ զամենայն զլորեալս») թատերգութիւնը կը ներկայացնէ պատա իրլանդա տունի մը, Մէտի Բուշի, շատ դէր, շատ հիւանդ եւ դժուարութեամբ շարժող կին մը, որ կ'երթալ դէպի շոգեկառքի կայարան՝ հանդիպելու Համար իր կոյր առնունքին, Տէ Բուշիի, որ պիտի հասնի ժամը 12,30ի շոգեկառքով: Կնոջ յառաջխաղացքը շատ դանդաղ է, կարծես մղձաւանջի մը մէջ ըլլար ան: Կը հանդիպի կարգ մը անձերու, որոնց հետ կ'ուզէ կապ մը հաստատել եւ կը ձախողի բոլորին ալ պարագային: «Ոստր եմ անոնց

